



# Արսեն Նիկողոսյան

## ԱՅԼԸՆՏՐԱՆՔԱՅԻՆ ԽԱՓԱՆՄԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԿԻՐԱՌՄԱՆ ԳՈՐԾՆԱԿԱՆ ՀՄՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ



Funded  
by the European Union  
and the Council of Europe



COUNCIL OF EUROPE



CONSEIL DE L'EUROPE

Implemented  
by the Council of Europe

Funded  
by the European Union  
and the Council of Europe



COUNCIL OF EUROPE



Implemented  
by the Council of Europe

## ԱՐՄԵՆ ՆԻԿՈՂՈՍՅԱՆ

# ԱՅԼԸՆՏՐԱՆՔԱՅԻՆ ԽԱՓԱՆՄԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԿԻՐԱՌՄԱՆ ԳՈՐԾՆԱԿԱՆ ՀՄՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

---



ԵՐԵՎԱՆ 2020

Ձեռնարկի հեղինակ՝  
*ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի դատավոր,  
ի.գ.թ. դոցենտ*

### **Արսեն Սերժիկի Նիկողոսյան**

Ձեռնարկի պատրաստմանն աջակցել է՝  
*Եվրոպայի խորհրդի միջազգային փորձագետ*

### **Լիլիան Ապոստոլը**

Սույն ձեռնարկը պատրաստվել է «Աջակցություն քրեական արդարադատության բարեփոխումներին և եվրոպական չափանիշների կիրառման ներդաշնակեցումը Հայաստանում» ծրագրի շրջանակներում, որը ֆինանսավորվում է Եվրոպական միության և Եվրոպայի խորհրդի «Գործընկերություն հանուն լավ կառավարման» կառուցակարգի կողմից: Սույն ձեռնարկում ներկայացված տեսակետները որևէ կերպ չեն արտահայտում Եվրոպական միության և Եվրոպայի խորհրդի պաշտոնական տեսակետները:

© Եվրոպայի խորհուրդ, 2020

© Արդարադատության ակադեմիա, 2020

*[Դատարարները] միայն ամբաստանողի կամ միայն դատախազի խոսքերը չլինի, թե լսեն, և եթե լսեն, դրանից ուսուցում առնեն, այլև մեկ վճիռ կայացնեն միայն այն ժամանակ, երբ միասին քննեն հարցը կատարելապես<sup>1</sup>:*

ՄԽԻԹԱՐ ԳՈՇ

## ՄՈԴՈՒԼ 1.

### ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

- Դաս 1. Այլընտրանքային խափանման միջոցներ (ընդհանուր բնութագիրը)**
- Դաս 2. Այլընտրանքային խափանման միջոցների կիրառման ներպետական իրավական հիմքերը և միջազգային ստանդարտները**

### Ներածություն

Քրեական դատավարությունում խափանման միջոցառումները, ինչպես ազատությունից զրկելու հետ կապված, այնպես էլ պարզապես որոշակի սահմանափակումների, երբեք չպետք է համարվեն պատիժներ, և, հետևաբար, պետք է տարբերվեն քրեական մեղադրանքով դատապարտումից: Մեղադրյալը, որի նկատմամբ կիրառվել է նման միջոց, դեռ օգտվում է անմեղության կանխավարկածից: Նա, ըստ էության, այսպես ասած

<sup>1</sup> Տե՛ս Դատաստանագիրք, Մխիթար Գոշ, Փոխադրությունը և համակարգչային ձևավորումը՝ Մաքսիմ Անդրանիկի Ոսկանյանի, Երևան, 2001, էջ. 17-18, նաև էջ 23, հասանելի <file:///C:/Users/A.N/Downloads/e41458b49279515bf296b8b24af62fed.pdf> հասցեով, 09.01.2020թ., ժամը 00:41:

«մնում է ողջամիտ կասկածի տակ», բայց այն վերջնական դատապարտում չէ, այլ միտված է հետևյալ նպատակների իրականացմանը՝ մեղադրյալի վարույթն իրականացնող մարմիններ կայանալու, արդարադատության իրականացմանը չխոչընդոտելու, նոր հանցանքներ, այդ թվում՝ հասարակական անկարգություններ չկատարելու, ինչպես նաև պատժի կատարումն ապահովելու համար:

Կալանավորումն ամենախիստ խափանման միջոցն է, որն իր մեջ պարունակում է լուրջ հետևանքներ կալանավորված անձի նկատմամբ՝ կապված նրա իրավունքների ու ազատությունների, սոցիալական կարգավիճակի, ընտանեկան կապերի, հեղինակության և այլնի հետ: Մի շարք միջազգային պայմանագրեր, ներառյալ ՄԱԿ-ի «Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին» միջազգային դաշնագրի 9-րդ հոդվածը, «Մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության մասին» Եվրոպական կոնվենցիայի 5-րդ հոդվածը հայտարարել են ազատության և անձնական անձեռնմխելիության իրավունքի մասին, սակայն հնարավոր են համարել որոշակի սահմանափակումները կալանքի տեսքով քրեական դատավարության ընթացքում՝ քրեական հետապնդման ենթատեքստում:

Այնուամենայնիվ, դրա կիրառումը և նախաքննության, և դատաքննության փուլերում մնում է արդիական և մտահոգությունների տեղիք տվող ինչպես Հայաստանում, այնպես էլ Եվրոպայի խորհրդի շատ այլ անդամ պետություններում: Համաձայն ԱՄՆ Պետական դեպարտամենտի կողմից 2018թ.-ին հրապարակված՝ Մարդու իրավունքների զեկույցի՝ տևական նախնական կալանքը դեռ քրոնիկական խնդիր է Հայաստանում<sup>2</sup>:

<sup>2</sup> Տես՝ Մարդու իրավունքների վերաբերյալ երկրների զեկույցներ 2018թ., Հայաստան/Country Reports on Human Rights Practices for 2018, Armenia, Հասանելի է համացանցային <https://www.state.gov/documents/organization/289345.pdf> հասցեում, վերջին մուտքը՝ 17.04.2019:

«Մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի կողմ հանդիսացող անդամ պետություններում նախնական կալանքի չարաշահման վերաբերյալ Եվրոպայի խորհրդի Խորհրդարանական վեհաժողովի Իրավական և մարդու իրավունքների հարցերով հանձնաժողովի 2015թ. պատրաստած զեկույցում մատնանշվել է, որ Եվրոպայում նախնական կալանքի տակ են մեծ թվով անհատներ: Զեկույցում նշվել է, որ մի շարք դեպքերում կալանքի հիմքերը մեկնաբանվել են չափից լայնորեն կամ վկայակոչվել են ձևականորեն (pro forma)՝ կալանքը չարաշահելով: Ուստի, իրավական և մարդու իրավունքների հարցերով հանձնաժողովը «Մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիային միացած անդամ պետություններին կոչ է արել կիրառել հատուկ միջոցառումներ նախնական կալանքի կրճատման և դրա չարաշահման վերացման ուղղությամբ<sup>3</sup>: Այսպիսի միջոցներից կարելի է համարել անազատության հետ չկապված միջոցների կիրառման շատացումը, որպիսի հանգամանքը կլինի կալանավորմանն այլընտրանք:

Խորհրդակցություններին մասնակցած զրուցակիցները նույնպես նշել են կալանքին այլընտրանքների անբավարարությունը ինչպես մինչդատական, այնպես էլ հաջորդ փուլերում: Լուրջ մարտահրավեր է մատնանշվել համապատասխան մարմինների կողմից նաև օրենսդրության ցածր որակը և իրավական բացերը, որոնք չեն կարող ապահովել արդյունավետ վերահսկողություն անազատության հետ չկապված այլընտրանքային խափանման միջոցների կիրառման ընթացքում:

<sup>3</sup> Տե՛ս՝ Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի կողմ պետությունների կողմից նախնական կալանքի չարաշահումը, Եվրոպայի խորհրդի Խորհրդարանական վեհաժողով (2015թ.), փաստ. 13863,1/Council of Europe Parliamentary Assembly, Abuse of pre-trial detention in States Parties to the European Convention on Human Rights, (2015) Doc 13863, 1: Հասանելի է համացանցային <http://assembly.coe.int/nw/xml/XRef/Xref-XML2HTML-EN.asp?fileid=21992> հասցեում, վերջին մուտք՝ 29.01.2020թ., ժամը 21:03:

Բացի այդ, ընդգծվել է, որ համապատասխան դատական և դատախազական մարմինները պետք է ստանան անհրաժեշտ նեղ մասնագիտական կրթություն, վերապատրաստում՝ այլ-ընտրանքային միջոցառումների պատշաճ կիրառման հմտությունները, կարողությունները զարգացնելու համար:

Համապատասխանաբար, ներկա դասընթացի հիմնական նպատակն այս հմտությունների զարգացումն է, այսինքն՝ գտնել լուծումներ իրավական ոլորտի մասնագետների գործնական պահանջների կոնկրետ հրատապություն ունեցող, ինչպես նաև հակասություններ առաջացնող հարցերին (մասնավորապես դասընթացի թեմաներն ընդգրկելու են այլընտրանքային խափանման միջոցների տիպոլոգիան, դրանց կիրառման ժամանակ առաջացող մարտահրավերները, դրանց բազային հատկանիշները և այն անձինք, որոնց նկատմամբ կարելի է կիրառել այդպիսիք): Այս բոլոր կրթական թեմաները հենվում են միջազգային ստանդարտների վրա և առնչվում քրեական դատավարությունում խափանման միջոցները կարգավորող ազգային իրավական կարգավորումներին:

## **Դաս 1. Այլընտրանքային խափանման միջոցներ (ընդհանուր բնութագիրը)**

Խափանման միջոցների հասկացությունը և տեսակները սահմանված են ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի (այսուհետ նաև ՀՀ ՔԴՕ)<sup>4</sup> 134-րդ հոդվածով: Ըստ այդմ՝ խափանման միջոցները հարկադրանքի միջոցներ են, որոնք կիրառվում են կասկածյալի կամ մեղադրյալի նկատմամբ՝ քրեական գործով վարույթի ընթացքում նրանց ոչ պատշաճ վարքագիծը կանխելու և դատավճռի կատարումն ապահովելու նպատակով: Կալանավորումից բացի, խափանման այլ միջոցներն են՝

1. գրավը.
2. ստորագրությունը՝ չհեռանալու մասին.
3. անձնական երաշխավորությունը.
4. կազմակերպության երաշխավորությունը.
5. հսկողության հանձնելը.
6. հրամանատարության հսկողության հանձնելը:

Սույն դասընթացի ընթացքում քննարկվելու են կալանավորմանն այլընտրանք հանդիսացող խափանման միջոցները: Այստեղ անհրաժեշտ ենք համարում նշել, որ թե նախնական քննության և թե դատական քննության փուլերում վարույթն իրականացնող մարմնի համար կալանավորմանն այլընտրանք կարող են հանդիսանալ վերը թվարկված այլընտրանքային խափանման բոլոր միջոցները, իսկ ահա դատարանի համար նախնական քննության փուլում դատական վերահսկողության կարգով վարույթն իրականացնող մարմնի կողմից ներկայաց-

<sup>4</sup> Տե՛ս՝ ՀՀ ՊՏ 1998.09.21/22(55):



ված կալանավորման միջնորդության քննության ժամանակ՝ կալանքի համար այլընտրանք հանդիսանում է միայն գրավը<sup>5</sup>:

Խափանման որոշ տեսակներ կարող են կիրառվել միայն որոշակիորեն կոնկրետացված սուբյեկտի/ների նկատմամբ: Այսպես, օրինակ՝ կալանավորումը և գրավը կարող են կիրառվել միայն մեղադրյալի նկատմամբ, հսկողության հանձնելը՝ միայն անչափահասի, իսկ հրամանատարության հսկողությանը հանձնելը՝ միայն զինծառայողի կամ զինապարտի նկատմամբ՝ զորահավաքներ անցնելու ժամանակահատվածում:

Դատավարական օրենքով նախատեսված կանոնի համաձայն՝ խափանման միջոցները չեն կարող կիրառվել մեկը մյուսի հետ կապակցված: Այսինքն, մի անձի (կասկածյալ, մեղադրյալ) նկատմամբ չի կարող կիրառվել մեկից ավելի խափանման միջոց, որպիսի հանգամանքը միանշանակորեն դրական չի ընդունվում պրակտիկայում և հաճախ պատճառ է հանդիսանում

<sup>5</sup> ՀՀ ՔԴՕ 134-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ «Գրավը համարվում է կալանավորման այլընտրանքային խափանման միջոց և կիրառվում է միայն այն դեպքում, երբ ստացվել է դատարանի որոշումը մեղադրյալին կալանավորելու մասին»: Միևնույն ժամանակ, անհրաժեշտ ենք համարում նշել, որ ՀՀ սահմանադրական դատարանն (այսուհետ նաև՝ ՍԴ) իր ՍԴՈ-1480 որոշմամբ նշել է, որ՝ «գ) թեև չհեռանալու մասին ստորագրություն կիրառելն ըստ էության ունի նույն նպատակը, ինչ գրավը (Օրենսգրքի 144-րդ հոդվածի 1-ին մաս), այն **զուտ** կալանավորման այլընտրանքային խափանման միջոց չէ. դ) ազատությունից զրկելու հետ չկապված այլ խափանման միջոցների (անձնական երաշխավորության, կազմակերպության երաշխավորության, հսկողության հանձնելու, հրամանատարության հսկողությանը հանձնելու) համար նախատեսված է կիրառման ավելի լայն նպատակ՝ երաշխավորել կամ ապահովել կասկածյալի կամ մեղադրյալի պատշաճ վարքագիծը, քրեական վարույթն իրականացնող մարմնի կանոնով նրա ներկայանալը և այլ դատավարական պարտականություններ կատարելը (Օրենսգրքի 145-րդ հոդվածի 1-ին մաս, 146-րդ հոդվածի 1-ին մաս, 148-րդ հոդվածի 1-ին մաս, 149-րդ հոդվածի 1-ին մաս), սակայն դրանք կալանավորման այլընտրանք **չեն համարվում**.»: Մեր կարծիքով, տվյալ կետերում ՍԴ-ն, ըստ էության, ի նկատի է ունեցել որպես խափանման միջոց կալանք ընտրելու դեպքում վերջինիս այլընտրանք միայն գրավի կիրառման հնարավորությունը նախաքննության փուլում:

ամենախիստ խափանման միջոցն ընտրելու համար:

Ինչ վերաբերում է խոցելի և գենդերային սկզբունքով պայմանավորված խափանման միջոցների հարցերին, ապա Մարդու իրավունքների եվրոպական դատարանի (այսուհետ նաև՝ ՄԻԵԴ) նախադեպային իրավունքը և միջազգային ունիվերսալ ստանդարտները առանձնացնում են այդ (խոցելի և գենդերային սկզբունքներով պայմանավորված) խմբերը մարդու իրավունքների շահառուների առանձին կատեգորիայի մեջ: Այնուամենայնիվ, երբ խոսքը վերաբերում է կալանավորմանը և այլընտրանքային միջոցների կիրառման հարցերին, վերը նշված ընդհանուր սկզբունքները կիրառվում են հավասար և առանց տարբերակման: Միակ պահանջը, որը կարող է դուրս բերվել ՄԻԵԴ-ի նախադեպերից, այն է, որ այդ կատեգորիաները կալանքի տակ գտնվելու ընթացքում հատուկ վերաբերմունք են պահանջում, այսինքն՝ կալանքի տակ պահվելու

Այս մասին է վկայում նաև ՍԴ նույն որոշման հետագա եզրահանգումն այն մասին, որ. «*Վերոգրյալից հետևում է, որ որոշակի հանգամանքների համակցության պարագայում ազատությունից զրկելու հետ չկապված վեց խափանման միջոցներից յուրաքանչյուրի կիրառումն սկզբունքորեն կարող է ապահովել այն նույն ցանկալի արդյունքը, ինչ ազատությունից զրկելուն հանգեցնող միակ խափանման միջոցը՝ կալանավորումը: (...) Անձի անձնական ազատության իրավունքի սահմանադրաիրավական բովանդակությունից հետևում է, որ օրենքով նախատեսված **ցանկացած խափանման միջոց, որը կապված չէ անձին ազատությունից զրկելու հետ, պետք է դիտարկվի որպես այլընտրանք կալանավորմանը**»:*

(Հասանելի է նաև համացանցային <http://www.concourt.am/armenian/decisions/common/2019/pdf/sdv-1480.pdf> հասցեում, վերջին մուտք՝ 17.11.2019թ., ժամը 23:28-ին): Նաև հավելենք, որ ՀՀ արդարադատության նախարարության պաշտոնական կայքում դրված «ՀՀ քրեական դատավարության օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի (այսուհետ՝ Նախագիծ) համաձայն՝ ՀՀ ՔԴՕ 134-րդ հոդվածի 4-րդ մաս 2-րդ նախադասությունը հանվել է: Այսինքն, գրավը չի հանդիսանալու որպես միայն կալանքին այլընտրանք և կալանք տալուց հետո միայն նրան փոխարինող խափանման միջոց: Հասանելի է համացանցային <https://www.e-draft.am/projects/2074/about> հասցեում, վերջին մուտք՝ 15.01.2020թ., ժամը 22:59:

հատուկ պայմանների առկայություն, որն ընկնում է «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի<sup>6</sup> (այսուհետ նաև՝ ՄԻԵԿ կամ Կոնվենցիա) 3-րդ հոդվածի տակ: Ինչպես կալանավորումը, այնպես էլ այլընտրանքային միջոցները, կարծես թե, հատուկ կատեգորիայի մեջ չեն դնում կանանց, երեխաներին կամ այլ խոցելի անձանց՝ հատուկ խնամքի կարիք ունենալու համար, երբ որոշում են կայացնում խափանման միջոց կիրառելու մասին: Այնուամենայնիվ, այս հանգամանքը հաշվի առնվում է խափանման միջոցի տեսակն ընտրելիս: Սովորաբար այդ պատճառով նախապատվությունը տրվում է այլընտրանքային միջոցներին, որը և ենթադրվում է ՄԻԵԿ նախադեպային իրավունքից: ՄԻԵԿ-ը չի տարբերակում այլընտրանքային միջոցներին կամ կալանավորմանը վերաբերող սկզբունքները՝ կախված անձի կարգավիճակից կամ նրա խոցելիությունից: Ազատության իրավունքի էությունը թույլ չի տալիս որևէ տարբերակում և հատուկ վերաբերմունք. ազատության իրավունք ունի հավասարապես ցանկացած անձ, անկախ նրա խմբային պատկանելությունից:

Այլընտրանքային խափանման միջոցների կիրառումն, ըստ էության, պայմանավորված է կոնկրետ գործի շրջանակներում, կոնկրետ դեպքում անձի խոցելիության աստիճանը հաշվի առնելով:

Խափանման այլընտրանքային միջոցների ցանկ սահմանված չէ ՄԻԵԿ-ի կամ Եվրոպայի խորհրդի (այսուհետ նաև՝ ԵԽ) որևէ այլ մարմնի կողմից: Որպես այդպիսին կարող են դիտարկվել բոլոր այն միջոցները, որոնք կապված չեն ազատությունից զրկելու հետ և կարող են կիրառվել կալանքի փոխարեն լայն իմաստով: Մասնավորապես, Նախարարների կոմիտեի 2006 թվականի սեպտեմբերի 27-ի 13-րդ հանձնարարականն (այսուհետ՝ (2006)13 Հանձնարարական) առաջարկում է այլընտրանքային միջոցների նկարագրական սահմանում.

.....  
<sup>6</sup> Տե՛ս՝ ՀՀ ՊՏ 2002.06.05/17(192):

Որպես կալանքի տակ պահելու «այլընտրանքային միջոցներ» կարող են լինել, օրինակ՝ պարտավորություններ, որոնք անհրաժեշտության դեպքում պահանջվում են դատական մարմնին ներկայանալու համար, չմիջամտել արդարադատության իրականացման ընթացքին և ձեռնպահ մնալ որոշակի վարքագծի դրսևորումից, այդ թվում որոշակի պաշտոն զբաղեցնելուց կամ աշխատանք կատարելուց; ամենօրյա կամ պարբերական հիմունքներով ներկայացնել հաշվետվություններ դատական մարմնին, ոստիկանությանը կամ այլ մարմնին, ենթարկվել դատական մարմնի կողմից նշանակված գործակալության կողմից վերահսկողության պահանջներին, ընդունել էլեկտրոնային մոնիտորինգի պահանջները, պահպանել սահմանված հասցեում բնակվելու պահանջները՝ պայմանով կամ առանց այնտեղ անցկացնելու ժամերի պայմանի, առանց թույլտվության չլքել կամ մուտք չգործել որոշակի վայրեր կամ թաղամասեր; առանց թույլտվության չհանդիպել որոշակիորեն նշված անձանց; հանձնել անձնագրերը կամ նույնականացման այլ փաստաթղթերը, ներկայացնել ֆինանսական կամ այլ տեսակի երաշխիքներ՝ սպասվող դատավարությանը ներկայանալու համար<sup>7</sup>:

(2006)13 Հանձնարարականը վերաբերում է այլընտրանքային միջոցներին՝ իրենց առաջնային իմաստով, ինչպես դրանք օգտագործվում և հասկացվում են քրեատառավարական ընթացակարգերի համատեքստում և հիմնականում վերաբերում են հանցավորներին: Այնուամենայնիվ, այլընտ-

<sup>7</sup> Տես Recommendation of the Committee of Ministers to member states on the use of remand in custody, the conditions in which it takes place and the provision of safeguards against abuse (Adopted by the Committee of Ministers on 27 September 2006 at the 974th meeting of the Ministers' Deputies), available at [https://search.coe.int/cm/Pages/result\\_details.aspx?ObjectID=09000016805d743f](https://search.coe.int/cm/Pages/result_details.aspx?ObjectID=09000016805d743f), 24.12.2019թ. Ժամը 21:52:

րանքային միջոցների իմաստն ընդլայնվել է: Ներկայումս դրանք ավելի լայն բովանդակություն ունեն և կիրառելի են տարատեսակ վարույթների նկատմամբ, որոնք ավարտվում են ազատությունից զրկելով, և այն անձանց նկատմամբ, որոնք կարող են ունենալ ազատությունից զրկվելու ռիսկ՝ անկախ նրանց կարգավիճակից (օր.՝ օտարերկրացիներ, փախստականներ, կանայք, երեխաներ կամ այլ խոցելի խմբեր):

Ելնելով նույն փաստաթղթից՝ կարելի է պնդել, որ այլընտրանքային միջոցը ներկայումս պետք է ընկալվի որպես ցանկացած միջոց, որն ավելի քիչ սահմանափակող է, քան որևէ պատճառաբանությամբ կալանքի տակ պահելը: Այս այլընտրանքային միջոցները մնում են անձի վարքագծի հետ կապված և նպատակ ունեն շրջանցել անազատության մեջ պահելու անտեղի դեպքերը: Այսպիսով, այլընտրանքային միջոցները միշտ դիտվում և ընկալվում են ի հակադրություն ցանկացած այլ միջոցների, որոնք ենթադրում են կալանք: Քրեական դատավարության ընթացքում այլընտրանքային միջոցները կալանավորմանը հակակշռող գործոն են: Սովորաբար դրանք ենթադրում են ոչ բանտային միջոցներ և ենթադրում են ազատման իրավունք այն դեպքում, երբ կալանքի հիմքերը նվազել են:

Անհրաժեշտ ենք համարում նշել, որ ներկա դասընթացում քննարկվում են միայն քրեադատավարական ընթացակարգերի շրջանակներում կիրառվող խափանման միջոցները՝ այդ թվում նաև անչափահասների, օտարերկրացիների և խոցելի այլ խմբերի համար:

Սովորաբար ցանկացած այլընտրանքային միջոց դիտարկվում է կալանքի պայմանների և բանտերի գերբնակեցմանն առնչվող խնդիրների հետ սերտ կապվածության մեջ: Այստեղ հիմնավորումը պարզ է, որ մարդու համար համապատասխան կալանքի տակ պահելը, ինչպես նաև համակարգային գերբեռնվածությունը լրացուցիչ փաստարկ կլինեն կալանավորվածին ազատելու կամ նրան ընդհանրապես ազատությունից չզրկելու համար՝ դրանով իսկ կիրառելով այլընտրանքային միջոց:

Այնուամենայնիվ, հարկ է նշել, որ սույն մոդուլը չի վերաբերում համակարգային խնդիրներին, ինչպիսիք են կալանքի և գերբնակեցման անմարդկային պայմանները, որոնք կարող են առաջացնել Կոնվենցիայի 3-րդ հոդվածով նախատեսված խնդիրներ: Այլընտրանքային միջոցների կիրառման հետ առհասարակ կապված են այն հարցերը, որոնք վերաբերում են ազատության իրավունքին՝ համաձայն 5-րդ հոդվածի, ինչպես նաև այլ երաշխավորված իրավունքներ, ինչպիսիք են՝ տեղաշարժի ազատությունը (4-րդ Արձանագրության 2-րդ հոդված), ընտանեկան կյանքը, քաղաքացիներին և օտարերկրացիներին վերաբերող որոշակի արգելքները (4-րդ Արձանագրության 3-րդ և 4-րդ հոդվածներ):

Միայն այն դեպքում, երբ բանտային բնակչության գերբեռնվածության հետ կապված համակարգային խնդիր կա՝ պայմանավորված նաև կալանքների բազմաքանակության պատճառով, այլընտրանքային միջոցների հարցը կարող է կապվել 3-րդ հոդվածի հետ: Մասնավորապես, Թորեջանին և այլք ընդդեմ Իտալիայի (Torreggiani and Others v. Italy<sup>8</sup>) գործում (Կոնվենցիայի 46-րդ հոդված) նշվել է, որ.

*88. ... դիմումատուների իրավունքների խախտումը մեկուսացած առանձին պատճառներ չունի, այլ համակարգային է և կապված է իտալական քրեակարարողական համակարգի քրոնիկական բնույթ ունեցող հիմնահարցերի հետ, որի պատճառով տուժում և տուժելու են ապագայում բազմաթիվ անձինք (տես Բրոնիվսկին ընդդեմ Լեհաստանի, պարագրաֆ 189):*

*94. ... իտալական բանտերում կալանավորվածների 40%-ը անձինք են, ովքեր գտնվում են նախնական կալանքի տակ՝ սպասելով դատավճռին:*

<sup>8</sup> Տես՝ Case of Torreggiani and Others v. Italy, 08/01/2013, 43517/09 35315/10 37818/10 46882/09 55400/09 57875/09 61535/09:

95. Դատարանն այս համատեքստում ցանկանում է հիշեցնել Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեի առաջարկությունները, որոնցում կոչ է արվում Պետություններին խրախուսել դատախազներին և դատավորներին հնարավորինս շատ դիմել այլընտրանքային պատժամիջոցների և պատժիչ քաղաքականության մեջ նվազագույն չափով կիրառել կալանքը, ինչը կնպաստի բանտային գերբեռնվածության խնդրի լուծմանը (տես, մասնավորապես, Նախարարների կոմիտեի առաջարկություն (99)22) և (2006)13):

Եւս «Կալանքի այլընտրանքային միջոցները» վերտառությամբ Հելփ համակարգում (CoE Help, Alternative Measures to Detention) առկա դասընթացից հետևյալ մեջբերումը պատկերավոր ցույց է տալիս այլընտրանքային միջոցներ չկիրառելու պատճառները: Մասնավորապես.

Շատ երկրներում օրենսդրությունը ներառում է սահմանափակ ցանկ այն միջոցների, որոնք կարող են կիրառվել կալանքի փոխարեն: Արդյունքում դատարաններն իրենց տրամադրության տակ ունեն հանցագործության ծանրությանն ու բնույթին համապատասխան սակավաթիվ տարբերակներ:

Այլընտրանքները, որոնք պետք է կիրառվեն՝ հաշվի առնելով հանցագործի սոցիալ-տնտեսական կարգավիճակը և նրա վերականգնողական պահանջները, առավել հաճախ բացակայում են:

Այնուամենայնիվ, ավելի հաճախ հանդիպող մարտահրավերը ոչ թե օրենսդրության բացակայությունն է, այլ գործող օրենսդրությամբ նախատեսված կալանավորման այլընտրանքներ կիրառելու ցանկության բացակայությունը:

Այլընտրանքները սովորաբար չեն օգտագործվում հետևյալի պատճառով.

- դրանց արդյունավետության նկատմամբ անվստահություն,
- քրեական արդարադատության մարմինների միջև համագործակցության անհրաժեշտ ենթակառուցվածքների և կազմակերպական մեխանիզմների բացակայությունը՝ դրանց օգտագործումը հնարավոր դարձնելու համար;
- ենթադրյալ հանցանք կատարած անձի վերահսկելու հատուկ վարչական մարմնի՝ պրոբացիոն ծառայության համար ֆինանսավորման, անձնակազմի և վերապատրաստման բացակայությունը;
- այնպիսի ընկալման առկայություն, համաձայն որի այն միջոցներն ու սանկցիաները, որոնք կապված չեն ազատագրկման հետ, չունեն հասարակական աջակցություն, և կարծիք է առաջանում, թե պարտամիջոցներ կիրառող մարմինները և քաղաքական գործիչներն ունեն հանցագործության նկատմամբ մեղմ վերաբերմունք, ուստի վերջիններիս կողմից փորձ է արվում այդպիսին չերևալ;
- ազատագրկման արժեքի (ինչպես սոցիալական, այնպես էլ ֆինանսական առումով) վերաբերյալ տեղեկացվածության պակասը<sup>9</sup>:

Անհրաժեշտ է նաև նշել, որ ՀՀ ՔԴՕ-ն ևս ունի այլընտրանքային միջոցների ոչ բավարար արդյունավետ ցանկ, որն, ի թիվս այլնի, հանդիսանում է պատճառ և պայման՝ կալանքը որպես խափանման ամենատարածված և վարույթն իրականացնող մարմինների համար նախընտրելի միջոց կիրառելու արատավոր պրակտիկայի համար:

<sup>9</sup> Հասանելի է համացանցային  
[http://help.elearning.ext.coe.int/mod/scorm/player.php?scoId=3405&cm=50323&currentorg=Alternative\\_Measures\\_to\\_Detention\\_ORG&display=popup](http://help.elearning.ext.coe.int/mod/scorm/player.php?scoId=3405&cm=50323&currentorg=Alternative_Measures_to_Detention_ORG&display=popup)  
հասցեում, վերջին մուտք՝ 30.01.2020թ., ժամը 00:37:



## **Դաս 2. Այլընտրանքային խափանման միջոցների կիրառման ներպետական իրավական հիմքերը և միջազգային ստանդարտները**

Այստեղ ցանկանում ենք անդրադառնալ այլընտրանքային միջոցների սկզբունքներին և դրանց հասկացություններին՝ մատնանշելով ՄԻԵԴ նախադեպային իրավունքի որոշ աղբյուրները, ինչպես նաև ԵԽ համապատասխան փաստաթղթերը:

Կարևոր ենք համարում քննարկել այլընտրանքային միջոցները ազատությունից զրկելու հետ փոխկապվածության շրջանակներում: Այսինքն, հասկանալու համար, թե այլընտրանքային միջոցները ենթակա են կիրառման, պետք է հասկանալ, թե երբ կալանքը չպետք է կիրառվի:

Սահմանադրական դատարանը՝ բացահայտելով անձնական ազատության իրավունքի սահմանադրաիրավական բովանդակությունը, մասնավորապես, նշել է, որ «...սահմանադիրը ... անձին ազատությունից զրկելու ձևերի ընտրությունը վերապահել է օրենսդրի հայեցողությանը՝ որևէ կերպ չկանխորոշելով, թե յուրաքանչյուր կոնկրետ դեպքում կամ կոնկրետ նպատակին հասնելու համար ինչ դատավարական ընթացակարգային միջոցառումներ կարող են կիրառվել»: Միաժամանակ, Սահմանադրական դատարանն ընդգծել է, որ «... կալանավորումը, լինելով խափանման միջոցներից մեկը, ունի այլընտրանք և խափանման բոլոր միջոցների շարքից ընտրվում է այն ժամանակ, երբ խափանման միջոցների կիրառմամբ հետապնդվող նպատակներին հասնելուն առավելապես կարող է նպաստել խափանման միջոցի հենց այս տեսակը՝ հաշվի առնելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 135-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված բոլոր հանգամանքները»<sup>10</sup>:

ՄԻԵԿ 5-րդ հոդվածի ամբողջ նպատակը կամայական կալանքների կանխումն է (ՄակԿեյն ընդդեմ Միացյալ Թագավորություն (McKay v. the United Kingdom [GC]<sup>11</sup>), պարագրաֆ 30), ինչը նշանակում է, որ ցանկացած ազատազրկում պետք է օրինական լինի ինչպես ներպետական օրենսդրության (Դել Ռիո Պրադան ընդդեմ Իսպանիայի (Del Río Prada v. Spain [GC])<sup>12</sup>, պարագրաֆ 125), այնպես էլ միջազգային իրավունքի (Մեդվեդեդևը և ուրիշներ ընդդեմ Ֆրանսիայի (Medvedyev and others v. France [MC])<sup>13</sup>, պարագրաֆ 79; Հասսան ընդդեմ Միացյալ Թագավորության (Hassan v. the United Kingdom [GC]<sup>14</sup>), պարագրաֆ 105) առումով: ՄԻԵԿ-ը հանդիսանում է բարձրագույն ատյան, որը հետևում է կոնկրետ կալանքի համապատասխանությանը 5-րդ հոդվածի պահանջներին՝ անկախ ներպետական իշխանությունների կամ ազգային դատարանների եզրակացություններից:

Երբ Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 1-ին կետը կասկածի տակ է դրվում, ՄԻԵԿ-ը որոշակի լիազորություն է իրականացնում՝ ստուգելով այն հանգամանքը, թե արդյոք պահպանվել է ազգային օրենսդրությունը (Քրեանգան ընդդեմ Ռումինիայի (Creangă v. Romania [MC])<sup>15</sup>), պարագրաֆ 101; Բարանովսկին ընդդեմ Լեհաստանի (Baranowski v. Poland<sup>16</sup>), պարագրաֆ 50;

<sup>10</sup> Տե՛ս՝ ՍԴՈ-827ը, ՀՀ Սահմանադրական դատարանի 2009թ. սեպտեմբերի 12-ի «Քաղաքացի Խ.Սուքիսայանի դիմումի հիման վրա՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 285 հոդվածի 2-րդ մասի երկրորդ պարբերության՝ ՀՀ Սահմանադրության համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» որոշում: Հասանելի է նաև համացանցային <http://www.concourt.am/armenian/decisions/common/2009/pdf/sdv-827.pdf> հասցեում, վերջին մուտք՝ 30.12.2019թ., ժամը 00:07:

<sup>11</sup> Տե՛ս՝ Case of McKay v. the United Kingdom [GC], 03/10/2006, 543/03:

<sup>12</sup> Տե՛ս՝ Case of Del Río Prada v. Spain [GC], 21/10/2013, 42750/09:

<sup>13</sup> Տե՛ս՝ Case of Medvedyev and others v. France [MC], 29/03/2010, 3394/03:

<sup>14</sup> Տե՛ս՝ Case of Hassan v. the United Kingdom [GC], 16/09/2014, 29750/09:

<sup>15</sup> Տե՛ս՝ Case of Creangă v. Romania [MC],

<sup>16</sup> Տե՛ս՝ Case of Baranowski v. Poland, 28/03/2000, 28358/95:

Բենհամն ընդդեմ Միացյալ Թագավորություն (Benham v. the United Kingdom)<sup>17</sup>, պարագրաֆ 41): Դա արվում է՝ նախ գնահատելով օրենսդրության համատեղելիությունն ըստ 3 չափանիշների՝ **մատչելիության, հստակության և կանխատեսելիության** (Դել Ռիո Պրադան ընդդեմ Իսպանիայի (Del Río Prada v. Spain[GC], պարագրաֆ 125): Բացի դրանից, ներպետական իրավական դրույթների բովանդակությանը հակասող դատական մեկնաբանությունը նույնպես չեն բավարարում Կոնվենցիայով պահանջվող «**օրենքի որակը**» չափանիշին (Նասրուլոյեն ընդդեմ Ռուսաստանի, (Nasrulloev v. Russia<sup>18</sup>), պարագրաֆ 77; Ջեչիուս ընդդեմ Լիտվայի (Ječius v. Lithuania)<sup>19</sup>, պարագրաֆներ 53-59): Որոշ դատավարական թերություններ կամ իրավաբանական սխալներ, որոնք չեն խախտում կալանքի օրինականությունը որպես ամբողջություն, 5-րդ հոդվածի 1-ին կետի իմաստով կարող են համարվել իրավական: Կարևոր է հասկանալ, որ 5-րդ հոդվածի 1-ին կետի իմաստով՝ «**օրենքով սահմանված ընթացակարգին**» համապատասխանությունը չպետք է ընկալվի որպես բացարձակ համապատասխանություն: Որոշ թերություններ և խախտումներ ընդունելի են, սակայն միայն նրանք, որոնք չեն թերագնահատում ազատության և անվտանգության իրավունքներն իրենց էության մեջ (Մարտուրանան ընդդեմ Իտալիայի (Marturana v. Italy)<sup>20</sup>, պարագրաֆ 79 - կալանքի տակ գտնվելու մասին չհայտնելն այն դեպքում, երբ իշխանություններն անկեղծորեն հավատում էին, որ իրենք տեղեկացրել էին), Նիկոլովն ընդդեմ Բուլղարիայի (Nikolov v. Bulgariei)<sup>21</sup>, պարագրաֆ 63 - ձեռքակալման կամ կալանքի որոշման մեջ զուտ տեխնիկական սխալ, որը հետագայում ուղղվել է դատական մարմնի կողմից, Գաիդջուրգիսն

<sup>17</sup> Տե՛ս՝ Case of Benham v. the United Kingdom, 10/06/1996, 19380/92:

<sup>18</sup> Տե՛ս՝ Case of Nasrulloev v. Russia, 11/10/2007, 656/06:

<sup>19</sup> Տե՛ս՝ Case of Ječius v. Lithuania, 31/07/2000, 34578/97:

<sup>20</sup> Տե՛ս՝ Case of Marturana v. Italy, 04/03/2008, 63154/00:

<sup>21</sup> Տե՛ս՝ Case of Nikolov c. Bulgariei, 30/01/2003, 38884/97:

ընդդեմ Լիտվայի (որոշում) (Gaidjurgis v. Lithuania (dec.))<sup>22</sup> - դիմումատուի կալանքի համար պաշտոնական հիմքերի փոխարինում դատական որոշումների նկարագրական մասում դատարանների կողմից նշված փաստերով):

ՄԻԵԿ 5-րդ հոդվածով նախատեսված է բացառիկ իրավիճակների ցանկը, որոնց դեպքում հնարավոր է օրինական կալանավորումը: Անձը կարող է կալանավորվել 5-րդ հոդվածի 1-ին կետի «գ» ենթակետով, միայն քրեական մեղադրանքների հիման վրա, իրավախախտում կատարած լինելու հիմնավոր կասկածի առկայության դեպքում նրան իրավասու օրինական մարմինն ներկայացնելու նպատակով (Ջեշլս ընդդեմ Լիտվայի (Ječius v. Lithuania)): Սույն դրույթի համաձայն՝ կալանավորումը պետք է լինի համաչափ միջոց նշված նպատակին հասնելու համար (Լադենտն ընդդեմ Լեհաստանի (*Ladent v. Poland*)<sup>23</sup>, պարագրաֆներ 55-56)<sup>24</sup>, ինչը նշանակում է, որ իշխանությունները չեն կարող կալանավորել անձանց փոքր իրավախախտումների համար, որոնց համար նախատեսված չէ ազատազրկման հետ կապված պատիժ: Օտարերկրացիների կալանավորումը, 5-րդ հոդվածի 1-ին կետի «գ» ենթակետով, հիմնականում ունի երկու նպատակ, **«անօրինական մուտքը երկիր կանխելու նպատակ»**, ինչը թույլ է տալիս պետություններին վերահսկել օտարերկրացիների ազատությունը ներգաղթի ենթատեքստում (Խլայֆիան և այլք ընդդեմ Իտալիայի (*Khlaifia and Others v. Italy [GC]*)<sup>25</sup>, պարագրաֆ 89) և **«արտաքսելու կամ հանձնելու նպատակ»** (Չահալն ընդդեմ Միա-

<sup>22</sup> Տե՛ս՝ Case of Gaidjurgis v. Lithuania (dec.), 16/01/2001, 49098/99:

<sup>23</sup> Տե՛ս՝ Case of Ladent v. Poland, 18/03/2008, 11036/03:

<sup>24</sup> Լադենտն ընդդեմ Լեհաստանի գործով, Դատարանը նշել է, որ դիմողի նկատմամբ կալանքի կիրառումը նման հանգամանքներում չի կարող համաչափ համարվել դատավարության պատշաճ ընթացքն ապահովելու նշված նպատակին հասնելու համար՝ հաշվի առնելով ենթադրաբար կատարված հանցագործության մեղմ բնույթը (պարագրաֆ 56):

<sup>25</sup> Տե՛ս՝ Case of Khlaifia and Others v. Italy [GC], 15/12/2016, 16483/12:

ցյալ Թագավորության (*Chahal v. the United Kingdom*)<sup>26</sup>, պարագրաֆ 112; Ցոնկան ընդդեմ Բելգիայի (*Čonka v. Belgium*)<sup>27</sup>, պարագրաֆ 38; Նասրուլլոյն ընդդեմ Ռուսաստանի (*Nasrulloev v. Russia*), պարագրաֆ 69; Սոլդատենկոն ընդդեմ Ուկրաինայի (*Soldatenko v. Ukraine*)<sup>28</sup>, պարագրաֆ 109):

Հիմնական սկզբունքն այն է, որ ազատությունից զրկելը պետք է լինի որպես վերջին միջոց: Ազատության իրավունքը մարդու հիմնարար իրավունքներից մեկն է, և նրա զրկումը լուրջ և ծանր հետևանքներ է ունենում անհատների վրա: Եվ այս իրավունքը կարևոր է ոչ միայն անհատի համար, այլև իր հավաքական իմաստով, այսինքն՝ ընդհանուր հասարակական կարգի և անվտանգության համար: Իրոք, եթե հասարակությունը կարծում է, որ դատախազական/դատական իշխանությունները հակված են ավելի շատ կիրառել կալանքը, ապա այն առաջացնում է մտահոգություններ և անապահովության զգացում:

Երբեմն նախնական կալանքի լայնածավալ կիրառումը քրեական դատավարությունում բերում է համակարգային խնդիրների, այդ թվում՝ այլընտրանքային միջոցների գրեթե չօգտագործմանը: Թեպետ ազգային քրեադատավարական համակարգի կառուցվածքն ամբողջությամբ ներպետական իշխանությունների հայեցողության շրջանակներում է, սակայն պրակտիկայում այլընտրանքային միջոցների կիրառման բացակայությունը դարձնում է կալանքը պարտադիր: Այսպես, Վարգան և այլք ընդդեմ Հունգարիայի» (*Varga and Others v. Hungary*)<sup>29</sup> գործով նշվել է, որ.

*105. Դատարանն իրավասու չէ պետություններից ցույց տալ, թե ինչպես պետք է կազմակերպվեն իրենց*

<sup>26</sup> Տե՛ս՝ Case of Chahal v. the United Kingdom, 15/11/1996, 22414/93:

<sup>27</sup> Տե՛ս՝ Case of Čonka v. Belgium, 05/02/2002, 51564/99:

<sup>28</sup> Տե՛ս՝ Case of Soldatenko v. Ukraine, 23/10/2008, 2440/07:

<sup>29</sup> Տե՛ս՝ Case of Varga and Others v. Hungary, 10/03/2015, 14097/12 45135/12 73712/12 34001/13 44055/13 64586/13:

քրեական քաղաքականությունը և բանտային համակարգը: Այս հարցերը բարձրացնում են մի շարք բարդ իրավական և գործնական խնդիրներ, որոնք, սկզբունքորեն, դուրս են գալիս Դատարանի դատական գործառույթից...: Այնուամենայնիվ, այս համատեքստում Դատարանը հիշեցնում է Նախարարների կոմիտեի առաջարկությունները, որոնք պետություններին առաջարկում են խրախուսել դատախազներին և դատավորներին հնարավորինս լայնորեն կիրառել կալանավորման այլընտրանքները և վերափոխել իրենց քրեական քաղաքականությունը բանտարկության կրճատման ուղղությամբ, որպեսզի, ի թիվս այլ հարցերի, լուծվեն բանտերի գերբնակեցման խնդիրը (տե՛ս, մասնավորապես, Նախարարների կոմիտեի 1999թ. սեպտեմբերի 30-ի թիվ R(99) 22<sup>30</sup> և 2006 թվականի սեպտեմբերի 27-ի թիվ R(2006)13<sup>31</sup> հանձնարարականները):

Անդրադառնալով **այլընտրանքային միջոցառումների հիմունքներին**, անհրաժեշտ է նշել, որ ներպետական օրենսդրության տեսանկյունից այս հիմքերն ըստ էության նկարագրված են քրեական դատավարական օրենսդրության մեջ: Դրանք որ-

<sup>30</sup> Տե՛ս՝ Recommendation No. R (99) 22 of the Committee of Ministers to Members to Member States Concerning Prison Overcrowding and Prison Population Inflation (Adopted by the Committee of Ministers on 30 September 1999 at the 681st meeting of the Ministers' Deputies), available at [https://www.hchr.org.co/documentoseinformes/documentos/carceles/3\\_Europeos/Basicos/2\\_Especificos/R%20%20\(99\)%2022,%20ingles.pdf](https://www.hchr.org.co/documentoseinformes/documentos/carceles/3_Europeos/Basicos/2_Especificos/R%20%20(99)%2022,%20ingles.pdf), 25.12.2019թ., ժամը 22:53:

<sup>31</sup> Տե՛ս՝ Recommendation of the Committee of Ministers to member states on the use of remand in custody, the conditions in which it takes place and the provision of safeguards against abuse (Adopted by the Committee of Ministers on 27 September 2006 at the 974th meeting of the Ministers' Deputies), available at [https://search.coe.int/cm/Pages/result\\_details.aspx?ObjectID=09000016805d743f](https://search.coe.int/cm/Pages/result_details.aspx?ObjectID=09000016805d743f), 24.12.2019թ., ժամը 21:52:

պես այդպիսին առանձնացված չեն ըստ խափանման միջոցի տեսակի և փաստորեն վերաբերում են և ազատության զրկման հետ կապված, և ազատության զրկման հետ չկապված խափանման միջոցներին՝ տարբերակումն, ըստ էության, թողնելով միայն այդ հիմքերի դրսևորումների ռիսկերի տարբեր աստիճաններին: Ուստի դրանք կներկայացվեն ընդհանրական կերպով՝ առանց առանձնացնելու կալանքը և այլ խափանման միջոցները: Այսպես.

«Սահմանադրության 27-րդ հոդվածի համաձայն՝

*«1. Յուրաքանչյուր ոք ունի անձնական ազատության իրավունք: Ոչ ոք չի կարող անձնական ազատությունից զրկվել այլ կերպ, քան հետևյալ դեպքերում և օրենքով սահմանված կարգով՝*

*1) անձին իրավասու դատարանը դատապարտել է հանցանք կատարելու համար.*

*2) դատարանի իրավաչափ կարգադրությանը չենթարկվելու համար.*

*3) օրենքով սահմանված որոշակի պարտականության կատարումն ապահովելու նպատակով.*

*4) անձին իրավասու մարմին ներկայացնելու նպատակով, երբ առկա է նրա կողմից հանցանք կատարած լինելու հիմնավոր կասկած, կամ երբ դա հիմնավոր կերպով անհրաժեշտ է հանցանքի կատարումը կամ դա կատարելուց հետո անձի փախուստը կանխելու նպատակով.*

*5) անչափահասին դաստիարակչական հսկողության հանձնելու կամ իրավասու մարմին ներկայացնելու նպատակով.*

*6) հանրության համար վրանգավոր վարակիչ հիվանդությունների տարածումը, ինչպես նաև հոգեկան խանգարում ունեցող, հարբեցող կամ թմրամոլ անձանցից բխող վրանգը կանխելու նպատակով.*

7) անձի անօրինական մուտքը Հայաստանի Հանրապետություն կանխելու կամ անձին արտաքսելու կամ այլ պետության հանձնելու նպատակով:

«Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» Եվրոպական կոնվենցիայի 5-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝

«Յուրաքանչյուր ոք ունի ազատության և անձնական անձեռնմխելիության իրավունք: Ոչ ոքի չի կարելի ազատությունից զրկել այլ կերպ, քան հետևյալ դեպքերում և օրենքով սահմանված կարգով.

ա. անձին օրինական կերպով կալանքի տակ պահելն իրավասու դատարանի կողմից նրա դատապարտվելուց հետո,

բ. անձի օրինական ձերբակալումը կամ կալանավորումը դատարանի օրինական կարգադրությանը չենթարկվելու համար կամ օրենքով նախատեսված ցանկացած պարտավորության կատարումն ապահովելու նպատակով,

գ. անձի օրինական կալանավորումը կամ ձերբակալումը՝ իրավախախտում կատարած լինելու հիմնավոր կասկածի առկայության դեպքում նրան իրավասու օրինական մարմնին ներկայացնելու նպատակով կամ այն դեպքում, երբ դա հիմնավոր կերպով անհրաժեշտ է համարվում նրա կողմից հանցագործության կատարումը կամ այն կատարելուց հետո նրա փախուստը կանխելու համար,

դ. անչափահասին կալանքի վերցնելն օրինական կարգադրության հիման վրա՝ դաստիարակչական հսկողության համար, կամ նրա օրինական կալանավորումը՝ նրան իրավասու իրավական մարմնին ներկայացնելու նպատակով,

ե. անձանց օրինական կալանքի վերցնելը՝ վարա-



կիչ հիվանդությունների տարածումը կանխելու նպատակով, ինչպես նաև հոգեկան հիվանդներին, գինեմոլներին կամ թմրամոլներին կամ թափառաշրջիկներին օրինական կալանքի վերցնելը,

զ. անձի օրինական կալանավորումը կամ ձերբակալումը՝ նրա անօրինական մուտքը երկիր կանխելու նպատակով, կամ այն անձի օրինական կալանավորումը կամ ձերբակալումը, որի դեմ միջոցներ են ձեռնարկվում՝ նրան արտաքսելու կամ հանձնելու նպատակով»:

Խափանման միջոց, այդ թվում՝ կալանավորում, կիրառելու հիմքերն ամրագրած են ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 135-րդ հոդվածով, որի համաձայն՝

«1. Դատարանը, դատախազը, քննիչը կամ հետաքննության մարմինը խափանման միջոց կարող են կիրառել միայն այն դեպքում, երբ քրեական գործով ձեռք բերված նյութերը բավարար հիմք են տալիս ենթադրելու, որ կասկածյալը կամ մեղադրյալը կարող է՝

1) թաքնվել քրեական վարույթն իրականացնող մարմնից,

2) խոչընդոտել մինչդատարանական վարույթում կամ դատարանում գործի քննությանը՝ քրեական դատավարությանը մասնակցող անձանց վրա անօրինական ազդեցություն գործադրելու, գործի համար նշանակություն ունեցող նյութերը թաքցնելու կամ կեղծելու, քրեական վարույթն իրականացնող մարմնի կանչով առանց հարգելի պատճառի չներկայանալու կամ այլ ճանապարհով,

3) կատարել քրեական օրենքով չթույլատրված արարք,

4) խուսափել քրեական պատասխանատվությունից և նշանակված պատիժը կրելուց,

5) խոչընդոտել դատարանի դատավճռի կատարմանը:

2. Կալանավորումը մեղադրյալի նկատմամբ կարող է կիրառվել միայն այն դեպքում, երբ կա հիմնավոր կասկած, որ նա կատարել է այնպիսի հանցանք, որի համար նախատեսվող ազատագրկման ձևով պատժի առավելագույն ժամկետը մեկ տարուց ավելի է, և կան բավարար հիմքեր ենթադրելու, որ մեղադրյալը կարող է կատարել սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված որևէ գործողություն»:

Վերը շարադրված իրավադրույթների, ինչպես նաև ՀՀ վճռաբեկ դատարանի կողմից մի շարք գործերով (Ա.Ճուղուրյանի վերաբերյալ 2007 թվականի օգոստոսի 30-ի թիվ ՎԲ-132/07 որոշումը<sup>32</sup>, Ա.Հովսեփյանի վերաբերյալ 2010 թվականի մարտի 26-ի թիվ ԵԿԴ/0633/06/09 որոշման 10-րդ կետը<sup>33</sup> և այլն) արտահայտած իրավական դիրքորոշումների ընդհանրական վերլուծությունից հետևում է, որ կալանավորումը քրեական գործերի քննության ընթացքում կիրառվող խափանման միջոցներից ամենախիստն է: Այն առավելագույն չափով սահմանափակում է մարդու սահմանադրական իրավունքներն ու ազատությունները, այդ թվում՝ այնպիսի կարևոր իրավունք, ինչպիսին ազատության և անձեռնմխելիության իրավունքն է: Կալանավորման էությունն անձին հասարակությունից մեկուսացնելն է: Ինչպես ցանկացած այլ խափանման միջոց, այնպես էլ կալանավորումը մեղադրյալի նկատմամբ կիրառվում է քրեական գործի քննության ընթացքում նրա ոչ պատշաճ վարքագիծը (այն գործողությունները, որոնք ուղղված են քննությունից և դատից թաքնվելուն, գործով ճշմարտության բացահայտմանը խոչընդոտելուն, ինչպես նաև հանցավոր գործունեությունը շարունակելուն) կանխելու նպատակով:

<sup>32</sup> Տես՝ ՀՀ ՊՏ 2007.11.07/54(578):

<sup>33</sup> Տես՝ ՀՀ ՊՏ 2010.08.10/37(771)1:

Այսինքն՝ ինչպես կալանավորման, այնպես էլ խափանման այլ միջոցների կիրառումը նպատակ է հետապնդում քրեական գործով վարույթի ընթացքում կանխելու անձի ոչ իրավաչափ վարքագիծը:

Ուշադրության է արժանի նաև ՀՀ վճռաբեկ դատարանի Մաքսիմ Արկադիի Բայդակի վերաբերյալ 2018 թվականի հուլիսի 20-ի թիվ ԵԴ/0129/06/18 որոշումը<sup>34</sup>, համաձայն որի հիմնավոր կասկածի գնահատման ժամանակ վերաքննիչ դատարանը կարող է գնահատման ենթարկել նաև փաստեր, որոնք ներկայացված չեն եղել առաջին ատյանի դատարանում կալանքի քննության ժամանակ: Այսպես.

*15.1 Վերոգրյալի հետ մեկտեղ հարկ է արձանագրել, որ անձի նկատմամբ կալանավորումը որպես խափանման միջոց կիրառելու մասին առաջին ատյանի դատարանի դատական ակտի իրավաչափությունը ստուգելիս վերադաս դատական ատյանը համապատասխան բողոքի պայմաններում նույնպես պետք է պարզած գնահատման ենթարկի անձի կողմից իրեն մեղսագրվող հանցանքը կատարած լինելու հիմնավոր կասկածը: Ընդ որում, **վերադաս դատարանը պետք է գնահատման ենթարկի նաև բողոքաբերի կողմից նոր ներկայացված նյութերը՝ ենթադրյալ հանցանքի հետ անձի օբյեկտիվ կապի առկայությունը պարզելու համար:***

Այս առնչությամբ, անդրադառնալով Գոռ Դուրյանի գործով արտահայտված այն իրավական դիրքորոշմանը, որ. «(...) վերաքննիչ դատարանի կողմից ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 287-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված որոշման դատական վերանայման սահմանները կանխորոշվում են առաջին ատյանի դատարանում քննության առարկա դարձած կալանավորման հիմքերի, դրանք հաստատող փաս-

<sup>34</sup> Տես՝ ՀՀ ՊՏ 2019.01.23/5(1458):

տրական տվյալների շրջանակներով, որոնց հիման վրա էլ վերաքննիչ դատարանը ստուգում է վերանայվող դատական ակտի օրինականությունն ու հիմնավորվածությունը (...):

(...) [իսկ] բոլոր այն դեպքերում, երբ ի հայտ են գալիս կալանավորումը հիմնավորող նոր հանգամանքներ, վարույթն իրականացնող մարմինը կարող է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 285-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված կարգով դիմել առաջին աստիճանի դատարան, այլ ոչ թե վերաքննիչ բողոք ներկայացնել» (Տեն Գ. Դուրյանի գործով 2015 թվականի հուլիսի 5-ի թիվ ՏԴ/0052/06/14 որոշման 20-րդ և 20.1-րդ կետերը), Վճռաբեկ դատարանը հարկ է համարում ընդգծել, որ քրեական հետապնդման մարմնի կողմից ներկայացված նոր նյութերը կամ փաստական տվյալները վերաքննիչ դատարանում քննարկելու արգելքը պայմանավորված է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 285-րդ հոդվածի 6-րդ մասի կարգավորումներով:

Այսպիսով, եթե քրեական հետապնդման մարմինը նոր հանգամանքներ ի հայտ գալու դեպքում հնարավորություն ունի նոր միջնորդությամբ դիմել առաջին աստիճանի դատարան, ապա պաշտպանության կողմը կալանավորման միջնորդության մեջ նշված պայմանների և հիմքերի առկայությունը կասկածի տակ դնող նոր հանգամանքներ ի հայտ գալու դեպքում, այդպիսիք ներկայացնելու համար առաջին աստիճանի դատարանում նոր վարույթ նախաձեռնելու և կալանավորման մասին որոշումը վիճարկելու հնարավորություն չունի: Եվ այս առումով պաշտպանության կողմի թերևս միակ հնարավորությունը նոր նյութերը կամ փաստական տվյալները վերաքննիչ դատարան ներկայացնելն է:

Վերոնշյալ կարգավորումը միանգամայն համահունչ է կողմերի հավասարության հիմնարար պահանջին, ինչի առնչությամբ Մարդու իրավունքների եվրոպական դատարանը (այսուհետք նաև՝ Եվրոպական դատարան) բազմիցս նշել է, որ 5-րդ հոդվածի 4-րդ կետի իմաստով ևս պահանջվում է, որպեսզի կալանքի դեմ բերված բողոքը քննելիս դատարանն ապահովի դատական քննության երաշխիքները, մասնավորապես, որ քննությունը պետք է լինի մրցակցային, և միշտ պետք է ապահովվի «կողմերի հավասարությունը» մեղադրանքի կողմի և կալանավորված անձի միջև: Դեռ ավելին՝ Եվրոպական դատարանն իրավական դիրքորոշում է արտահայտել այն մասին, որ քանի որ իրավախախտում կատարած լինելու ողջամիտ կասկածը կալանավորման օրինականության *sine qua non* պայման է, ենթադրյալ հանցանք կատարած անձը պետք է իր դեմ ներկայացված պնդումները վիճարկելու արդյունավետ հնարավորություն ունենա (*Stenu Becciev v. Moldova* գործով 2005 թվականի հոկտեմբերի 4-ի վճիռը, գանգապ թիվ, կետեր 68-72):

Եվրոպայի խորհրդի Խորհրդարանական վեհաժողովի 2077 (2015) բանաձևի 1-ին կետում ամրագրված է, որ կալանավորումը պետք է օգտագործվի բացառության կարգով, որպես վերջին միջոց, երբ այլընտրանքային խափանման միջոցները բավարար չեն քրեական վարույթի անվտանգությունն ապահովելու համար<sup>35</sup>:

<sup>35</sup> Տե՛ս՝ Resolution 2077(2015), Abuse of pretrial detention in States Parties to the European Convention on Human Rights, adopted by the Parliamentary Assembly on 1 October 2015 (34<sup>th</sup> Sitting): Հասանելի է համացանցային [https://assembly.coe.int/nw/xml/Ref/Ref-XML2HTML-en.asp?fileid=22206&lang=en&fbclid=IwAR1jDTaEqDe-L3YyceI02RNcOw-PCDeCF1JwMlnL7KADhFgaWbPoR6GA\\_4MU](https://assembly.coe.int/nw/xml/Ref/Ref-XML2HTML-en.asp?fileid=22206&lang=en&fbclid=IwAR1jDTaEqDe-L3YyceI02RNcOw-PCDeCF1JwMlnL7KADhFgaWbPoR6GA_4MU) հասցեում, վերջին մուտք՝ 03.01.2020թ., ժամը 22:57:

Ճիշտ է՝ կալանքը պետք է օգտագործվի որպես վերջին միջոց, սակայն այլընտրանքային խափանման միջոցները ևս չեն կարող կիրառվել առանց դրանց համար անհրաժեշտ և բավարար պայմանների և հիմքերի:

Հիմնավոր կասկածի հետ միաժամանակ առնվազն պետք է առկա լինեն մի շարք այլ պայմաններ խափանման միջոցի կիրառման համար: Մասնավորապես, այդպիսի պայմաններ են՝

- հարուցված քրեական գործի առկայությունը,
- համապատասխան քրեաիրավական որակմամբ անձին որպես մեղադրյալ ներգրավելու մասին որոշման առկայությունը (կասկածյալի պարագայում այն անհրաժեշտ չէ),
- ՀՀ քրեական օրենսգրքի 24-րդ հոդվածով սահմանված տարիքը,
- «հատուկ սուբյեկտի» հատկանիշների առերևույթ առկայությունը,
- որոշակի խումբ անձանց համար, օրինակ՝ պատգամավորներ, դատավորներ, անձեռնմխելիության պարտադիր հաղթահարումը (օրինակ՝ ԱԺ, ԲԴԽ կամ ՍԴ թույլտվությունը),
- ենթակայության հարցի օրենքին ակնհայտ անհամապատասխան չլինելը:

Եթե կալանքի կիրառման ժամանակ ազատությունից գրկվում է դատարանի դատավճռով դեռևս մեղավոր չճանաչված անձը, ապա այլ խափանման միջոց կիրառելու ժամանակ սահմանափակվում են Կոնվենցիայով և Սահմանադրությամբ նախատեսված իրավունքներն այնպիսի անձի, որը դեռևս մեղավոր ճանաչված չէ:

Ուստի, անձի նկատմամբ կարող են կիրառվել խափանման միջոցներ հետևյալ պայմանների և հիմքերի միաժամանակյա առկայության դեպքում.

- առկա է ողջամիտ կասկած, որ անձը կատարել է իրավախախտում, և
- առկա են հիմնավոր պատճառներ կարծելու, որ խափանման միջոցներ չկիրառելու դեպքում անձը կարող է.

ա) դիմել փախուստի, կամ

բ) կատարել նոր հանցագործություն, կամ

գ) խոչընդոտել արդարադատության իրականացմանը, կամ

դ) լուրջ վտանգ ներկայացնել հանրային կարգին:

Իրավախախտում կատարած լինելու ողջամիտ կասկածի չափանիշի վերաբերյալ Կ.Ֆ.-ն ընդդեմ Գերմանիայի (K.-F. v. Germany<sup>36</sup>) 1997 թվականի նոյեմբերի 27-ի վճռի 57-րդ կետում Մարդու իրավունքների եվրոպական դատարանը հայտնել է.

*«Ողջամիտ կասկածի չափանիշը հիմնվում է «փաստերի կամ տեղեկությունների առկայության վրա, որոնք հնարավորություն կտային անաչառ դիտորդին եզրակացնելու, որ տվյալ անձը հնարավոր է, որ կատարած լինե՞ր հանցանքը: Սակայն պարտադիր չէ, որ կասկածը հիմնավորող փաստերը բավարարեն այն նույն սանդղակին, որն անհրաժեշտ է անձի դատապարտումը կամ նրա նկատմամբ մեղադրանք առաջադրելը հիմնավորելու համար, քանի որ այդ փաստերը կարող են հայտնաբերվել ավելի ուշ քրեական գործի քննության փուլում»:*

Պետք է նշել, որ այս պայմանը պետք է առկա լինի ոչ միայն խափանման միջոցի կիրառման սկզբնական փուլում, այլ առկա լինի քննության ամբողջ ընթացքում, քանի դեռ կիրառվում և պահպանվում է խափանման միջոցը:

Ի տարբերություն կալանքի, խափանման այլ միջոցները չու-

<sup>36</sup> Sէս՝ Case of K.-F. v. Germany, 27/11/1997, 25629/94:

նեն կոնկրետ ժամանակային սահման: Սակայն ողջամիտ կասկածն այս դեպքում ևս պետք է լինի շարունակական, ինչպես և կալանքի պարագայում:

Մուրադխանյանն ընդդեմ Հայաստանի գործով<sup>37</sup> ՄԻԵԴ-ը հայտնել է.

*80. ... ողջամիտ կասկածի առկայությունը, որ ձերբակալված անձը կատարել է իրավախախտումը, հանդիսանում է sine qua non պայման՝ շարունակվող կալանքի օրինականության համար, սակայն որոշ ժամանակ անց այն արդեն բավարար չէ: Դատարանն այնուհետ պետք է որոշի, թե արդյոք դատական մարմինների կողմից փրկված այլ հիմքերը «վերաբերելի» ու «բավարար» են եղել ազատությունից զրկելու արդարացումը շարունակելու համար:*

Վահրամ Գևորգյանի վերաբերյալ՝ 2011 թվականի փետրվարի 24-ի թիվ ԵԿԴ/0678/06/10 որոշման 19-րդ և 21-րդ կետերում<sup>38</sup> ՀՀ վճռաբեկ դատարանը, անդրադառնալով «**հանցագործություն կատարած լինելու հիմնավոր կասկած**» եզրույթին, իրավական դիրքորոշում է ձևավորել այն մասին, որ.

*«**հանցագործություն կատարած լինելու հիմնավոր կասկած**» ձևակերպումը չի ենթադրում, որ մեղադրյալի մեղավորությունը հաստատված համարելու համար անհրաժեշտ է ունենալ հանցանքը փյվյալ անձի կողմից կատարված լինելու բավարար ապացույցներ, ինչն ավելի բարձր ապացուցողական չափանիշ է: ՀՀ վճռաբեկ դատարանը գտել է, որ կասկածը հիմնավոր կհամարվի նաև ենթադրյալ հանցագործության հետ այն կատարելու մեջ կասկածվող անձի օբյեկտիվ կապը հաստատող որոշա-*

<sup>37</sup> Տե՛ս՝ Case of Muradkhanyan v. Armenia, 05/06/2012, 12895/06:

<sup>38</sup> Տե՛ս՝ ՀՀ ՊՏ 2011.06.23/38(841).1:



կի տեղեկությունների ու փաստերի առկայության դեպքում, ընդ որում, անհրաժեշտ է ունենալ նաև բավարար հիմքեր եզրակացնելու, որ դեպքը, իրադարձությունը համընկնում է այն ենթադրյալ հանցանքին, որի կատարման մեջ անձը կասկածվում է: Այլ կերպ՝ կասկածը կարող է համարվել հիմնավոր միայն այն դեպքում, երբ անձի նկատմամբ կալանքը որպես խափանման միջոց ընտրելու վերաբերյալ միջնորդություն ներկայացնող պաշտոնապար անձը՝ քննիչը կամ դատախազը, կասկածվող անձի կատարած գործողությունների (անգործության) վերաբերյալ կներկայացնի **տեղեկություններ, փաստեր կամ ապացույցներ**, որոնք ուղղակիորեն կմատնանեն նրա առնչությունն իրեն վերագրվող ենթադրյալ հանցագործությանը, ինչպես նաև կհիմնավորեն, որ դեպքը, որի կատարման մեջ անձը կասկածվում է, համընկնում է իրեն վերագրվող հանցանքի դեպքին:

ՄԻԵԴ նախադեպային իրավունքի համաձայն՝ անձի նկատմամբ խափանման միջոցի (տվյալ դեպքում անձը ձերբակալվել էր) հիմնավորվածության կարևոր տարրերից են կասկածների արժանահավատությունն ու բարեխղճությունը: Այսպես.

*Մյուրեյն ընդդեմ Միացյալ Թագավորության (Murray v. The United Kingdom<sup>39</sup>)*

*61. ... եղել է արդյոք կասկածը «հիմնավորված» Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 1-ին կետի «գ» ենթակետի լույսի ներքո: Արժանահավատությունը և bona fides կասկածը հանդիսանում են հիմնավորվածության անհրաժեշտ փարրերը:*

Մեկ այլ, էդգար Եղիազարյանի վերաբերյալ թիվ ԵԱՆԴ/0017/06/16 որոշմամբ<sup>40</sup> ՀՀ վճռաբեկ դատարանը՝ հեն-

<sup>39</sup> Տե՛ս՝ Case of Murray v. The United Kingdom, 28/10/1994, 14310/88:

<sup>40</sup> Տե՛ս՝ ՀՀ ՊՏ 2017.12.01/72(1347).1:

վելով նաև Վահրամ Գևորգյանի վերաբերյալ նախադեպային որոշման վրա, իրավական դիրքորոշում է ձևավորել այն մասին, որ.

*«15. (...) - հիմնավոր կասկածի բացակայության դեպքում անձի ազատության իրավունքը սահմանափակելն ինքնին ապօրինի է,*

*- հիմնավոր կասկածը չի պահանջում կատարված արարքի մեջ մեղադրյալի մեղավորությունն ապացուցող՝ հիմնավոր կասկածից վեր ապացուցման չափանիշին համապատասխան բավարար փաստերի առկայություն, այնուամենայնիվ, «կասկածը» պետք է լինի ողջամիտ, այն պետք է հիմնված լինի օրենքով սահմանված կարգով ձեռքբերված որոշակի փաստական տվյալների վրա (որոնք կվկայեն կատարված արարքին անձի առնչությունը և դեպքի, իրադարձության համընկնումը այն հանցանքին, որի առերևույթ կատարման մեջ անձը կասկածվում /մեղադրվում/ է), իսկ դրա առկայության կամ բացակայության վերաբերյալ դատարանի հետևությունները պետք է լինեն հիմնավորված և պարճառաբանված:*

Համադրելով վկայակոչված ՀՀ վճռաբեկ դատարանի, Մարդու իրավունքների եվրոպական դատարանի արտահայտած իրավական դիրքորոշումները, անհրաժեշտ է նշել, որ ՀՀ Սահմանադրությունում, Կոնվենցիայում և ՀՀ քրեական դատավարությունում օգտագործվող «հիմնավոր կասկածի» չափանիշի առկայությունը ենթադրում է այնպիսի փաստերի կամ տեղեկատվության առկայություն, որոնք ընդունակ են օբյեկտիվ դիտորդին համոզելու, որ անձը, ում վերաբերում է խոսքը, կարող էր կատարած լինել իրավախախտումը: Միաժամանակ, այդպիսի կասկածները պետք է անպայման լինեն հիմնավորված, սակայն դա չի նշանակում, որ կատարված իրավախախտման մեջ անձի մեղքն այդ պահին պետք է ան-

վերապահորեն կամ լիովին ապացուցված լինի: Քրեական դատավարությունում կասկածի աստիճանը պայմանավորված է փաստերի ապացուցման մակարդակով, որը քրեական վարույթի տարբեր մասերում կարող է լինել տարբեր: Դրանով պայմանավորված՝ փոխվում է նաև ենթադրյալ հանցավոր արարքը կատարած անձի դատավարական վիճակը:

Միևնույն ժամանակ պետք է փաստել, որ եթե առկա չէ անձի կողմից հանցագործություն կատարած լինելու հիմնավոր կասկած, ապա ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 135-րդ հոդվածի 1-ին մասում թվարկված՝ հիմքերի առկայության հարցի քննարկումն այլևս անիմաստ է:

Անդրադառնալով խափանման միջոցների քրեադատավարական օրենսդրությամբ նախատեսված հիմքերին, անհրաժեշտ է նշել, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 135-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ խափանման միջոց կիրառելու անհրաժեշտության և կասկածյալի կամ մեղադրյալի նկատմամբ դրա տեսակն ընտրելու հարցը լուծելիս պետք է հաշվի առնվեն՝

- «1) վերագրվող արարքի բնույթը և վտանգավորության աստիճանը.
- 2) կասկածյալի կամ մեղադրյալի անձը.
- 3) տարիքը և առողջական վիճակը.
- 4) սեռը.
- 5) զբաղմունքի տեսակը.
- 6) ընտանեկան դրությունը և խնամարկյալների առկայությունը.
- 7) գույքային դրությունը.
- 8) բնակության մշտական վայրի առկայությունը.
- 9) այլ էական հանգամանքներ»:

Մեջբերված քրեադատավարական դրույթները ՀՀ վճռաբեկ դատարանը վերլուծության է ենթարկել Վահագն Պողոսյանի վերաբերյալ 2013 թվականի փետրվարի 15-ի թիվ

ԿԴԻ/0062/06/12 որոշման 13-րդ կետում և իրավական դիրքորոշում ձևավորել այն մասին, որ.

«(...) մեղադրյալին վերագրվող արարքի բնույթը և վրանգավորության աստիճանը թեև չեն կարող գնահատվել որպես կալանավորման հիմնավորվածությունը հաստատելու ինքնուրույն հիմք, այնուամենայնիվ, դրանք էական նշանակություն ունեն խափանման միջոցի տեսակն ընտրելիս, ինչպես նաև **գրավի թույլատրելիության հարցը լուծելիս**: Մեղսագրվող հանցանքի ծանրությունը և, հետևաբար, նաև ակնկալվող պատժի խստությունը հանդիսանում են քրեական վարույթն իրականացնող մարմնից թաքնվելու կամ գործի քննությանը խոչընդոտելու հավանականությունը գնահատելու կարևոր փարրեր և գործի նյութերից բխող մյուս հանգամանքների հետ միասին հնարավորություն են տալիս հիմնավորված ենթադրություններ անել անձի ազատության հիմնարար իրավունքը սահմանափակելու հիմքերի առկայության կամ բացակայության մասին: Վճարել դատարանը փաստում է, որ նույնանման իրավական դիրքորոշում բազմիցս իր նախադեպային նշանակության վճիռներում հայտնել է նաև Մարդու իրավունքների եվրոպական դատարանը (ի թիվս այլոց, տե՛ս, *Mamedova v. Russia*, 2006 թվականի հունիսի 1-ի վճիռը, գանգապ թիվ 7064/05, կետ 74, *Panchenko v. Russia* 2005 թվականի փետրվարի 8-ի վճիռը, գանգապ թիվ 45100/98, կետ 102, *Ilijkov v. Bulgaria*, 2001 թվականի հուլիսի 26-ի վճիռը, գանգապ թիվ 33977/96, կետ 81) (...)»<sup>41</sup>:

Այսպիսով, անձի նկատմամբ խափանման միջոց կարող է կիրառվել միայն այն դեպքում, երբ հիմնավոր կերպով առկա կլինեն ի թիվս վերը նշված այլ պայմանների նաև անձին մեղսագրվող հանցագործությանը նրա առնչությունը (տվյալ հան-

<sup>41</sup> Տե՛ս՝ ՀՀ ՊՏ 2013.06.19/32(972).1:

ցագործության կատարման մեջ հիմնավոր կասկածը), ինչպես նաև ՀՀ ՔԴՕ 135-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված հիմքերից որևէ մեկը կամ մի քանիսը<sup>42</sup>:

ՀՀ վճռաբեկ դատարանը 2007 թվականի օգոստոսի 30-ին կայացրած՝ Ա.Ճուղուրյանի վերաբերյալ ՎԲ-132/07 որոշմամբ այն իրավական դիրքորոշումն է արտահայտել, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 135-րդ հոդվածում նշված կալանավորման կիրառման հիմքերն ունեն կանխատեսական, մոտավոր բնույթ, քանի որ ենթադրում են ապագային վերաբերող իրադարձություններ: Ընդ որում, այդ կանխատեսող գործողություններն անհրաժեշտ է հիմնավորել քրեական գործով ձեռք բերված որոշակի նյութերով, որով էլ վերջին հաշվով որոշվում է կալանավորման կիրառման հիմնավորվածությունը:

Մեղադրյալի կողմից թույլ տրված դատավարական իրավախախտման փաստը չէ, այլ նրա կողմից անցանկալի գործողությունների կատարման հնարավորության մասին տեղեկատվության առկայությունն է, որ բավարար հիմք է հանդիսանում խափանման միջոցի ընտրության համար<sup>43</sup>:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 135-րդ հոդվածում թվարկված կասկածյալի կամ մեղադրյալի հավանական գործողությունների մասին հետևությունները պետք է հիմնված լինեն գործի նյութերից բխող ողջամիտ կասկածների կամ են-

<sup>42</sup> Տե՛ս՝ mutatis mutandis ՀՀ վճռաբեկ դատարանի Գագիկ Միքայելյանի վերաբերյալ 2009 թվականի դեկտեմբերի 18-ի թիվ ԵԱԴԴ/0085/06/09 որոշման 32-րդ կետը (ՀՀ ՊՏ 2010.04.23/16(750).1), համաձայն որի. «Անձին կալանավորելու միջնորդությունը կարող է բավարարվել այն դեպքում, երբ միջնորդությունը ներկայացրած քրեական հետապնդման մարմնին հաջողվի դատարանի համար համոզիչ հիմնավորել:

ա. անձին մեղսագրվող հանցագործությանը նրա առնչությունը /տվյալ հանցագործության կատարման մեջ հիմնավոր կասկածը/ և

բ. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 135-րդ հոդվածի 1-ին մասում սահմանված հիմքերից որևէ մեկի կամ մի քանիսի առկայությունը»:

<sup>43</sup> Տե՛ս՝ Петрухин И.Л., «Свобода личности и уголовно-процессуальное приращение». – М.: Наука, 1985, էջ 84:

թաղրությունների վրա: Դա նշանակում է, որ խափանման միջոցի կիրառման հիմքում բոլոր դեպքերում պետք է դրվեն որոշ փաստական տվյալներ:

Նույն գործով ՀՀ վճռաբեկ դատարանը փաստորեն *mutatis mutandis* սահմանել է, որ՝

1. ... խափանման միջոցը կարող է կիրառվել միայն այն դեպքում, երբ առկա են դրա հիմքերը հաստատող փաստական տվյալներ,
2. այդ փաստական տվյալների վրա հիմնված փաստարկումը, լինելով թեև անխուսափելիորեն ենթադրական, կանխատեսական բնույթի, այնուհանդերձ պետք է բավարարի «ողջամիտ ենթադրության /կասկածի/ չափանիշը»:

Ինչ վերաբերում է ՄԻԵԴ նախադեպային իրավունքին, ապա ընդհանուր բնույթի երկու հիմնական նկատառումներ, այնուամենայնիվ, կարելի է քաղել դրանից, այսինքն՝ այլընտրանքային միջոցների հիմքերը կարող են լինել քրեական և ոչ քրեական բնույթի, կամ ավելի ճիշտ է ասել՝ կապված ազատության և Կոնվենցիայով նախատեսված այլ իրավունքների հետ (օր.՝ տեղաշարժի ազատության):

Այլընտրանքային միջոցները հիմնականում դիտարկվում են ազատության իրավունքի զրկման հետ կապված (հոդված 5), մասնավորապես, քրեական մեղադրանքների համատեքստում (5-րդ հոդվածի 1-ին կետի (գ) ենթակետ): Դրանք կալանքի լավագույն փոխարինողն են, և այդ պատճառով նրանք պետք է գերադասելի լինեն: Այլ կերպ ասած, այլընտրանքները, կարծես, դառնում են մի կանոն, որը պետք է առաջին հերթին դիտարկել, և միայն եթե դրանք կիրառելի չեն, ապա կալանավորումը պետք է ստուգվի՝ իր իսկ պատճառաբանությունների հիման վրա: Այսպիսով, ցանկացած այլընտրանքային միջոցի հետ, հարաբերակցության իմաստով, կալանքը պետք է լինի բացառություն:

*Իդալովն ընդդեմ Ռուսաստանի (Idalov v. Russia)<sup>44</sup>, պարագրաֆներ 140 -141... Երբ որոշում կայացվի՝ անձը պետք է ազատ արձակվի կամ կալանավորվի, իշխանությունները պարտավոր են հաշվի առնել դատական նիստին նրա ներկայությունն ապահովելու այլընտրանքային միջոցներ կիրառելու հնարավորությունը (...): ... Այդ նպատակով նրանք պետք է, հաշվի առնելով անմեղության կանխավարկածի սկզբունքը, ուսումնասիրեն բոլոր այն փաստերը, որոնք ապացուցում կամ հակասում են հանրային շահերի առկայությանը, որոնք արդարացնում են 5-րդ հոդվածով սահմանված նորմից շեղումը, և դրանք պետք է նշեն իրենց որոշումների մեջ՝ ազատման դիմումների վերաբերյալ: Ըստ էության, սույն որոշումների մեջ նշված պատճառների և դիմումատուի կողմից իր բողոքարկումներում հաստատված փաստերի հիման վրա Դատարանը պետք է որոշի՝ արդյոք տեղի է ունեցել 5-րդ հոդվածի 3-րդ կետի (...) խախտում:*

Որոշ այլընտրանքային միջոցներ կարող են միջամտել այլ որակյալ իրավունքներին, ինչպիսիք են անձնական կյանքը կամ, ենթադրաբար, սեփականության իրավունքը գրավի դիմաց ազատ արձակվելու դեպքում և դրա հետագա բնագանձումը՝ պարետային ժամի պայմանները խախտելու համար: Այս իրավիճակներում հիմքերը տարբեր նշանակություն ունեն, և դրանք սովորաբար հետևում են եռաստիճան չափանիշին (**օրինականություն, անհրաժեշտություն, համամասնություն**), պայմանով, որ կա միջամտություն, հակառակ դեպքում օրենքը չի կիրառվում: Մասնավորապես, ուշադրության է արժանի Նադան ընդդեմ Շվեյցարիայի (Nada v. Switzerland)<sup>45</sup> գործը, որը վերաբերում էր ենթադրյալ ազատագրկմանը՝ անկլավը շրջապատող երկրով ճանապարհորդության արգելքի պատճառ-

<sup>44</sup> Տե՛ս՝ Case of Idalov v. Russia, 22/05/2012, 5826/03:

<sup>45</sup> Տե՛ս՝ Case of Nada v. Switzerland, 12/09/2012, 10593/08:

ռով: «Թալիբանի» վերաբերյալ Շվեյցարիայի դաշնային հրամանագիրը ընդունվել էր ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի մի շարք բանաձևերի համաձայն: Դա հանգեցրել էր նրան, որ դիմումատուն՝ Եգիպտոսի քաղաքացի, չէր կարողացել մուտք գործել կամ անցնել Շվեյցարիայի տարածքով, քանի որ նրա անունն ավելացվել է ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի պատժամիջոցների հանձնաժողովում ընդգրկված ցուցակի մեջ՝ Թալիբանում կասկածվող անձանց և Ալ Բաիդա («ցուցակում»): Դիմումատուն ապրում էր մոտ 1,6 քառակուսի կիլոմետր իտալական անկլավում գտնվող Կամպիոնե դը Իտալիայում, որը շրջապատված էր Տիչինոյի շվեյցարական կանտոնով և Իտալիայի մնացած մասերից առանձնանում էր լճով: Դիմումատուն պնդում էր, որ սահմանափակումների պատճառով իր համար դժվար էր դուրս գալ անկլավից և, հետևաբար, տեսնել իր ընկերներին և ընտանիքին, և դա պատճառ է դարձել, որ նա տառապում էր առողջական խնդիրների համար համապատասխան բժշկական օգնություն ստանալու անկարողության պատճառով: Այսպես.

*165. Սույն գործով Դատարանը նկատում է, որ Դաշնային դատարանը գտել է, որ վիճարկվող միջոցները հանգեցրել են դիմումատուի ազատության նշանակալի սահմանափակման (տե՛ս վերը՝ կետ 52), քանի որ նա գտնվել է չափազանց յուրահատուկ իրավիճակում՝ հաշվի առնելով Շվեյցարիայի Տիչինո կանտոնով շրջապատված Կամպիոնե դը Իտալիա անկլավի տեղադրությունը: Դատարանը հիմնավոր է համարում այդ կարծիքը: Դատարանն այն կարծիքին է, որ դիմումատուին Կամպիոնե դը Իտալիայի չափազանց սահմանափակ շրջանն առնվազն 6 տարի լքել արգելող միջոցն ավելի էր բարդացնում անկլավից դուրս բնակվող այլ անձանց, մասնավորապես, ընկերների և ընտանիքի հետ կապ պաշտպանելու իր իրավունքը (տե՛ս mutatis mutandis, Ազրավն ընդդեմ Շվեյցարիայի, թիվ 3295/06, կետ 51, և Մենգեշա Կիմֆեն ընդդեմ Շվեյ-*



ցարիայի, թիվ 24404/05, կետեր 69-72, 29 հուլիսի 2010թ. երկու վճիռներն էլ):

166. Հաշվի առնելով վերոգրյալը, Դատարանը գտնում է, որ տեղի է ունեցել միջամտություն դիմումատուի անձնական և ընտանեկան կյանքի նկատմամբ հարգանքի իրավունքին 8-րդ հոդվածի 1-ին կետի իմաստով:

229. Դիմումատուի կոնկրետ դեպքում Դատարանը նկատում է, որ սահմանափակումները նշանակալի ժամանակահատված են տևել: Այնուամենայնիվ, Դատարանը նկատում է, որ շրջանը, որում դիմումատուին թույլ չէր տրվել ուղևորվել, հանդիսանում էր երրորդ երկրի՝ Շվեյցարիայի տարածքը, և որ միջազգային իրավունքի համաձայն՝ երկիրն իրավունք ունի արգելել օտարերկրացու մուտքը (տես վերը՝ կետ 164): Ընդդրո առարկա սահմանափակումները չեն արգելում դիմումատուին ազատորեն բնակվել և տեղաշարժվել իր մշտական բնակության վայրի տարածքում, որը նա ընտրել է իր ազատ կամքով, ապրել և իրականացնել իր գործունեությունը: Դատարանը համարում է, որ այդ հանգամանքներում նրա գործը կտրուկ կերպով տարբերվում է (վերը նշված) Գուզարդիի գործի փաստական հանգամանքներից, և որ դիմումատուի նկատմամբ կիրառված արգելքը չի հանգեցնում Կոնվենցիայի 5-րդ հոդվածով սահմանված հարցերին:

230. Դատարանն այնուհետև ընդունում է, որ Կամպիոնն դը Լոպիլիան փոքր տարածք է: Այնուամենայնիվ, Դատարանը նկատում է, որ դիմումատուն բառի բուն իմաստով զրկված չի եղել ազատությունից և ոչ էլ փաստացիորեն գտնվել է տնային կալանքի տակ. նրան պարզապես արգելվել է նշված տարածք մուտքը

և փարանցումը և այդ միջոցի արդյունքում նա հնարավորություն չի ունեցել լքել անկլավը:

231. Ի հավելումն, Դափարանը նկատում է, որ դիմումատուին Դափարանում չի վիճարկել Շվեյցարիայի կառավարության պնդումը, որ նա չի եղել Շվեյցարիայի իշխանությունների հսկողության ներքո և պարտավոր չի եղել պարբերաբար հաշվառվել ոստիկանությունում (ի փարբերություն վերը նշված Գուգարդիի գործի՝ կեպ 95): Ավելին չի թվում նաև, որ սահմանափակված է եղել նրա՝ այցելուներ՝ ընտանիքի անդամներ, բժիշկներ, իրավաբաններ, ընդունելու ազատությունը (նույն տեղում):

232. Վերջապես Դափարանն ընդգծում է, որ պատժամիջոցների ռեժիմը թույլ էր տալիս դիմումատուին դիմել մուտքի և փարանցման արտոնությունների համար, և որ այդ արտոնություններն իսկապես փրվել են նրան երկու անգամ, սակայն նա չի օգտվել դրանցից:

233. Հաշվի առնելով սույն գործի բոլոր հանգամանքները և նախադեպային իրավունքին համապատասխան Դափարանը, Դաշնային դափարանի նման (տե՛ս վերը՝ կեպ 48) գտնում է, որ Շվեյցարիա մուտքը և փարանցումն արգելող միջոցը դիմումատուին «չի զրկել ազատությունից» 5-րդ հոդվածի 1-ին կետի իմաստով:

Ի վերջո, բացահայտելով հիմքերն ու հիմնավորումները, պետք է նշել, որ յուրաքանչյուր այլընտրանքային միջոց ունի իր հատուկ հիմքերը: Դրանք կարգավորվում են ներպետական դատավարական օրենսդրությամբ, և ոչ ՄԻԵԴ-ը, ոչ էլ ԵԽՊԻ որևէ այլ մարմին չեն առաջարկում հատուկ ընդհանուր հիմքեր: **Հիմնական սկզբունքն այն է, որ որքան ավելի խիստ լինի մարդու իրավունքները սահմանափակող միջոցը, այնքան ավելի ուժեղ պետք է լինի դրա հիմնավորումը:** Եթե այլընտ-

րանքային միջոցները պակաս զսպող են, քան կալանավորումը, ապա ավելի քիչ հավանական է, որ դրանք խախտում են անձանց իրավունքները: Այսպիսով, ՄԻԵԴ-ը հստակեցնում է կալանքի հիմքերը, բայց ոչ ազատությունից զրկելու հետ չկապված այլընտրանքային խափանման միջոցների հիմքերը:

ՄԻԵԴ-ը՝ 5-րդ հոդվածի 3-րդ կետի վերաբերյալ իր նախադեպային իրավունքի մեջ, հղում է կատարում հետևյալ հիմքերի վրա, որոնց առկայության պարագայում կարող է արդարացվել կալանքի կիրառումը, և որոնց վրա ազգային դատարանները պետք է կառուցեն իրենց հիմնավորումները.

- (ա) փախուստի վտանգը (Պանչենկոն ընդդեմ Ռուսաստանի (*Panchenko v. Russia*<sup>46</sup>), պարագրաֆ 106);
- (բ) դատավարության խոչընդոտը (Բեսիևն ընդդեմ Մոլդովա (*Becciev v. Moldova*<sup>47</sup>), պարագրաֆ 59);
- (գ) իրավախախտումների կրկնություն (Քլոտն ընդդեմ Բելգիայի (*Clooth v. Belgium*<sup>48</sup>), պարագրաֆ 44);
- (դ) հասարակական կարգի պահպանում (Լեթելիեն ընդդեմ Ֆրանսիա (*Letellier v. France*<sup>49</sup>), պարագրաֆ 51):

Այս հիմքերն, ըստ էության, կիրառելի են միայն քրեական դատավարությունում, որոնց համար հիմնականում կիրարկվում է 5-րդ հոդվածի 3-րդ կետը: Ըստ էության, 5-րդ հոդվածի 3-րդ կետը մեկ ամբողջություն է կազմում 1-ին կետի «գ» ենթակետի հետ, որոնց նպատակը հանգում է հետևյալին՝ ձերբակալված կամ կալանավորված անձանց ազատ արձակում այն բոլոր դեպքերում, երբ այլևս ազատությունից զրկումը կորցրել է իր հիմնավորվածությունը (Աքվիլինան ընդդեմ Մալթայի (*Aquilina v. Malta* [GC]<sup>50</sup>), պարագրաֆ 47):

<sup>46</sup> Տե՛ս՝ Case of Panchenko v. Russia, 08/02/2005, 45100/98:

<sup>47</sup> Տե՛ս՝ Case of Becciev v. Moldova, 04/10/2005, 9190/03:

<sup>48</sup> Տե՛ս՝ Case of Clooth v. Belgium, 05/03/1998, 12718/87:

<sup>49</sup> Տե՛ս՝ Case of Letellier v. France, 26/06/1991, 12369/86:

<sup>50</sup> Տե՛ս՝ Case of Aquilina v. Malta [GC], 29/04/1999, 25642/94:

Վերը նշված հիմքերից որևէ մեկի առկայությունն ինքնաբերաբար այլընտրանքային միջոցը չի դարձնում ոչ կիրառելի, բայց լուրջ հիմնավորում է պահանջում, թե ինչու է կալանքն ավելի լավ տարբերակ, քան այլընտրանքային միջոցը: Այլ կերպ ասած, վերը նշված հիմքերից որևէ մեկը կարող է հիմք հանդիսանալ այլընտրանքային միջոցի կիրառման համար, պայմանով, որ այդ միջոցն ավելի լավ է, քան կալանավորումը: Անձը կարող է ենթարկվել ազատագրկման հետ չկապված այլընտրանքային միջոցի՝ դատավարությանն իր ներկայությունն ապահովելու համար, կամ դատական գործընթացները խոչընդոտելու որևէ փորձ չանելու համար կամ նոր իրավախախտում չկատարելու կամ էլ հասարակությունից կամ տուժողներից պաշտպանվելու համար, որոնք ցանկանում են վրեժխնդիր լինել:

Այստեղից բխում է այն հիմնական սկզբունքը, որի համաձայն՝ որոշելիս անձը պետք է ազատ արձակվի թե կալանավորվի, դատարանները պարտավոր են քննության առնել այլընտրանքային միջոցների կիրառման հնարավորությունը՝ մեղադրյալների դատարան ներկայանալու մասով (Իդալովն ընդդեմ Ռուսաստանի (Idalov v. Russia [MC]<sup>51</sup>), պարագրաֆ 140):

Նմանատիպ սկզբունքը (2006) 13 Հանձնարարականում ձևակերպված է հետևյալ կերպ.

*«Հաշվի առնելով ինչպես անմեղության կանխավարկածը, այնպես էլ ազատության օգտին կանխավարկածը, իրավախախտման մեջ կասկածվող անձանց կալանքի տակ պահելը պետք է լինի բացառություն, քան կանոն ...»<sup>52</sup>:*

<sup>51</sup> Տե՛ս՝ Case of Idalov v. Russia, 22/05/2012, 5826/03:

<sup>52</sup> Տե՛ս՝ Recommendation of the Committee of Ministers to member states on the use of remand in custody, the conditions in which it takes place and the provision of safeguards against abuse (Adopted by the Committee of Ministers on 27 September 2006 at the 974<sup>th</sup> meeting of the Ministers' Deputies), available at [https://search.coe.int/cm/Pages/result\\_details.aspx?ObjectID=09000016805d743f](https://search.coe.int/cm/Pages/result_details.aspx?ObjectID=09000016805d743f), 24.12.2019թ., ժամը 21:52:

Այնուամենայնիվ, միջազգային իրավունքում և ՄԻԵԴ նախադեպային իրավունքի մեջ այդ հիմքերը կողիֆիկացնելը դժվար է, եթե ոչ անհնար: Դա կրկին պայմանավորված է այլընտրանքային միջոցների լայն բազմազանությամբ և ձևերով, որոնցից յուրաքանչյուրն ունի իր ընթացակարգերն ու պայմանները: Ավելին, դրանք միշտ համարվում են ազատությունից զրկմանը հակադրվող հիմքեր: Այսինքն՝ միջազգային ստանդարտների իմաստով, ազգային իշխանությունները (այսինքն՝ դատավորը, դատախազը կամ այդպիսի լիազորություններով օժտված ցանկացած այլ պաշտոնատար անձ) պետք է համոզիչ հիմքեր փնտրեն անձին ազատությունից զրկելու համար, իսկ այլընտրանքային միջոցն ուղղված է այդ հիմքերը հերքելու համար, եթե այդպիսիք կան: Այլընտրանքային միջոցի միակ ողջամիտ հիմքը այսպես ասած նախնական կալանքի կամ որևէ այլ խափանման միջոցի չկիրառելիությունն է: Այստեղ խոսքն իհարկե չի վերաբերում հիմքերի իսպառ բացակայության մասին, այլ դրանց նվազ ռիսկայնության մասին: Այսինքն, այնպիսի չափի մասին, որ հնարավոր լինի նվազագույնի հասցնել այլընտրանքային միջոցներով:

Խափանման միջոցների պայմանների և հիմքերի վերլուծությունից կարելի է բխեցնել մի քանի սկզբունքներ, որոնք կազմում են դրանց էությունն ու հիմնական բովանդակությունը: Մասնավորապես, պետք է նշել, որ Կոնվենցիան նպատակ ուներ կրճատելու որոշակի հիմնարար իրավունքների և ազատությունների կամայական սահմանափակումները: Դա, մասնավորապես, վերաբերում է ազատության իրավունքին, բայց այն պակաս կարևոր չէ այլ իրավունքների և ազատությունների իրականացման մեջ: Համապատասխանաբար, Կոնվենցիայի համաձայն կիրառվող սկզբունքները, որոնք սահմանափակում են իշխանությունների հայեցողական լիազորությունները այդ իրավունքներին միջամտելու համար, կարող են, *mutatis mutandis*, տարածվել այլընտրանքային միջոցների վրա:

*Առաջին և գլխավոր սկզբունքը*, որը պետք է դիտարկել այլ-ընտրանքային միջոցների կիրառման մեջ, **ազատության կանխավարկածն է**: Թեև այս սկզբունքը վերաբերելի է կալանավորմանն այն իմաստով, որ այն սահմանափակում է կալանքի կիրառումը և դրա արդյունքում խրախուսում այլընտրանքային միջոցների կիրառումը, ուստի այս սկզբունքը չպետք է անտեսվի այլընտրանքային միջոցների կիրառման մեջ:

Սկզբունքը բավականին տեսական է, քանի որ այն կարելի է ենթադրել միայն ՄԻԵԴ-ի մեկնաբանություններից: Դրանցից կարելի է բխեցնել, որ գոյություն ունի այդպիսի կանխավարկած: ՄԻԵԴ-ը նշել է, որ ցանկացած միջոց, որը ենթադրում է ազատությունից զրկում, մասնավորապես, քրեական հետապնդման համատեքստում, պետք է լինի բացառիկ և միայն այն դեպքում, երբ այլ, ավելի մեղմ միջոց չի կարող կիրառվել:

*Նախևառաջ ազգային դատական մարմինները պետք է ապահովեն, որ մեղադրյալի նախնական կալանքը չգերազանցի ողջամիտ ժամկետը: Այդ նպատակով նրանք պետք է ուսումնասիրեն բոլոր այն հանգամանքները, որոնք կողմ կամ դեմ են իրական հանրային շահի պահանջներին, որն արդարացնում է անմեղության կանխավարկածի սկզբունքը, պատշաճ հաշվի առնելով անձնական ազատության հարգանքի կանոնից նահանջը, և դրանք փաստարկվեն ... իրենց որոշումների մեջ (Թոթն ընդդեմ Ավստրիայի (Toth v. Austria)<sup>53</sup>, պարագրաֆ 67):*

Այլ կերպ ասած, ազատությունից ցանկացած զրկում պետք է լինի.

- բացառիկ,
- օբյեկտիվորեն հիմնավորված,
- մանրազնին ուսումնասիրված և
- ոչ ավելի, քան բացարձակապես անհրաժեշտ:

<sup>53</sup> Տե՛ս՝ Case of Toth v. Austria, 12/12/1991, 11894/85:

Ազատությունից զրկվելու համաձայնությունն իրականում ենթադրում է այն, որ **մարդը պետք է համարվի ազատ**, նույնիսկ այն դեպքերում, երբ նա հրաժարվում է այդ իրավունքից: Այս իմաստով ՄԻԵԴ-ը նշել է, որ ազատությունից զրկվելու մասին համաձայնությունն անձին չի զրկում 5-րդ հոդվածի երաշխիքներից:

119. ... ազատության իրավունքը չափազանց կարևոր է ժողովրդավարական հասարակությունում անձի համար, որպեսզի չօգտվի կոնվենցիայի պաշտպանությունից որևէ պատճառով, որով ինքնուրույն համաձայնել էր անազատության մեջ պահվելուն (տես *Դե Ուիլդը, Օոմսը և Վերսիպս ընդդեմ Բելգիայի*, (*De Wilde, Ooms and Versyp v. Belgium*)<sup>54</sup>,) պարագրաֆներ 64,65), հատկապես երբ չի վիճարկվում, որ այդ անձն ունակ չէ համաձայնելու կամ չհամաձայնելու առաջարկված գործողությանը (*Ստանևն ընդդեմ Բուլղարիայի (Stanev v. Bulgaria)*<sup>55</sup>:

Մեկ այլ գործով.

108. ... դիմումատուին ինքն է պահանջել իր տեղակայումը տնային կալանքի տակ (տես վերևում 82-րդ կետը), Դատարանը նշում է, որ տվյալ դեպքում առկա է հարկադրանքի որոշակի տարր: Մասնավորապես, գործի հանգամանքները պարզ ցույց են տալիս, որ դիմումատուի տնային կալանքի տակ գտնվելու ցանկությունը եղել է այն պատճառով, որ նա չցանկացավ լինել դատարաններում այն բանից հետո, երբ դատարանները բազմիցս մերժել էին նրա *habeas corpus* միջնորդությունները: Նաև պարզվում է, որ դիմումատուի առողջական վիճակը զգալիորեն վատթարացել էր այն ընթացքում, երբ գտնվել էր

<sup>54</sup> Տե՛ս՝ Case of De Wilde, Ooms and Versyp v. Belgium, 18/06/1971, 2832/66 2835/66 2899/66:

<sup>55</sup> Տե՛ս՝ Case of Stanev v. Bulgaria,

ընտրված կալանքի տակ, և որ նա պատրաստ էր զիջումների գնալ այդ ամենին վերջ տալու համար (...): Սա հասկանալի պահվածք է այն մարդու համար, ով նախկինում ունեցել է սրտի կաթված և գլխուղեղի կաթված, և ով տեսնում էր, որ նրա առողջությունը վատանում է Դատարանի կարծիքով, դիմումատուին գտնվում էր հստակ ճնշման տակ, երբ նրան տնային կալանքի տակ էին պահում: Նման պայմաններում չի կարելի ողջամտորեն ակնկալել, որ դիմումատուին կվիճարկեր դատարանի կարգադրությունները տնային կալանք կիրառելու մասին:

109. Հաշվի առնելով վերը նշվածը, Դատարանը պատրաստ չէ համաձայնել այն բանի հետ, որ Դիմումատուի վերաբերմունքն իր տնային կալանքին և այդ միջոցը բողոքարկելու հնարավորության բացթողումը հավասարազոր է նրա ազատության իրավունքից հրաժարմանը (Բուզադժին ընդդեմ Մոլդովայի Հանրապետության (*Buzadji v. the Republic of Moldova* [GC]<sup>56</sup>),):

Ազատության իրավունքի ցանկացած սահմանափակում պետք է մեկնաբանվի շատ նեղ, և, որպես այդպիսին, դատավորը պետք է ելնի այն ենթադրությունից, որ անձը պետք է ազատ լինի: Դատավորը պետք է համարի ազատ արձակումը որպես կանոն, իսկ ազատությունից զրկումը՝ կալանքը, որպես բացառություն:

Ավելին, իշխանությունները պետք է քննարկեն ավելի քիչ ներազդող միջոցները, քան կալանավորումն է (Ամբրուշկովիչն ընդդեմ Լեհաստանի (*Ambruszkiewicz v. Poland*)<sup>57</sup>, պարագրաֆ 32):

<sup>56</sup> Տե՛ս՝ Case of *Buzadji v. the Republic of Moldova* [GC], 05/07/2016, 23755/07”

<sup>57</sup> Տե՛ս՝ Case of *Ambruszkiewicz v. Poland*, 04/05/2006, 38797/03:



Ըստ այդմ՝ ազատության կանխավարկածից բխող *երկրորդ կարևոր սկզբունքն դրանք հաշվի առնելու պարտականությունն է*: Այս պարտականությունը մանրակրկիտ քննարկվել է կալանքին վերաբերող գրեթե բոլոր գործերում, և դրա հիմնական սկզբունքն այն է, որ այլընտրանքային միջոցների փաստարկը չպետք է արհամարհվի պարզ և ձևականորեն՝ ելնելով կալանքի հիմքերի հիմնավորվածությունից: Այլընտրանքային միջոց փնտրող կալանավորը չպետք է կրի ապացույցների բեռը, որը հաստատում է, որ նա չի թաքնվի: ՄԻԵԴ-ը բազմիցս պնդել է, որ. «ապացուցման բեռի փոխանցումը կալանավորին այդպիսի հարցերով հավասարազոր է Կոնվենցիայի 5-րդ հոդվածի կանոնի չեղարկմանը, մի դրույթի, որը կալանքը դարձնում է բացառիկ նահանջ ազատության իրավունքից, և որը նույն կալանքը թույլատրվում է միայն սպառիչ թվարկված և խստորեն սահմանված դեպքերում»: Ստորև բերված քաղվածքն այս սկզբունքի առավել պատկերավոր դրսևորումն է, և, հետևաբար.

*Ժերեբինն ընդդեմ Ռուսաստանի (Zherebin v. Russia<sup>58</sup>) գործը վերաբերում է այլընտրանքային միջոցները պատշաճ կերպով քննարկելուց հրաժարվելուն: Դիմումատու կալանավորվել էր կազմակերպված խմբի կողմից կատարված հասարակական կարգի կոպիտ խախտման կասկածանքով: Նա կալանավորվել է հետաքննության և դրան հաջորդող դատաքննության ընթացքում՝ ավելի քան յոթ ամիս ժամկետով: Ներպետական դատարանները չեն դիտարկել այլընտրանքային «կանխարգելիչ միջոցները»՝ ըստ էության հենվելով մեղադրանքի լրջության վրա և ապացուցման բեռը փոխանցելով դիմումատուին: Այս հիմնավորումը, չնայած հիմքերի վկայությանը, թեև «տեղին» էր, սակայն չէր կարող համարվել «բավարար»՝ իր տևողությունն արդարացնելու համար:*

<sup>58</sup> Տե՛ս՝ Case of Zherebin v. Russia, 24/03/2016, 51445/09:

Ցանկացած այլընտրանքային միջոց պետք է լինի **օրինական**, այսինքն՝ հիմնվի ներպետական օրենսդրության վրա՝ հաշվի առնելով այդ օրենքի որակը: Այլընտրանքային միջոցներ կիրառելու համար չպետք է դրվեն ընդհանրական սահմանափակումներ: Հակառակ դեպքում այն կորցնում է իր նշանակությունը այլընտրանք դառնալու համար: Մասնավորապես, Ռանցլեն ընդդեմ Կիպրոսի և Ռուսաստանի (Rantsev v. Cyprus and Russia<sup>59</sup>) գործի համաձայն՝ դիմումատուի դուստրը, ով ճանաչվել էր որպես անօրինական ներգաղթյալ, իր գործատուի կողմից տեղափոխվել է ոստիկանության կենտրոնական բաժին: Ոստիկանությունը կապ է հաստատել ներգաղթի մարմինների հետ, որոնք ցուցումներ են տվել, որ գործատուն, որը պատասխանատու էր նրա համար, պետք է նրան վերցնի և բերի ներգաղթի գրասենյակ: Մենեջերը նրան տարել էր մի մասնավոր շինություն, որտեղ նա նույնպես մնացել էր: Այնուհետև աղջկա դին գտել էին այդ մասնավոր բնակարանից ներքև գտնվող փողոցում: Այս գործով ՄԻԵԴ-ը՝

*323. Ամրագրելով, որ ազատությունից զրկելը պետք է լինի «օրենքով նախատեսված կարգի համաձայն», 5-րդ հոդվածի 1-ին կետով պահանջվում է, որպեսզի ձերբակալությունը կամ կալանքը նախևառաջ ներպետական օրենսդրությամբ հիմնավորված լինի: Կիպրոսի կառավարությունը չի մատնանշել ազատությունից զրկելու որևէ իրավական հիմք, սակայն կարելի է ենթադրել, որ ոստիկանությունում օրհորդ Ռանցլայի նախնական կալանքն իրականացվել էր, որպեսզի քննեին, թե արդյոք նա չէր կատարել ներգաղթին վերաբերող պահանջները, սակայն հավաստիանալով, որ նրա անունը համապատասխան ցուցակում չկա, Կիպրոսի իշխանությունները որևէ բացատրություն չէին ներկայացրել ոստիկանական բաժանմունքից օրհորդ Ռանցլայի հեռանալու թույլտվություն չտալու որոշման պատճառների ու իրավական*

<sup>59</sup> Տե՛ս՝ Case of Rantsev v. Cyprus and Russia, 07/01/2010, 25965/04:

հիմքերի վերաբերյալ, այլ նրան հանձնել էին Մ.Ա.-ի խնամքին: Ինչպես նշված է վերևում, ոստիկանությունը գտել էր, որ օրհորդ Ռանցևան հարբածության նշաններ չի ունեցել և ինքն իր կամ ուրիշների նկատմամբ որևէ սպառնալիք չի ներկայացրել /տե՛ս վերը նշված 20-րդ և 320-րդ կետերը/: Որևէ նշան չկա և չի էլ ասվել, որ օրհորդ Ռանցևան խնդրել էր, որ Մ.Ա.-ն գար ու իրեն այնտեղից փաներ: Ոստիկանական մարմինների որոշումն օրհորդ Ռանցևային մինչև Մ.Ա.-ի գալը պահելու, ապա նրան Մ.Ա.-ին հանձնելու մասին ներպետական օրենսդրությամբ որևէ հիմք չուներ:

324. ... Դատարանը գտնում է, որ այս գործով ազատությունից զրկելը և կամայական էր, և անօրինական:

325. Հեղափար, Դատարանը եզրակացնում է, որ օրհորդ Ռանցևային անօրինական ու կամայականորեն պահելու պատճառով տեղի է ունեցել 5-րդ հոդվածի 1-ին կետի խախտում:

Այլընտրանքային միջոցների պայմանները պետք է լինեն այնքան ազատ, որքան հնարավոր է և ունենան նվազագույն ձևականություններ, և չլինեն այլընտրանք փնտրող անձանց համար ավելորդ բեռ:

Ինչպես և կալանավորման դեպքում, ցանկացած այլընտրանքային միջոց պետք է ապահովվի պատշաճ հիմնավորումներով և պատճառաբանություններով: Այս պատճառաբանությունը կարող է կատարվել՝ նշելով կալանքի անհնարինությունը կամ ուղղակիորեն հղում կատարելով այլընտրանքային միջոցների հիմքերին: Սա իշխանությունների պարտականությունն է 5-րդ հոդվածի 3-րդ կետով, որը սահմանում է ոչ միայն «**ողջամիտ ժամկետում դատաքննություն կատարելու կամ մինչև դատավարությունն ազատ արձակելու իրավունքը**», այլ նաև նախատեսում է, որ «**ազատ արձակումը կարող է պայմանավորված լինել դատավարությանը**

**ներկայանալու երաշխիքներով»** (Ջաբլոնսկին ընդդեմ Լեհաստանի (Jablonski v. Poland)<sup>60</sup>, պարագրաֆ 83): Ըստ այդմ՝ կալանքի այլընտրանքային տարբերակները հաշվի չառնելը միշտ որակվում է որպես այդ դրույթի խախտում: Այլընտրանքային միջոցների վերաբերյալ որևէ պատճառաբանության բացակայությունը նույնպես կարելի է համարել որպես Կոնվենցիան չպահպանելու դրսևորում: Ազատ արձակելու կողմ և դեմ փաստարկները չպետք է լինեն **«ընդհանուր և վերացական»** (տես Բլուֆեն ընդդեմ Բելգիայի (Clooth v. Belgium)<sup>61</sup>, պարագրաֆ 44):

ՄԻԵԴ-ը շարունակել է վեր հանել ազգային դատարանների կողմից իրենց որոշումները չպատճառաբանելու դեպքերը՝ պայմանավորված այլընտրանքային միջոցների անտեսմամբ և արդյունքում կալանքներ կիրառելով կամ դրանց ժամկետների երկարացնելով: Նման իրավիճակը կարող է հանգեցնել կալանքի լիակատար անօրինականության: Օրինակ, առաջարկվում էր, որ այլընտրանքային միջոցներ չկիրառելը (Թուրկան ընդդեմ Մոլդովայի (Turcan v. Moldova)<sup>62</sup>, պարագրաֆ 52; Օփրեան ընդդեմ Մոլդովայի (Oprea v. Moldova), պարագրաֆ 45) կարող է դիտարկվել որպես անօրինական՝ 5-րդ հոդվածի 1-ին կետի իմաստով, այլ ոչ թե նշված դրույթի 3-րդ կետով: Ամեն դեպքում, անկախ Կոնվենցիային համապատասխան դասակարգումից, երբ դատարանները կալանավորման փոխարեն հստակ չեն քննարկում այլընտրանքային միջոցները, դա միշտ նշանակում է լուրջ խախտում:

*Օփրեան ընդդեմ Մոլդովայի (Oprea v. Moldova)<sup>63</sup>, պարագրաֆ 46 ... Դատարաններն իրենց որոշումներում սահմանափակվել են օրենքով նախատեսված կալանքի պաշտոնական հիմքերի վերացական և ֆորմալ կրկնու-*

<sup>60</sup> Տե՛ս՝ Case of *Jablonski v. Poland*, 21/12/2000, 33492/96:

<sup>61</sup> Տե՛ս՝ Case of *Clooth v. Belgium*, 12/12/1991, 12718/87:

<sup>62</sup> Տե՛ս՝ Case of *Turcan v. Moldova*, 27/11/2007, 10809/06:

<sup>63</sup> Տե՛ս՝ Case of *Oprea v. Moldova*, 21/12/2010, 38055/06:

թյամբ: Այս հիմքերը վկայակոչվել են առանց որևէ փորձի ցույց տալու, թե ինչպես են նրանք վերաբերել դիմումատուի գործին կամ կոնկրետ փնջ փաստերի վրա են հենվել դատարանները՝ դիմողի ներկայացրած ռիսկերը գնահատելիս: **Ավելին, չի կատարվել այլընտրանքային կանխարգելիչ միջոցների վերաբերյալ որևէ քննություն, մասնավորապես, տնային կալանքը կամ հատուկ մասնագիտացված բժշկական հաստատությունում կալանավորումը նույնպես կարող էր սահմանափակել դիմումատուի կողմից վկաների վրա ազդելու ցանկացած փորձ: Կարևոր է նաև նշել, որ երբեք չի նշվել, որ այն ժամանակահատվածում, երբ նրա նկատմամբ կիրառված է եղել ազատազրկման հետ չկապված խափանման միջոց, դիմումատուն փորձել է թաքնվել կամ որևէ կերպ միջամտել քննությանը:** Դատարանները դա հաշվի չեն առել, այնպես, ինչպես և նրանք բավարար ուշադրություն չեն դարձրել նրա առողջական վիճակին, ինչը նույնպես կարևոր էր ձերբակալության խափանման միջոց կիրառելու որոշման համար:

Ի վերջո, այլընտրանքային միջոցներին վերաբերող *հաջորդ սկզբունքը* վերաբերում է **դրանց պատշաճ իրավական դասակարգմանը**՝ ազատության իրավունքի, տեղաշարժի ազատության կամ այլ որակյալ իրավունքների ներքո: Կախված դրանց դասակարգումից, այլընտրանքային միջոցն օգտագործելու է տարբեր հիմքեր, հիմնավորումներ և միջամտության համաչափության գնահատման չափանիշ.

Ինչպես և շատ այլ ոլորտներում, Դատարանն իր նախադեպային իրավունքում պնդում է, որ ազատությունից զրկելու հասկացությունն ինքնավար մեկնաբանություն ունի: Կոնվենցիայի համակարգված ընթերցումը ցույց է տալիս, որ տեղաշարժման ազատության սահմանափակումները չեն ընկնում 5-րդ հոդվածի տակ, այլ ընկնում են թիվ 4 Արձանագրության 2-րդ հոդվածի 1-ին մասի

տակ: Այնուամենայնիվ, տեղաշարժի սահմանափակման և ազատությունից զրկման միջև փարբերությունը պարզապես **աստիճանի կամ ինտենսիվության** և ոչ թե բնության կամ երևույթի մեջ է: Որպեսզի որոշվի, թե արդյոք ինչ-որ մեկն «ազատությունից զրկվել է» 5-րդ հոդվածի իմաստով, ելակետը պետք է լինի կոնկրետ իրավիճակը, և պետք է հաշվի առնել այնպիսի չափանիշների մի ամբողջ շարք, ինչպիսիք են տեսակը, տևողությունը, հետևանքն ու ձևը: Տվյալ միջոցն իրականացնելու մասին (տես Գուզարդին ընդդեմ Իտալիայի (*Guzzardi v. Italy*<sup>64</sup>), պարագրաֆներ 92-93):

...

Նադան ընդդեմ Շվեյցարիայի (*Nada v. Switzerland*<sup>65</sup>); ... հաշվի առնելով այդ խափանման միջոցի լրջությունը, Դատարանը համարեց, որ դիմումատուի մեկ փոքր տարածքում պահելը ազատությունից զրկում չէ և, հետևաբար, չի ընկնում 5-րդ հոդվածի տակ: Այդ դեպքում որևէ խախտում չի հայտնաբերվել՝ կապված այդպիսի սահմանափակման (Շվեյցարիայի կանտոնից չհեռանալու սահմանափակումները ներքին օրենսդրության համաձայն՝ իրավական հիմք չունեին, բայց դրանք կատարվել են ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի բանաձևի անմիջական կիրառմամբ) օրինականության հետ: Այնուամենայնիվ, նույն միջոցը դասակարգվել է որպես մասնավոր կյանքի իրավունքի անհարկի միջամտություն, քանի որ դիմումատուն չի կարողացել այցելել բժշկի և հանդիպել իր ընկերների հետ:

<sup>64</sup> Տե՛ս՝ Case of *Guzzardi v. Italy*, 06/11/1980, 7367/76:

<sup>65</sup> Տե՛ս՝ Case of *Nada v. Switzerland*, 12/09/2012, 10593/08:

## ՄՈԴՈՒԼ 2.

### ԳՐԱՎ

**Դաս 3. Կալանքի հիմնական այլընտրանքային խափանման միջոցի էությունը: ՄԻԵԴ-ի նախադեպային իրավունքը և ներպետական օրենսդրությունը:**

**Դաս 4. Կիրառման հիմնական կանոնները և կարգը**

**Դաս 3. Կալանքի հիմնական այլընտրանքային խափանման միջոցի էությունը: ՄԻԵԴ-ի նախադեպային իրավունքը և ներպետական օրենսդրությունը**

Գրավը՝ ոչ միայն գույքային բնույթի խափանման միջոց է<sup>66</sup>, այլ նաև հոգեբանական ներազդման, գերբնական ներազդման բնույթի խափանման միջոցի նկատմամբ, ինչպես նաև միակ խափանման միջոցն է, որ չունի ինքնուրույն բնույթ և կարող է կիրառվել միայն որպես կալանքի համար այլընտրանք: Այսինքն, քանի դեռ դատարանի կողմից չի հաստատվել կալանքի համար բավարար պայմանների և հիմքի կամ հիմքերի առկայությունը, գրավը որպես այդպիսին չի էլ կարող կիրառվել:

<sup>66</sup> Տե՛ս՝ Հայաստանի Հանրապետության քրեական դատավարություն: Մաս 1. Հեղ. խումբ: Հ 247, գիտ. խմբ. Ա. Ղամբարյան, 2-րդ լրամշակված հրատ., Եր. «Լուսաբաց հրատարակչատուն», 2017, էջ 532, Тутьнин И.Б., Теоретические основы уголовно-процессуального принуждения имущественного характера: монография. – М.: Юрлитинформ, 2017, էջ 114, Трунов Н.Л., Трунова Л.К., «Меры пресечения в уголовном процессе». – СПб.: Издательство «Юридический центр Пресс», 2003. (Measures of restraint in criminal procedure) էջ. 183-184:

Անհրաժեշտ ենք համարում նշել, որ ՀՀ արդարադատության նախարարության կողմից շրջանառության մեջ դրված Նախագծի համաձայն՝ գրավը կալանքի այլընտրանքային ոչ ինքնուրույն խափանման միջոցից վերածվելու է լիարժեք խափանման միջոցի, որը կարող է կիրառվել ինչպես մեղադրյալի, այնպես էլ նույնիսկ կասկածյալի նկատմամբ, և ոչ միայն դատարանի, այլ նաև վարույթն իրականացնող այլ մարմինների կողմից<sup>67</sup>: Սակայն, հաշվի առնելով այն հանգամանքը, որ սույն դասընթացի նպատակը դատավորների և դատական ծառայողների կալանքին այլընտրանք հանդիսացող խափանման միջոցների կիրառական ներուժի ներկայացումն է, ուստի այս թեմայի ժամանակ ևս առավել մեծ ուշադրություն կդարձվի գործող օրենսդրությանը, առկա ՄԻԵԴ-ի և ՀՀ վճռաբեկ դատարանի նախադեպային իրավունքին:

Գրավի կիրառման հետ կապված հարաբերությունները կարգավորող՝ ՔԴՕ «Խափանման միջոցները» վերտառությամբ 18-րդ գլխում ամփոփված նորմերի համակարգված վերլուծությունը վկայում է, որ.

- գրավը՝ որպես կալանքին այլընտրանքային միջոց, կիրառվում է **միայն դատարանի որոշմամբ** (ՔԴՕ 136-րդ հոդվածի 2-րդ մաս), ինչը դատավարական երաշխիք է մեղադրյալի իրավունքների արդյունավետ իրացման ու պաշտպանության համար: Դատարանի հիշյալ որոշումը կարող է կայացվել կալանավորման մասին, կամ կալանքի տակ պահելու ժամկետը երկարաձգելու, (...) (ՔԴՕ 137-րդ հոդվածի 4-րդ մաս, 139-րդ հոդվածի 2-րդ և 4-րդ մասեր),
- դատարանում գրավի կիրառման **միջնորդությամբ** կարող են հանդես գալ **քննիչը, դատախազը, պաշտպանական կողմը**, ինչպես նաև այդպիսի նախաձեռնություն կարող է դրսևորել **դատարանը** (ՔԴՕ 136-րդ հոդվածի 2-րդ մաս):

<sup>67</sup> Հասանելի է համացանցային <https://www.e-draft.am/projects/2074/about> հասցեում, վերջին մուտք՝ 15.01.2020թ., ժամը 22:59:



Այսպիսով, գրավի նշանակման ու կիրառման որոշում կայացնելու բացառիկ իրավունքը, ըստ ՔԴՕ վերոհիշյալ իրավակարգավորումների, պատկանում է **դատարանին**, որը բխում է քրեական գործով մինչդատական վարույթում այդ մարմնի իրավական կարգավիճակի առանձնահատկություններից (ՔԴՕ 41-րդ հոդված), իսկ դատարանում գրավի՝ որպես դատավարական հարկադրանքի միջոցի նշանակման ու կիրառման նախաձեռնությամբ (միջնորդությամբ) կարող են հանդես գալ **դատարանը, քննիչը, դատախազը** (քրեական գործով վարույթ իրականացնող մարմիններ), ինչպես նաև պաշտպանական կողմը, որպիսի իրավակարգավորումը նույնպես բխում է այդ մարմինների և պաշտպանական կողմի դատավարական կարգավիճակից (ՔԴՕ 53, 54, 55 և 65-րդ հոդվածներ)<sup>68</sup>:

Միևնույն ժամանակ պետք է նշել, որ կալանավորման և գրավի ձևով դատարանի ընտրած խափանման միջոցը կարող է փոփոխվել և վերացվել դատարանի կողմից, իսկ քրեական գործով մինչդատական վարույթում՝ նաև դատախազի կողմից: Իսկ գրավի ձևով դատարանի ընտրած խափանման միջոցը մինչդատական վարույթում կարող է փոփոխվել և վերացվել նաև քննիչի կողմից՝ դատախազի համաձայնությամբ<sup>69</sup>:

<sup>68</sup> ՍԴՈ-1387 (ՀՀ ՊՏ 2017.12.01/72(1347).1), 8-րդ կետ: Անհրաժեշտ է նաև նշել, որ նույն որոշման նույն կետի համաձայն. «Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ կալանքը գրավով փոխարինելու՝ եվրոպական պետությունների օրենսդրական փորձի ուսումնասիրումը նույնպես վկայում է, որ քրեական վարույթի շրջանակներում գրավի ինստիտուտն ունի կիրառման հստակ չափանիշներ, մասնավորապես՝ գրավի կիրառման մասին որոշումը կայացնում է դատարանը, մեղադրյալը կալանքից անհապաղ ազատ է արձակվում գրավի մուծման վերաբերյալ ապացույցների առկայության պայմաններում (օրինակ՝ Հունգարիա, Խորվաթիա, Լատվիա և այլն), ինչը վկայում է ոչ միայն մինչդատական վարույթի նկատմամբ դատական հսկողության արդյունավետության, այլև դատավարության այդ փուլում անձանց իրավունքների երաշխավորված պաշտպանությունն ապահովելու անհրաժեշտության մասին»:

<sup>69</sup> Տե՛ս՝ ՔԴՕ 151-րդ հոդվածի 3-րդ մաս:

Գրավի նպատակի մասին խոսելիս Սահմանադրական դատարանը փաստել է, որ. «Խափանման միջոցի, այդ թվում և՛ գրավի, կիրառման իրավական նպատակը հենց օրենքով սահմանված որոշակի պարտականության կատարումն ապահովելն է: Օրենսգրքի 135-րդ հոդվածի 2-րդ մասում ուղղակիորեն սահմանված է կալանավորման այլընտրանքային խափանման միջոցի (այսինքն՝ նաև գրավի) կիրառման հիմքը, համաձայն որի՝ մեղադրյալի նկատմամբ այն կարող է կիրառվել միայն այնպիսի դեպքերում, երբ «...բավարար հիմքեր կան ենթադրելու, որ մեղադրյալը կարող է կատարել սույն հոդվածի առաջին մասով նախատեսված գործողությունները», այսինքն՝ թաքնվել քրեական վարույթն իրականացնող մարմնից, չխոչընդոտել գործի քննությանը, քրեական դատավարությանը մասնակցող անձանց վրա անօրինական ազդեցություն գործադրել, քրեական վարույթն իրականացնող մարմնի կանչով առանց հարգելի պատճառների չներկայանալ և այլն»<sup>70</sup>:

Այսինքն, գրավը քրեական վարույթում, նախ և առաջ, խափանման միջոց է, որի կիրառմամբ մեղադրյալին ազատության իրավունքից զրկումը փոխարինվում է այդ իրավունքի սահմանափակմամբ, որը հանցագործության համար մեղադրվողին կալանքից ազատելու համար դրամի, արժեթղթերի, այլ արժեքների (դատարանի թույլտվության դեպքում՝ նաև անշարժ գույքի տեսքով) ձևով դատարանի դեպոզիտ մեկ կամ մի քանի անձանց կատարած ներդրումն է՝ քրեական վարույթն իրականացնող մարմնի տրամադրության տակ մեղադրյալի գտնվելն ապահովելու նպատակով (ՔԴՕ 143-րդ հոդվածի 1-ին մաս): **«Քրեական վարույթն իրականացնող մարմնի տրամադրության տակ մեղադրյալի գտնվելն»** ինքնին ենթադրում է, որ քրեական վարույթի արդյունավետ իրականացման նպատակով անձը պարտավոր է գրավի, որպես խափանման միջոցի, կիրառման ողջ ժամանակահատվածում անվերապահ կատարել վարույթն իրականացնող մարմնի օրինական պահանջները:

<sup>70</sup> Տե՛ս՝ ՍԴՈ-1387, 7-րդ կետ:

րը (չթաքնվել վարույթ իրականացնող մարմնից, առանց թույլտվության չմեկնել այլ տեղանք (ՔԴՕ 143-րդ հոդվածի 6-րդ մաս) և այլն): Եվ եթե մեղադրյալը խախտել է քրեական վարույթն իրականացնող մարմնի «տրամադրության տակ գտնվելու»՝ օրենքով նախատեսված իր պարտականությունը, ապա գրավի առարկա հանդիսացող գույքը կարող է օտարվել հօգուտ պետության (ՔԴՕ 143-րդ հոդվածի 6-րդ մաս), կամ գրավը՝ որպես խափանման միջոց, կարող է փոխարինվել կալանքով (ՔԴՕ 143-րդ հոդվածի 8-րդ մաս): Այսինքն՝ անձը, ում անձնական ազատության իրավունքը (ՀՀ Սահմանադրության 27-րդ հոդվածի սահմանադրաիրավական իմաստով) մինչ այդ **սահմանափակված էր**, կարող է **զրկվել** անձնական ազատության իրավունքից<sup>71</sup>:

Չարգացնելով իր դիրքորոշումները գրավի ինստիտուտի որպես, ըստ գործող քրեադատավարական օրենսդրության, ոչ ինքնուրույն խափանման միջոցի վերաբերյալ Սահմանադրական դատարանն իր թիվ ՍԴՈ-1480 որոշման մեջ նշել է, որ **գրավը ոչ թե կալանավորման այլընտրանքն է, այլ բնութագրվում է որպես ոչ ինքնուրույն, կալանավորումից կախյալ խափանման միջոց, որի ոչ միայն կիրառումը, այլև նույնիսկ քննարկումը հնարավոր են միայն համապատասխան դատական ակտի կայացման դեպքում:**

Շարունակելով միտքը, Սահմանադրական դատարանը փաստել է, որ ՔԴՕ նախատեսված խափանման միջոցների աստիճանակարգությունում կալանավորումն ամենախիստն է և միակը, որն անձին զրկում է անձնական ազատությունից: Միաժամանակ, վերահաստատել է իր դիրքորոշումն առ այն, որ կալանավորումը՝ որպես խափանման միջոցներից մեկը, անձի նկատմամբ կարող է ընտրվել միայն այն ժամանակ, երբ այլ խափանման միջոցները թույլ չեն տալիս հասնել հետապնդվող իրավաչափ նպատակներին: **Ուստի կալանավորումը՝ որպես քրեադատավարական հարկադրանքի վերջին՝ բա-**

<sup>71</sup> Տե՛ս՝ ՍԴՈ-1387, 7-րդ կետ:

ցառիկ միջոց (ultima ratio), միշտ և պարտադիր կերպով պետք է այլընտրանք ունենա: Քրեադատավարական օրենքում ամրագրվելիք այդ այլընտրանքը պետք է քրեական վարույթն իրականացնող մարմնին փաստացի հնարավորություն ընձեռի և իրավաբանական պարտականություն դնի նրա վրա՝ ի սկզբանե ընտրություն կատարել տարբեր խափանման միջոցների միջև՝ իրավաչափ նպատակին հասնելու համար ընտրելով առավել պիտանի միջոցը: Մինևույն ժամանակ այն պետք է նաև պարտադիր կարգով լինի անձի հիմնական իրավունքները և ազատություններն առավել նվազ սահմանափակողը, այսինքն՝ անհրաժեշտ միջոցը: Ուստի, Սահմանադրության տեսանկյունից անթույլատրելի է խափանման միջոցներից մեկի կիրառման հարցը քննարկել արդեն իսկ դրանցից մյուսին, ընդամին՝ ամենախիստ միջոցին նախապատվություն տալուց հետո:

Ամփոփելով իր վերլուծությունը և հաշվի առնելով անձի անձնական ազատության իրավունքին **կալանավորման առավել ինտենսիվ միջամտող բնույթը**, Սահմանադրական դատարանը գտել է, որ վարույթն իրականացնող մարմինը յուրաքանչյուր դեպքում այն ընտրելուց առաջ պարտավոր է **պատշաճ իրավական ընթացակարգի շրջանակներում հիմնավորված կերպով բացառել մնացած բոլոր**, ավելի մեղմ **խափանման միջոցների ընտրության** հնարավորությունը: Մինչդեռ ՔԴՕ-ով նախատեսված «այլընտրանքի» պայմաններում դատարանը որոշակի հիմքերով սկզբում կիրառում է առավել խիստ խափանման միջոցը, իսկ կարճ ժամանակ անց իր կողմից հաստատված փաստերի և ընդունված հիմնավորումների առկայությամբ այն իրավասու է փոխարինել ավելի մեղմով:

Անձի անձնական ազատության իրավունքի սահմանադրաիրավական բովանդակությունից հետևում է, որ օրենքով նախատեսված ցանկացած խափանման միջոց, որը կապված չէ անձին ազատությունից զրկելու հետ, պետք է դիտարկվի որպես այլընտրանք կալանավորմանը: Սահմանադրական դատարանը գտնում է, որ «այլընտրանք» հաս-

կացության սահմանադրաիրավական ընկալումն իրավասու մարմնին պետք է ոչ միայն այս կամ այն խափանման միջոցն անմիջական ընտրելու հնարավորություն վերապահի, այլև կանխորոշի անձի անձնական ազատությանը միջամտող առավել ինտենսիվ, ամենախիստ խափանման միջոց հանդիսացող կալանավորման՝ որպես դատավարական ծայրահեղ միջոցի կիրառումը միայն այն դեպքում, երբ սպառվել են անձի պատշաճ վարքագիծը քրեադատավարական ներգործության այլ միջոցներով ապահովելու բոլոր հնարավորությունները»<sup>72</sup>:

Ոչ միայն ներպետական, այլ նաև միջազգային պայմանագրերն են սահմանում այլընտրանքային միջոցի կիրառման կարևորության մասին: Այսպես, «Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին» միջազգային դաշնագրի 9-րդ հոդվածի 3-րդ մասը սահմանում է, որ.

*«3. Քրեական մեղադրանքով ձերբակալված կամ կալանավորված յուրաքանչյուր անձ շտապ կարգով հասցվում է դատավորի կամ օրենքով՝ դատական իշխանություն իրականացնելու համար լիազորված պաշտոնատար անձի մոտ և ունի ողջամիտ ժամկետում դատական քննության կամ ազատ արձակվելու իրավունք: **Դատական քննության սպասող անձին կալանքի տակ պահելն ընդհանուր կանոն չպետք է լինի, բայց ազատ արձակվելը կարող է կախման մեջ դրվել դատարան ներկայանալու, ցանկացած փուլում դատական քննության և, անհրաժեշտության դեպքում, դատավճիռն ի կատար ածելու համար ներկայանալու երաշխիքներ տրամադրելը**»<sup>73</sup>:*

Գրավի վերաբերյալ ՄԻԵԴ նախադեպային իրավունքի մեջ կարևոր տեղ է զբաղեցնում անձի ազատ արձակելու իրա-

<sup>72</sup> Տե՛ս՝ ՍԴՈ-1480, 7.4-րդ կետ:

<sup>73</sup> Տե՛ս՝ <http://www.irtek.am/views/act.aspx?aid=37346>, 05.01.2020, ժամը 19:39:

վունքի վկայակոչումը: Մասնավորապես, Լատելիերն ընդդեմ Ֆրանսիայի (Letellier v. France<sup>74</sup>) գործում նշվել է.

*46. Երբ շարունակական կալանքի միակ պատճառը մտավախությունն է, որ մեղադրյալը կթաքնվի, և դրանով իսկ հետագայում կխուսափի արդարադատությունից, դատական նիստերին ներկայանալուց նա պետք է ազատ արձակվի, եթե նա ի վիճակի է ներկայացնելու համապատասխան երաշխիքներ, որ նա չի թաքնվի, այդպիսի երաշխիքի օրինակ է գրավի մուծումը:*

Գրավի վերաբերյալ ՄԻԵԴ նախադեպային իրավունքը, բացի վերը նկարագրված ընդհանուր սկզբունքներից, սահմանում է, որ այդ միջոցը պետք է լինի լայնորեն և ողջամտորեն մատչելի: Լինելով օրենքով խստորեն կարգավորվող, ՄԻԵԴ-ը պահանջում է, որ ազգային օրենսդրությունն ինքնին լինի ողջամիտ և համաչափ: Ազգային օրենսդրությունը չպետք է դնի անհամաչափ սահմանափակումներ քաղաքացու վրա, որպեսզի վերջինս գրավի դիմաց ազատ արձակվի: Այսինքն՝ դիմումատուն պետք է իրական հնարավորություն ունենա դրանք իրականացնել: Ավելին, գրավը կիրառելու համար չպետք է լինի ընդհանրական սահմանափակում՝ կախված քրեական մեղադրանքի լրջությունից: Այս իմաստով կարևոր ենք համարում ներկայացնելու հետևյալ գործերը:

Մասնավորապես, Էս.Բի.Սի-ն ընդդեմ Միացյալ Թագավորության (S.B.C. v. the United Kingdom<sup>75</sup>) գործում նշվել է, որ դատական քննությանը սպասելու ընթացքում ազատ արձակվելու իրավունքը չի կարող նախօրոք արգելվել օրենսդիր մարմնի կողմից: ՄԻԵԴ-ն արձանագրել էր 5-րդ հոդվածի 3-րդ կետի խախտում՝ գրավի ինքնաբերաբար մերժման պատճառով: 1994 թ.-ի Քրեական արդարադատության և հասարակական կարգի մասին օրենքի 25-րդ կետը նախատեսում է, որ գրավի

<sup>74</sup> Տե՛ս՝ Case of Letellier v. France, 26/06/1991, 12369/86:

<sup>75</sup> Տե՛ս՝ Case of S.B.C. v. the United Kingdom, 19/06/2001, 39360/98:

դիմաց անձը չի կարող ազատվել, եթե նա մեղադրվում է սպանության, սպանության փորձի, բռնաբարության կամ բռնաբարության փորձի համար, եթե նա նախկինում դատապարտվել էր այդ հանցագործություններից որևէ մեկի համար: Դիմումատուն նախկինում դատապարտվել էր սպանության համար, և պատիժը կրելուց հետո նրան ձերբակալել և մեղադրանք էին առաջադրել, *inter alia*, իր երկու դստերը բռնաբարելու համար: Մագիստրատուրայի դատարանը մերժել էր գրավի դիմաց ազատումն այն հիմքով, որ վտանգ կա, որ նա կարող է կատարել այլ հանցագործություններ կամ անօրինական ազդեցություն ունենալ վկաների վրա: Դատարանը ոչ մի դեպքում իրավունք չունի կիրառելու գրավ: Դիմումատուն հետագայում արդարացվել էր:

Բոիչենկոն ընդդեմ Մոլդովայի (*Boicenco v. Moldova*<sup>76</sup>) գործում կրկնում է նույն հիմնավորումը, որ դատավարական օրենքը պետք է թույլ տա գրավ և այլընտրանքային միջոցներ՝ անկախ մեղադրանքների ծանրությունից: ՄԻԵԴ-ն արձանագրել է 5-րդ հոդվածի 3-րդ կետի խախտում՝ նշելով, որ Մոլդովայի քրեական դատավարության օրենսգրքի 191-րդ կետով նախատեսված չէ ազատ արձակման հնարավորություն դատավարության ընթացքում այն անձանց համար, ովքեր մեղադրվում են դիտավորյալ հանցագործությունների համար, որոնք պատժվում են ավելի քան 10 տարի ժամկետով ազատազրկմամբ: Դիմումատուին մեղադրանք է առաջադրվել նման հանցագործության համար: Այնուամենայնիվ, ազգային դատարանները, դիմումատուին կալանավորելիս և այն երկարաձգելիս, պարզապես վկայակոչել էին համապատասխան օրենքը՝ չբացահայտելով այն պատճառները, թե ինչու են նրանք հիմնավորված համարել այն պնդումները, որ դիմումատուն կարող է խոչընդոտել դատավարությանը, թաքնվել կամ կրկին հանցանք կատարել: Ոչ էլ փորձել էին հերքել դիմումատուի պաշտպանության կողմից արած փաստարկները: Դիմումատուին

<sup>76</sup> St'u` Case of Boicenco v. Moldova, 11/07/2006, 41088/05:

կալանքի տակ պահելու և դրա երկարաձգման վերաբերյալ նրանց որոշումները «հիմնավոր և բավարար» չէին:

ՀՀ ՔԴՕ 143-րդ հոդվածի 4-րդ մասը սահմանել է գրավի նվազագույն չափը<sup>77</sup> ոչ մեծ և միջին ծանրության հանցագործությունների համար: Մասնավորապես,

*4. Դատարանի նշանակած գրավի չափը չի կարող պակաս լինել՝*

*1) նվազագույն աշխատավարձի երկուհարյուրապատիկի չափից՝ ոչ մեծ ծանրության հանցանք կատարելու մեջ մեղադրվելիս.*

*2) նվազագույն աշխատավարձի հինգհարյուրապատիկի չափից՝ միջին ծանրության հանցանք կատարելու մեջ մեղադրվելիս:*

Այս իրավակարգավորումներով, ըստ էության օրենսդրական մակարդակով արգելք դնելով ծանր և առանձնապես ծանր հանցագործությունների համար գրավի կիրառման հնարավորության վրա: Սակայն հաշվի առնելով վավերացված միջազգային պայմանագրերը, որոնք գերակա են օրենքների նկատմամբ<sup>78</sup>, ինչպես նաև ձևավորված թե ՄԻԵԴ և թե ներպետական նախադեպային իրավունքը, այսօր դատարանները չեն կիրառում նշված սահմանափակումը, սակայն ՀՀ ՔԴՕ-ում դեռևս օրենսդրական փոփոխություններ տեղի չեն ունեցել:

Միաժամանակ, ՀՀ վճռաբեկ դատարանն իր Տարոն Հակոբյանի վերաբերյալ 2007 թվականի հուլիսի 7-ի թիվ ՎԲ115/07 որոշմամբ<sup>79</sup> անդրադառնալով գրավի կիրառման հնարավորու-

<sup>77</sup> Պետք է նշել, որ Նախագծով առաջարկվում է գրավի չափ սահմանել նվազագույն աշխատավարձի երկուհարյուրապատիկի չափից ոչ պակաս գումարը բոլոր տեսակի հանցագործությունների համար: Հասանելի է համացանցային <https://www.e-draft.am/projects/2074/about> հասցեում, վերջին մուտք՝ 15.01.2020թ., ժամը 22:59:

<sup>78</sup> Տես՝ ՀՀ Սահմանադրության 5-րդ հոդվածի 3-րդ մասը:

<sup>79</sup> Տես՝ ՀՀ ՊՏ 2007.09.03/44(568):



թյանը ծանր և առանձնապես ծանր հանցագործությունների համար մեղադրվող անձի նկատմամբ գրավի կիրառման հնարավորությանը, նշել է, որ.

**3.1. Ծանր կամ առանձնապես ծանր հանցագործությունների համար մեղադրվող անձանց գրավի կիրառմամբ կալանքից ազատ արձակելու հնարավորությունը.**

(...)

Համաձայն «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» Եվրոպական կոնվենցիայի 5-րդ հոդվածի 3-րդ մասի՝ «Սույն հոդվածի 1-ին մասի (c) ենթակետի դրույթներին համապատասխան՝ ձերբակալված կամ կալանավորված յուրաքանչյուր ոք անհապաղ տարվում է դատավորի կամ այլ պաշտոնատար անձի մոտ, ով օրենքով լիազորված է իրականացնելու դատական իշխանություն, և ունի ողջամիտ ժամկետում դատաքննության իրավունք կամ մինչև դատաքննությունն ազատ արձակվելու իրավունք: Ազատ արձակումը կարող է պայմանավորվել դատաքննության ներկայանալու երաշխիքներով»:

Խնդրո առարկա հարցի կապակցությամբ Մարդու իրավունքների Եվրոպական դատարանի մտերցումը հստակ արտահայտված է սույն գործին փաստական և իրավական առումներով նման Կաբալերոն ընդդեմ Միացյալ Թագավորության (*Caballero v. THE UNITED KINGDOM*, Application no. 32819/96, 08.02.2000 թ.) և Էս Բի Սին ընդդեմ Միացյալ Թագավորության (*S.B.C. v. THE UNITED KINGDOM*, Application no. 39360/98, 19.06.2001 թ.) գործերով վճիռներում: Դրանցում Եվրոպական դատարանը դիրքորոշում է հայտնել, որ այն պայմաններում, երբ գրավի կիրառմամբ անձին ազատ արձակելու հարցի քննարկման հնարավորությունը որոշակի գործերով ի սկզբանե արգելված է օրենսդրությամբ, ապա մինչդատարան

կան վարույթի ժամանակ կալանքի հարցի լուծման նկատմամբ դատական վերահսկողության նման սահմանափակումը Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 3-րդ մասի խախտում է (տե՛ս Կաբալերոյի գործով վճռի § 18-21-ը, Էս Բի Սիի գործով վճռի § 22-ը և § 23-ը):

Այսպիսով, «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» Եվրոպական կոնվենցիայի 5-րդ հոդվածի 3-րդ մասում ամրագրված իրավանորմից բխում է, որ անձի կալանավորման հարցը լուծելիս ՀՀ իրավասու դատարանները լիազորված են քննարկել դատաքննությանը մեղադրյալի ներկայանալը երաշխավորող այլընտրանքային միջոցների կիրառման հնարավորությունը, իսկ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 143-րդ հոդվածի 4-րդ մասի հիման վրա այդպիսի միջոց է գրավը:

Ըստ ՀՀ Սահմանադրության 6-րդ հոդվածի 4-րդ մասի՝ միջազգային պայմանագրերը ՀՀ իրավական համակարգի բաղկացուցիչ մասն են: Եթե վավերացված միջազգային պայմանագրում սահմանվում են այլ նորմեր, քան նախատեսված են օրենքներով, ապա կիրառվում են այդ նորմերը:

Հեղևաբար, «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» Եվրոպական կոնվենցիայի 5-րդ հոդվածի 3-րդ մասում ամրագրված իրավանորմը ՀՀ իրավունքի բաղկացուցիչ մասն է, և ՀՀ իրավասու դատարանները, անկախ անձին մեղսագրված հանցագործության ծանրության աստիճանից, լիազորված են քննարկել մեղադրյալին գրավի կիրառմամբ կալանքից ազատ արձակելու հնարավորության հարցը:

Եվ, վերջապես, իրավական սահմանափակումների նմանատիպ խնդիր է քննարկվել նաև Փիրուզյան ընդդեմ Հայաս-

տանի (*Piruzyan v. Armenia*<sup>80</sup>) գործում, որտեղ ենթադրյալ հանցագործության ծանրության պատճառով դիմումատուն հնարավորություն չէր ունեցել գրավի դիմաց ազատ արձակվելու: ՄԻԵԴ-ը կրկնեց, որ կասկածյալին կալանավորելու կամ ազատ արձակելու որոշում կայացնելիս իշխանությունները պարտավոր են այլընտրանքային միջոցներ նախատեսել դատաքննությանը նրա մասնակցության ապահովման համար: Դատարանը նախկինում Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 3-րդ կետի խախտումներ է հայտնաբերել մի շարք գործերով, որոնցում գրավ կիրառելու միջնորդությունը ինքնաբերաբար կերպով մերժվել է ներպետական օրենսդրության ուժով: Սույն գործով Դիմումատուի պահանջները մերժվել են այն հիմքով, որ Քրեական դատավարության օրենսգրքի 143-րդ հոդվածի 1-ին կետը բացառում է ծանր կամ առանձնապես ծանր հանցագործությունների դեպքում գրավով ազատելը: Դիմումատուի գրավի կիրառման վերաբերյալ միջնորդության այդպիսի ինքնաբերաբար մերժումը, առանց նրա կալանքի կոնկրետ հանգամանքների դատական հսկողության, չի համապատասխանում 5-րդ հոդվածի 3-րդ կետի երաշխիքներին:

Այսպիսով, դատական պրակտիկան ներկայումս ընթանում է վերը նշված նախադեպային իրավունքի ճանապարհով: Այսինքն, գրավի կիրառելիության հարց քննարկվում է ոչ միայն ոչ մեծ կամ միջին ծանրության հանցագործությունների կատարման մեջ մեղադրվող անձանց պարագայում, այլ նաև ծանր և առանձնապես ծանր հանցագործությունների: Ավելին, դատական պրակտիկան ցույց է տալիս, որ կալանքի միջնորդություններ ներկայացվում են հատկապես այն անձանց նկատմամբ, որոնց մեղսագրվում են ծանր և առանձնապես ծանր հանցագործություններ, ուստի և դրանց նկատմամբ գրավի կիրառման անթույլատրելիությունն այս խափանման միջոցը կդարձնե իրականության մեջ նվազ կիրառելի և անարդյունավետ:

<sup>80</sup> Տե՛ս՝ Case of Piruzyan v. Armenia, 26/06/2012, 33376/07:

#### **Դաս 4. Գրավի կիրառման հիմնական կանոնները և կարգը**

Գործող օրենսդրության իրավակարգավորումների և դրա հիման վրա ձևավորված դատական պրակտիկայի համաձայն՝ գրավը կարող է կիրառվել մեղադրյալի նկատմամբ կալանքի միջնորդության կամ կալանքի երկարացման միջնորդության քննության արդյունքում կալանքը որպես խափանման միջոց ընտրելիս կամ դրա ժամկետը երկարացնելիս կամ այդպիսի որոշումներ արդեն իսկ կայացված լինելու դեպքերում:

ՀՀ վճռաբեկ դատարանն իր Դ.Ալիխանյանի վերաբերյալ 2012 թվականի դեկտեմբերի 6-ի թիվ ԵԱԲԴ/0138/06/12 որոշման<sup>81</sup> մեջ նշել է, որ.

*13. Ձարգացնելով սույն որոշման նախորդ կետում մեջբերված իրավական դիրքորոշումները՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ մեղադրյալի նկատմամբ կիրառված խափանման միջոց կալանավորումը գրավով փոխարինելու թույլատրելիության կամ անթույլատրելիության վերաբերյալ իր եզրահանգումները դատարանը պետք է հիմնավորի գործի նյութերում առկա փաստական տվյալներով: Այլ խոսքով՝ անհրաժեշտ է կիրառել դատական ակտի պատճառաբանվածության առավել բարձր չափանիշ՝ կալանքը գրավով փոխարինելը մերժելու մասին դատարանի հետևությունները հիմնավորել գործի փաստական տվյալներով և ոչ թե բավարարվել ՀՀ քրեադատական օրենքով նախատեսված հիմքերի պարզ շարադրանքով:*

*16. Անդրադառնալով մեղադրյալ Դ.Ալիխանյանի նկատմամբ գրավի կիրառումն անթույլատրելի ճանաչելու վերաբերյալ Առաջին արյանի դատարանի եզրահանգմանն առ այն, որ առկա է հիմնավոր կասկած, որ մեղադրյալը կատարել է իրեն վերագրվող հանցանքը՝*

<sup>81</sup> Տե՛ս՝ ՀՀ ՊՏ 2013.04.03/17(957):

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Վ. Գևորգյանի գործով որոշման համաձայն՝ «(...) Կալանավորման պայմանների թվում հատուկ կարևորություն ունի անձի կողմից իրեն վերագրվող հանցագործությունը կատարած լինելու հիմնավոր կասկածը, որի առկայությունը հավաստելուց հետո միայն հնարավոր է անդրադառնալ կալանավորման հիմքերին: Ավելին, եթե առկա չէ անձի կողմից հանցագործություն կատարած լինելու հիմնավոր կասկած, ապա ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 135-րդ հոդվածի 1-ին մասում թվարկված՝ կալանավորման հիմքերի առկայության հարցի քննարկումն այլևս անիմաստ է (...):» (տես Վահրամ Ռուդիկի Գևորգյանի գործով Վճռաբեկ դատարանի 2011 թվականի փետրվարի 24-ի թիվ ԵԿԴ/0678/06/10 որոշման 19-րդ կետը): Վ. Գևորգյանի գործով որոշման մեջ ձևավորված իրավական դիրքորոշումը համադրելով սույն որոշման 12-րդ կետում մեջբերված՝ Ա. Ավետիսյանի գործով որոշման մեջ առկա այն դիրքորոշման հետ, որ «(...) գրավի կիրառման անթույլատրելիության հարցը պետք է քննարկվի ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 135-րդ հոդվածի համարեքստում, (...)»՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ անձի նկատմամբ կալանքը որպես խափանման միջոց կարող է ընտրվել կալանավորման պայմանի, այն է՝ հանցագործություն կատարած լինելու վերաբերյալ հիմնավոր կասկածի առկայության դեպքում: Այլ խոսքով՝ եթե առկա չէ հիմնավոր կասկած այն մասին, որ **անձը հանցանք է կատարել, նրա նկատմամբ կալանքը որպես խափանման միջոց չի կարող կիրառվել, հետևաբար՝ չի կարող քննարկման առարկա դառնալ նաև գրավի՝ որպես կալանավորման այլընտրանքային խափանման միջոցի կիրառման թույլատրելիության հարցը:** Հետևաբար, հանցագործություն կատարած լինելու վե-

*րաբերյալ հիմնավոր կասկածը չի կարող հիմք հանդիսանալ անձին կալանքից գրավով ազատ արձակելն անթույլատրելի ճանաչելու համար:*

ՀՀ ՔԴՕ 137-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ կալանավորման մասին որոշում կայացնելու հետ միաժամանակ դատարանը լուծում է մեղադրյալին գրավով կալանքից ազատելու հնարավորության հարցը և, ճանաչելով նման ազատման հնարավորությունը, նշանակում է գրավի գումարը: Հետագայում դատարանը կարող է պաշտպանության կողմի միջնորդությամբ վերանայել գրավի անթույլատրելիության կամ գրավի գումարի մասին որոշումը<sup>82</sup>:

Այսինքն, դատարանի կողմից կարևոր է գրավի կոնկրետ գումարի չափի որոշումը, քանի որ այն ունի խիստ անհատական և կոնկրետ գործին ու անձին բնորոշող բազմաթիվ հանգամանքները հաշվի առնելու անհրաժեշտություն: Խնդիրն այստեղ հատկապես կայանում է նրանում, որ դատարանը սովորաբար զրկված է այն ամբողջ տեղեկատվությունից, որը վերաբերում է մեղադրյալին, որպեսզի կարողանա ճիշտ և թիրախային որո-

<sup>82</sup> Պետք է նշել, որ Նախագծով փորձ է արվել այլ իրավակարգավորում նախատեսել՝ կարևորելով այլընտրանքային բոլոր խափանման միջոցների կիրառման հնարավորության բացակայության հարցի պարզումից հետո միայն կալանքի կիրառումը: Մասնավորապես, 137-րդ հոդվածի 4-րդ մասը նախատեսվում է շարադրել հետևյալ խմբագրությամբ. «4. Մինչև անձի նկատմամբ կալանավորումը որպես խափանման միջոց ընտրելը դատարանը լուծում է մեղադրյալի նկատմամբ այլ խափանման միջոցների կիրառմամբ սույն օրենսգրքի 134-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված նպատակներին հասնելու հնարավորության հարցը»: Նույնական իրավակարգավորում է նախատեսված նաև ՀՀ ՔԴՕ 139-րդ հոդվածի 2-րդ մասի շարադրանքում. «2. Մինչև մեղադրյալին կալանքի տակ պահելու ժամկետը երկարացնելը դատարանը լուծում է մեղադրյալի նկատմամբ այլ խափանման միջոցների կիրառմամբ սույն օրենսգրքի 134-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված նպատակներին հասնելու հնարավորության հարցը:» Հասանելի է համացանցային <https://www.e-draft.am/projects/2074/about> հասցեում, վերջին մուտք՝ 15.01.2020թ., ժամը 22:59:

շում կայացնել գրավի մասին: Քանի որ որոշակի գումարը, որ կարող էր նվազեցնել ոչ իրավաչափ վարքագծի ռիսկերը մեկ անձի (պայմանավորված տվյալ անձի գույքային դրույթամբ, այդ թվում՝ ակտիվների և պասիվների առկայությամբ, դրանց հասանելիության աստիճանով, ընտանեկան կարգավիճակով, այսինքն՝ համասեփականատեր լինելու, ամուսնացած կամ ամուսալուծված լինելու և այլ հանգամանքներով) դեպքում, կարող է արդյունավետ չլինել մեկ այլ անձի դեպքում:

Վերոնշյալ իրավակարգավորումների համաձայն՝ պաշտպանական կողմը կարող է միջնորդություն ներկայացնել գրավի գումարը վերանայելու խնդրանքով՝ ենթադրելի է, որ այն դեպքերում, երբ դատարանի կողմից սահմանված գրավի չափը մեղադրյալի կողմից հաղթահարելի չէ՝ պայմանավորված մեղադրյալի գույքային դրույթամբ: Միաժամանակ, ՔԴՕ իրավական նորմերի վերլուծությունը ցույց է տալիս, որ որևէ ժամկետային սահմանափակում նման միջնորդությունների ներկայացման համար նախատեսված չէ: Մասնավորապես, ՀՀ վճռաբեկ դատարանն իր Արամ Հակոբյանի վերաբերյալ 2016 թվականի հունիսի 24-ի թիվ ԵԿԴ/0192/11/15 որոշմամբ<sup>83</sup> նշել է, որ.

15. (...)

*«Հ քրեական դատավարության օրենսգրքի 142-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Մեղադրյալը քրեական վարույթն իրականացնող համապատասխան մարմնի որոշման հիման վրա կալանքից ենթակա է ազատման, եթե՝*

(...)

*6) մուծված է անձին կալանքից ազատելու համար դատարանի կողմից նշանակված գրավը»:*

<sup>83</sup> Տե՛ս՝ ՀՀ ՊՏ 2017.01.09/1(1276):

Մեջբերված նորմերի վերլուծությունից հետևում է, որ գրավը՝ որպես խափանման միջոցի տեսակ, կարող է նշանակվել միայն այն դեպքում, երբ առկա է կալանքը որպես խափանման միջոց ընտրելու մասին դատարանի որոշում: Այլ կերպ՝ գրավը կալանավորման այլընտրանքային խափանման միջոց է և ենթակա է կիրառման բացառապես այն դեպքում, երբ դատարանը կայացրել է մեղադրյալին կալանավորելու մասին որոշում:

Միևնույն ժամանակ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 142-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված նորմի հիմքով անձին կալանքից ազատելու պահից, ըստ էության, դադարում են գործել կալանքի՝ որպես խափանման ինքնուրույն միջոցի համար նախատեսված քրեադատավարական կանոնները, այլ կերպ՝ չնայած կալանավորման այլընտրանքային խափանման միջոց լինելուն, այնուամենայնիվ, **գրավի կիրառման դեպքում կալանավորման իրավական ռեժիմը չի պահպանվում:** Այսինքն՝ համապատասխան դեպքում այլևս կիրառելի են դառնում գրավի՝ որպես խափանման միջոցի տեսակի, առանձնահատկությունները կանոնակարգող՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով նախատեսված նորմերը:

(...)

... Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ի տարբերություն կալանավորման՝ գրավի՝ որպես խափանման միջոցի կիրառման կոնկրետ ժամկետ օրենսդիրը չի սահմանել: Այսինքն՝ եթե կալանավորումը մինչդարական վարույթում կիրառվում է որոշակի ժամկետով, և այդ ժամկետի լրացման ու չերկարացման պարագայում անձն ազատվում է կալանքից (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 138-139-րդ, 142-րդ հոդվածներ), ապա գրա-



վի դեպքում առկա չէ որևէ ժամկետային սահմանափակում: Ընդ որում, կալանք կիրառելիս դրա պարբերական վերանայման անհրաժեշտությունը, ըստ էության, պայմանավորված է նրանով, որ ի տարբերություն գրավի՝ վերջինիս դեպքում անձի ազատության իրավունքի սահմանափակումը շարունակական բնույթ է կրում:

... Վճռաբեկ դատարանն եզրահանգում է, որ **գրավի կիրառումը չի կարող սահմանափակվել կալանավորման համար նախատեսված ժամկետներով:**

15.1. Վճռաբեկ դատարանը հարկ է համարում ընդգծել նաև, որ կիրառված գրավը կալանավորման ժամկետով պայմանավորված չլինելը չի ենթադրում, որ անձը զրկված է գրավի՝ որպես խափանման միջոցի տեսակի հետագա պահպանումը վիճարկելու հնարավորությունից. յուրաքանչյուր պահին համապատասխան հիմքերի առկայության դեպքում վերջինս իրավասու է հանդես գալու խափանման միջոց գրավը փոխելու կամ վերացնելու մասին միջնորդությամբ, իսկ այն մերժվելու դեպքում կայացված որոշումը ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով կարող է բողոքարկել համապատասխան մարմիններին:

15.2. Այսպիսով, Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ **գրավի՝ որպես խափանման միջոցի տեսակի կիրառման հստակ ժամկետ օրենսդիրը չի նախատեսել, իսկ գրավի կիրառումը կալանավորման ժամկետներով սահմանափակելն իրավաչափ չէ, քանի որ, չնայած կալանավորման այլընտրանքային խափանման միջոց լինելուն, այնուամենայնիվ, գրավի նշանակման դեպքում կալանավորման իրավական ռեժիմը չի պահպանվում:**

Ինչ վերաբերում է գրավի անթույլատրելիության վերաբե-

րյալ միջնորդությանը, ապա այն, ըստ էության, պաշտպանական կողմին հնարավորություն է տալիս նախնական քննության փուլում մինչև կալանքի համար նախատեսված ժամկետի ավարտը կամ դատական քննության փուլում որոշակի ժամանակահատված անց կրկին անգամ դիմել դատարանին այլ-ընտրանքային միջոց կիրառելու հարցը քննարկելու համար:

Կարծում ենք, որ դատարանի կողմից պարզման ենթակա պետք է դիտարկել նաև այն, թե ում կողմից է կատարվելու գրավի գումարի վճարումը՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ գրավը հանդիսանալով ոչ միայն գույքային, այլ նաև հոգեբանական ներագրման խափանման միջոցներից՝ վարույթի ընթացքում նրա պատշաճ վարքագիծ երաշխավորելու համար: Ուստի և այն դեպքերում, երբ գրավի գումարը վճարողի և մեղադրյալի կամ ամբաստանյալի միջև առկա են բացասական ներանձնային հարաբերություններ, ապա նման դեպքերում գրավի կիրառումը չի կարող ունենալ այն արդյունքը, ինչ կիստապնդի վարույթն իրականացնող մարմինը:

Այսպիսով, գրավը թույլատրելի համարելով և գրավի գումարի չափը սահմանելով, դատարանն իր որոշման եզրափակիչ մասում նշում է կատարում այն մասին, թե որ հաշվեհամարին պետք է մուծվի համապատասխան գումարը, որը վճարվելուց և դրա վերաբերյալ ապացույցը իրավասու մարմիններին ներկայացնելուց հետո անմիջապես մեղադրյալը պետք է ազատ արձակվի կալանքից: Այսպես, ՀՀ ՔԴՕ 143-րդ հոդվածի 5-րդ մասը սահմանում է, որ.

*Գրավի մուծված լինելու մասին ապացույցներ ստանալով՝ քրեական վարույթն իրականացնող մարմինն անմիջապես հանձնարարում է մեղադրյալին ազատել կալանքից:*

Այս առումով անհրաժեշտ է նշել, որ ՍԴՈ-1387 որոշման եզրափակիչ մասով նշվել է, որ.

*«2. Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 143-րդ հոդվածի 5-րդ մասը*

*համապատասխանում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրության այնպիսի սահմանադրահրավական բովանդակությամբ, համաձայն որի՝ քրեական վարույթ իրականացնող մարմնի՝ մեղադրյալին կալանքից ազատելու մասին որոշման առկայության պայմաններում հանձնարարականը չի կարող կալանավորվածներին պահելու վայրի վարչակազմի ղեկավարի համար դատավարական հավելյալ նախապայման հանդիսանալ մեղադրյալին կալանքից ազատելու հարցում»:*

Որոշակի ուղենիշներ, որոնք վերաբերում են գրավով ազատ արձակելու գործընթացին, կարելի է գտնել ՄԻԵԴ նախադեպային իրավունքում, մասնավորապես՝ կապված ոչ պատշաճ պայմանների և ավելորդ բեռի սկզբունքի վերաբերյալ, որը դրվել է գրավ միջնորդող անձի վրա: Գրավի դիմաց դատական գործընթացը նույնպես պետք է արագացված լինի:

Օրինակ, գրավի չափը սկզբունքորեն պետք է գնահատվի «հիմք ընդունելով [մեղադրյալին], նրա ակտիվները և անվտանգությունն ապահովող անձանց հետ նրա փոխհարաբերությունները, որպեսզի լինի բավարար զսպող միջոց թաքնվելու որևէ ցանկություն ցրելու համար» (Մանգուրասն ընդդեմ Իսպանիայի (*Mangouras v. Spain [MC]*), պարագրաֆ 78<sup>84</sup>, Նեյմեստերն ընդդեմ Ավստրիայի (*Neumeister v. Austria*), պարագրաֆ 14)<sup>85</sup>:

Բոնեշոն ընդդեմ Շվեյցարիայի գործում (*Bonnechaux v. Switzerland*<sup>86</sup>) (1979) սահմանվեցին որոշ հիմնական սկզբունքներ, որոնք վերաբերում են գրավի չափի սահմանմանը և ապացույցների բեռին: Գրավի դիմաց ազատ արձակվելու դիմողները պետք է տրամադրեն որոշ *prima facie* ապացույց-

<sup>84</sup> Տե՛ս՝ Case of Mangouras v. Spain [MC], 28/09/2010, 12050/04:

<sup>85</sup> Տե՛ս՝ Case of Neumeister v. Austria, 27/06/1968, 1936/63:

<sup>86</sup> Տե՛ս՝ Case of Bonnechaux v. Switzerland, Commission report of 5 December 1979, no. 8224/78:

ներ՝ կապված գրավի գումարը վճարելու իրենց կարողության վերաբերյալ.

*Քանի որ գրավի չափը պետք է ամրագրվի՝ հաշվի առնելով հիմնականում կասկածյալի ակտիվները..., վերջինս չի կարող այնքան, որ նրա կալանքը երկարաձգվել է գրավի չափի անհամաչափ պահանջով, երբ նա չի կարողացել տրամադրել այդ գումարը որոշելու համար անհրաժեշտ տեղեկատվություն: Այլ կերպ ասած, մեղադրյալը, որին դատական մարմինները հայտարարում են, որ պատրաստ են գրավի դիմաց ազատ արձակել, պետք է բարեխղճորեն տրամադրի բավարար տեղեկատվություն իր ակտիվների չափի վերաբերյալ, որն, անհրաժեշտության դեպքում, կարող է ստուգվել, որպեսզի իրավասու մարմինները կարողանան սահմանել գրավի չափը ...*

Փենզելթն ընդդեմ Չեխիայի (*Punzelt v. Czech Republic*<sup>87</sup>) գործում ՄԻԵԴ-ը չի արձանագրել 5-րդ հոդվածի 3-րդ կետի խախտում: Դատարանը նշել է, որ ոչ գրավի դիմաց ազատ արձակման կրկնակի մերժումը, ոչ էլ հնարավոր գումարի (այն ողջամիտ էր՝ հաշվի առնելով հայտատուի ֆինանսական գործարքների մասշտաբները) դիմումատուի կողմից վճարելուց հրաժարվելը, չեն խախտել վերջինիս իրավունքները:

Այնուամենայնիվ, Իվանչուկն ընդդեմ Լեհաստանի (*Iwańczuk v. Poland*<sup>88</sup>) գործում, գրավի վճարման ձգձգումներն ու ձևակախությունները (կամ գանձել հիպոթեքային ձևով կամ պետական պարտատոմսերով), անհիմն երկարաձգել էին նրա կալանքը՝ խախտելով 5-րդ հոդվածի 3-րդ կետը.

*70. Հաշվի առնելով այն փաստը, որ գործի վարույթը, որը վերաբերում էր գրավի վճարման չափին և ձևին, որը տևել էր չորս ամիս և տասնչորս օր, մինչդեռ դիմումատուին*

<sup>87</sup> Տե՛ս՝ Case of Punzelt v. Czech Republic, 25/04/2000, 31315/96:

<sup>88</sup> Տե՛ս՝ Case of Iwańczuk v. Poland, 15/11/2001, 25196/94:

այդ ամբողջ ընթացքում կալանքի տակ էր, այն բանից հետո, երբ որոշում էր կայացվել, որ նրա հետագա կալանավորումը անհրաժեշտ չէ, և որ իշխանությունների կողմից ոչ մի համարժեք պատճառ չէր առաջադրվել՝ հիմնավորելու որոշումների հետագա փոփոխությունները, որոնք վերաբերում էին այն գրավին, որը պետք է գանձվեր, Դատարանը գտել է, որ տրեղի է ունեցել Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 3-րդ կետի խախտում:

Գրավի չվճարելը և ազատման պայմանների խախտումը նույնպես պետք է մանրակրկիտ ուսումնասիրվեն՝ համաչափության սկզբունքի համաձայն: Գաթթն ընդդեմ Մալթայի (*Gatt v. Malta*<sup>89</sup>) գործում ՄԻԵԴ-ը սահմանել է համաչափության սկզբունքը կալանքի և գրավի գումարի, ինչպես նաև պահանջվող գումարի վճարման իրական հնարավորությունների միջև:

Գաթթն ընդդեմ Մալթայի գործը վերաբերում է անհամաչափ (անհամապատասխան) կալանքին՝ սահմանված գումարը չվճարելով գրավի պայմանները խախտելու համար:

Գանգադարկուն, ով մեղադրվել էր թմրանյութերի թրաֆիքինգի մեջ, երաշխավորություն էր ստացել, որի համար նա որպես անձնական երաշխիք կտրամադրեր մոտավորապես 23.000 եվրո և չէր բացակայի իր բնակության վայրից: Բողոքից հետո, թե նա խախտել է իր պարեպարյին ժամը, քրեական դատարանը չէր լայ էր համարել նրա երաշխիքները և պահանջել ձերբակալել նրան ու հարկադրել վճարել երաշխիքի համար: Քանի որ նա չէր կարողացել վճարել, նրա նկատմամբ վարույթներ էին հարուցվել քրեական օրենսգրքի 585 և 586 հոդվածներով, իսկ երաշխավորված գումարը փոխարինվել էր կալանքով՝ մեկ օր 11.50 եվրոյի դիմաց հարաբերակցությամբ: Ամբողջովին վերցված սա հավասարվել էր երկու

<sup>89</sup> Տե՛ս՝ Case of Gatt v. Malta, 27/07/2010, 28221/08:

հազար օրվա (ավելի քան հինգ տարի և վեց ամիս) ազատազրկման: (...) ՄԻԵԴ-ն արձանագրել էր, որ նման հանգամանքներում անհրաժեշտ էր նկատվել առնել այնպիսի հարցեր, ինչպիսիք էին դատարանի վճռի նպատակը, այն կատարելու հնարավորությունը և կալանքի տևողությունը: Ավելին, համաչափությունը հատուկ նշանակություն էր ձեռք բերել ընդհանուր իրավիճակում: Դատարանը համարեց, որ իրատեսորեն հնարավոր չէր ակնկալել, որ գանգադարկուն, ով ենթակա է եղել խիստ գրավի պայմաններին մոտավորապես հինգ տարի շարունակ, հավանաբար առանց ապրուստ վաստակելու հնարավորության, կկարողանար կատարել դատարանի պահանջը և ապահովել վճարման ենթակա գումարը: Նկատվելով ազատազրկման հարաբերականորեն ավելի կարճ ժամանակահատվածները միանման գործերում, որ դատարանը նախկինում քննել է, Դատարանը գտավ, որ ազատազրկման տևողությունը, որը հարկադրվել էր պարեպային ժամի մեկ անգամյա խախտման համար, չէր կարող համարվել որպես արդար հավասարակշռության ապահովում դատարանի օրինական վճռի կատարումն ապահովելու և գանգադարկուի ազատություն ունենալու իրավունքի կարևորության միջև: (...) Դատարանը գտավ, որ Մայթայի օրենքը և նրա կիրառումը գանգադարկուի դեպքում թերի է եղել երկու առումով: Առաջինը, օրենքը տարբերակում չէր կատարել հիմնական նպատակի առնչությամբ գրավի պայմանների խախտման (այսինքն՝ դատարանում ներկայանալու) և նվազ կարևոր բնույթի այլ նկատառումների միջև, ինչպիսին պարեպային ժամն էր: Երկրորդը, այն չէր կիրառել վերին շեմ ազատազրկման տևողության համար, և կամ չէր կատարել համաչափության որևէ գնահատում: Այսպիսով, ներպեպական օրենսդրությունը, այնպես ինչպես այն կիրառվել էր գանգադարկուի գործում, չէր կարողացել ապահովել հավասարակշռությունը ժողովրդավարական

*հասարակությունում խնդրո առարկա պարտականության կատարումն ապահովելու անհրաժեշտության և ազատության իրավունքի անհրաժեշտության միջև:*

Այնուամենայնիվ, գրավադրման պայմանների իրական խախտումը, որը հանգեցնում է որպես գրավ վճարված գումարի բռնագանձմանը, չի տալիս այդ գումարի վերադարձի իրավունք՝ 1-ին Արժանագրության 1-ին հոդվածի համաձայն: Լավրեչովն ընդդեմ Չեխիայի (*Lavrechov v. Czech Republic*<sup>90</sup>) գործում ՄԻԵԴ-ը բախվեց այն հարցի հետ, թե արդյոք արդարացումը պետք է դեր խաղա գրավի դիմաց ազատ արձակման հարցի համար: Այս համատեքստում Դատարանը նկատեց, որ «գրավի նպատակը քրեական դատավարության պատշաճ ընթացքն ապահովելն է, մասնավորապես՝ մեղադրյալի դատական նիստին ներկայությունն ապահովելը»: ՄԻԵԴ-ը գնաց առաջ և նշեց, որ եթե անձը խախտում է գրավի պայմանները, և գրավը համամասնորեն բռնագանձվում է դրա դիմաց, ապա վերջինիս արդարացումը որևէ նշանակություն չի ունենա տույժի/պատժի նշանակման վերաբերյալ որոշման վրա:

*49. ... քրեական դատավարության անցկացումը մեծապես խոչընդոտվել էր գանգադարակուի կողմից գրավի պայմանների չկատարման պարճառով: Գանգադարակուն չէր ներկայացել պլանավորված լսումներից որևէ մեկին և չէր աջակցել դատարանին որևէ ձևով, չնայած որ պետք է տեղյակ լիներ, որ սա իր գրավի պայմանների խախտում էր: Լսումները ստիպված էին եղել հետաձգել մի քանի անգամ, ինչը հանգեցրել էր դատավարությունների զգալի երկարաձգմանը, և Ռեգիոնալ դատարանը կանգնել էր լուրջ դժվարությունների առջև՝ գանգադարակուին փաստաթղթեր փոխանցելու ջանքեր գործադրելիս:*

*50. Այնուհետև անհրաժեշտ է նշել, որ այն փաստը, որ գանգադարակուն արդարացվել է, ինքնին չի նշանակում,*

<sup>90</sup> Տե՛ս՝ *Case of Lavrechov v. Czech Republic*, 20/06/2013, 57404/08:

որ նրա հետրապնդումն անօրինական էր կամ թերի ամենասկզբից: ... սովորաբար պետք է առկա լինի ողջամիտ կասկած, որ տվյալ անձը հանցագործություն է կատարել:

51. Հետևաբար, դատավարության արդյունքն ուղղակի առնչություն չի ունեցել գրավի բռնագրավման խնդրին: Հարցն ավելի շուտ այն է, թե արդյոք առգրավումը համաչափ է եղել դատավարության ընթացքում գրավի պայմանների խախտմանը:

ՄԴՈ-1480 որոշման եզրափակիչ մասի 2-րդ կետով նշվել է, որ ՀՀ ՔԴՕ 143-րդ հոդվածի 6-րդ մասն այնքանով, որքանով որ գրավը պետության եկամուտ դարձնելը հնարավոր է համարում միայն քրեական վարույթն իրականացնող մարմնից մեղադրյալի թաքնվելու կամ առանց թույլտվության այլ տեղանք մեկնելու համար, Սահմանադրության 27 և 78-րդ հոդվածներին հակասող և անվավեր է: Սրանով, ըստ էության, օրենսդրի ուշադրությունն է դարձվում այն հանգամանքի վրա, որ գրավը որպես ինքնուրույն խափանման միջոց դառնալու և խափանման միջոցների համակարգում լիարժեք կիրառություն ստանալու համար պետք է նաև օժտված լինի համապատասխան դատավարական պարտականությունները պատշաճ չկատարելու կամ խափանման միջոցի կիրառման հիմք հանդիսացող որևէ գործողություն կատարելու դեպքերում համահունչ բացասական հետևանքներ առաջացնելու իրավական հնարավորությամբ՝ ինչպիսին գրավի պարագայում կարող է լինել գրավադրված գումարի պետության եկամուտ դարձնելու իրավական հնարավորությունը, ինչպես մեղադրյալի կամ ամբաստանյալի թաքնվելու, այնպես էլ վարույթին խոչընդոտող գործողություններ կատարելու և ՀՀ ՔԴՕ 135-րդ հոդվածով նախատեսված այլ դեպքերում:

Քրեական դատավարությունում գրավի դերի ընդգծման տեսանկյունից կարևոր է Սեֆիլյանն ընդդեմ Հայաստանի գործը, երբ ՄԻԵԴ-ը քննադատեց ներպետական դատարանների մե-



ղադրական հիմնավորումները և նշեց թերությունները, որոնք առկա են եղել գրավի դիմաց ազատ արձակվելու միջնորդության քննության ժամանակ.

90. *Ճիշտ է, մեկ դեպքում գրավով կալանքից ազատվելու մասին դիմումատուի դիմումը մերժելիս՝ վերաքննիչ դատարանը քրեական վարույթն իրականացնող մարմնից նրա թաքնվելու վրանգը հիմնավորել է այն փաստով, որ նա օտարերկրյա քաղաքացի է (տես վերը նշված պարագրաֆ 25): Դատարանը համարում է, որ հիմնավոր գործոն լինելով հանդերձ, այն ինքնին բավարար չէ գրավով կալանքից չազատելը հիմնավորելու համար: Վերաքննիչ դատարանը հաշվի չի առել Դատարանի նախադեպային իրավունքով սահմանված գործոններից ոչ մեկը (տես վերը նշված պարագրաֆ 86), ներառյալ այն փաստը, որ դիմումատուն 1992 թվականից ի վեր մշտապես բնակվել է Հայաստանում և ունեցել է ընտանիք, սեփականություն և երկրի հետ ակնհայտորեն ամուր սոցիալական կապեր: Այն փաստը, որ նրա անձնագիրն առգրավվել էր, նույնպես անտեսվել է, չնայած դա զգալիորեն նվազեցնում էր փախուստի վրանգը:*

91. ***Ինչ վերաբերում է վերաքննիչ դատարանի նույն որոշման մեջ նշված գրավով կալանքից չազատելու մյուս հիմքին, մասնավորապես՝ որ նույն գործով մեղադրվող մեկ այլ անձ նույնպես գտնվում էր կալանքի տակ, Դատարանի համար պարզ չէ, թե ինչպես էր այն առնչվում դիմումատուի գործի հետ:*** Այսպիսով, այն դեպքում, երբ կալանքի տակ երկարատև պահելու միակ պատճառն այն մտավախությունն է, որ մեղադրյալը կթաքնվի քրեական վարույթն իրականացնող մարմնից և, այդպիսով, հետագայում կխուսափի դատական քննությանը ներկայանալուց, ապա պետք է ընդունել նրան ազատ արձակելու մասին որոշում, եթե հնարավոր է նրանից երաշխիքները ստանալ, որոնք կապահովեն նրա

*ներկայությունը (...): Սույն գործում ներպետական դատարանները թերացել են այս հնարավորությունն անգամ դիտարկելու հարցում և մերժել են գրավով կալանքից ազատելու նրա դիմումը՝ առանց նրա կոնկրետ իրավիճակի մանրամասն քննություն անցկացնելու:*

92. Հաշվի առնելով վերոհիշյալը՝ Դատարանը գտնում է, որ այն **պատճառաբանությունները**, որոնց հիման վրա ընդհանուր իրավասության դատարանի և վերաքննիչ դատարանի կողմից դիմումատուի կալանավորման, կալանքի ժամկետի երկարաձգման և գրավով ազատելը մերժելու մասին **որոշումներ** են ընդունվել, **չեն եղել «հիմնավոր և բավարար»:**

## ՄՈԴՈՒԼ 3.

### ԱՅԼ՝ ՔԻՉ ՆԵՐԱԶԴԴՈՂ/ՍԱՀՄԱՆԱՓԱԿՈՂ, ԽԱՓԱՆՄԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ

**Դաս 5. Ստորագրություն չհեռանալու մասին**

**Դաս 6. Երաշխավորություն (անձնական, կազմակերպության)**

**Դաս 7. Հսկողության հանձնելը (Անչափահասների նկատմամբ այլընտրանքների կիրառման առանձնահատկությունների համատեքստում)**

**Դաս 8. Հրամանատարության հսկողությանը հանձնել**

#### **Դաս 5. Ստորագրություն չհեռանալու մասին**

Համեմատաբար նվազ ներագդող խափանման միջոցների շարքում առավել տարածվածը ստորագրություն չհեռանալու մասին խափանման միջոցն է, որը ևս կիրառվում է որոշում կայացնելու միջոցով: Այն, ինչպես և մյուս խափանման միջոցները, պետք է կայացվի իրավասու մարմնի կողմից, լինի պատճառաբանված, բովանդակի կասկածյալին կամ մեղադրյալին վերագրվող հանցագործության մասին նշումներ և համապատասխան խափանման միջոց ընտրելու անհրաժեշտության մասին հիմնավորում<sup>91</sup>:

Այս խափանման միջոցի հիմնական առավելությունը կայանում է նրանում, որ նրա կիրառումն անձին չի զրկում ազատու-

<sup>91</sup> Տե՛ս՝ ՀՀ ՔԴՕ 136-րդ հոդվածի 1-ին մասը:

թյունից, չի կտրում նրան ընտանիքից և մասնագիտությամբ աշխատելու հնարավորությունից<sup>92</sup>:

Այս խափանման միջոցն իր բնույթով հոգեբանական ազդեցություն<sup>93</sup> է գործում համապատասխան անձի վրա: Այդ ազդեցությունը դրսևորվում է ինչպես համապատասխան պարտականությունը ստանձնելու փաստով, այնպես էլ նշված պարտականությունը խախտելու դեպքում ավելի խիստ խափանման միջոցի կիրառման սպառնալիքով<sup>94</sup>: Այն ունի այսպես ասած պայմանագրային բնույթ՝ հիմնված կասկածյալին կամ մեղադրյալի հասնածայնության վրա՝ տրամադրելու գրավոր պարտավորություն ներկայանալու վարույթն իրականացնող մարմնի կանչով և տեղեկացնելու բնակության վայրը փոփոխելու մասին<sup>95</sup>:

Այն սահմանափակում է ազատ տեղաշարժվելու իրավունքը՝ նախատեսված ՀՀ Սահմանադրության 40-րդ հոդվածով<sup>96</sup>:

ՀՀ ՔԴՕ 144-րդ «Ստորագրություն չհեռանալու մասին» վեր-

<sup>92</sup> Տն՝ Петрухин И.Л., Неприкосновенность личности и принуждение в уголовном процессе. – М.: Наука, 1989, էջ 224:

<sup>93</sup> Տն՝ Вершинина С.И., Нормативно-правовая сущность уголовно-процессуального принуждения: монография. – М.: Юрлитинформ, 2017., էջ 314, Трунов Н.Л., Трунова Л.К, «Меры пресечения в уголовном процессе». – СПб.: Издательство «Юридический центр Пресс», 2003. (Measures of restraint in criminal procedure) էջ 172, Капинус Н.И., Процессуальные гарантии прав личности при применении мер пресечения в уголовном процессе: монография. – М.: Издательский дом «Буквоед», 2007, էջ. 313-315:

<sup>94</sup> Տն՝ Հայաստանի Հանրապետության քրեական դատավարություն: Ընդհանուր մաս. - Երևանի պետ. Համալս. – Եր.: Երևանի համալս. հրատ., 2000, էջ 374:

<sup>95</sup> Տն՝ Вершинина С.И., «Нормативно-правовая сущность уголовно-процессуального принуждения: монография». – М.: Юрлитинформ, 2017., էջ 315:

<sup>96</sup> ՀՀ Սահմանադրության 40-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի համաձայն. «1. Հայաստանի Հանրապետության տարածքում օրինական հիմքերով գտնվող յուրաքանչյուր ոք ունի ազատ տեղաշարժվելու և բնակավայր ընտրելու իրավունք: 2. Յուրաքանչյուր ոք ունի Հայաստանի Հանրապետությունից դուրս գալու իրավունք»:

տառադայանք հողվածի համաձայն՝ կասկածյալից կամ մեղադրյալից չհեռանալու մասին ստորագրությունը վերցնում է քրեական վարույթն իրականացնող մարմինը<sup>97</sup>: Նույն հողվածով սահմանված են չհեռանալու մասին ստորագրություն տված կասկածյալի կամ մեղադրյալի երկու հիմնական պարտականություն՝ այլ տեղանք<sup>98</sup> մեկնել կամ բնակության վայրը<sup>99</sup> փոխել միայն վարույթն իրականացնող մարմնի (հետաքննության մարմնի, քննիչի, դատախազի կամ դատարանի) թույլտվությամբ: Նույն հողվածում առկա է որոշակի ներքին հակասություն: Այդ հակասությունը դրսևորվում է հետևյալում. սահմանված է նաև պարտականություն այն մասին, որ կասկածյալը կամ մեղադրյալը պետք է ներկայանա վարույթն իրականացնող մարմնի կանչով և հայտնի իր բնակության վայրը փոխելու մասին, որը նշանակում է, որ բնակության վայրը փոխելն արդեն իսկ տեղի ունեցած փաստ է, և դրա համար կասկածյալին կամ մեղադրյալին այլևս թույլտվություն անհրաժեշտ չէ, ուստի ստացվում է, որ չհեռանալու մասին ստորագրություն տված անձն առնվազն պետք է իր բնակության վայրը փոփոխելու մասին տեղեկացնի համապատասխան վարույթն իրականացնող մարմնին<sup>100</sup>:

<sup>97</sup> Այս և մյուս խափանման միջոցների օրինակելի ձևերը տե՛ս սույն դասընթացի հավելվածում:

<sup>98</sup> ՀՀ ՔԴՕ 6-րդ հոդվածի 47-րդ կետի համաձայն. «այլ տեղանք՝ տեղանք, որը գտնվում է համապատասխան դատարանի, հետաքննության մարմնի, նախաքննության մարմնի, դատախազության իրավասության և գտնվելու վայրի սահմաններից դուրս կամ քրեական դատավարությանը մասնակցող անձի բնակության վայրի սահմաններից դուրս»:

<sup>99</sup> ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 23-րդ հոդվածի համաձայն. «1. Բնակության վայր է համարվում այն վայրը, որտեղ քաղաքացին մշտապես կամ առավելապես ապրում է: 2. Տասնչորս տարեկան չդարձած անչափահասների կամ խնամակալության տակ գտնվող քաղաքացիների բնակության վայր է համարվում նրանց օրինական ներկայացուցիչների՝ ծնողների, որդեգրողների կամ խնամակալների բնակության վայրը» (Տե՛ս ՀՀ ՊՏ 1998.08.10/17(50)):

Օրենքը չի կոնկրետացնում, թե ինչ կոնկրետ ձև կամ ինչ բովանդակային բաղադրիչներ պետք է ունենա վարույթն իրականացնող մարմնի կողմից տրված թույլտվությունը: Ավելին, օրենքը վերջիններիս չի վերապահում այդ ակտը վիճարկելու կամ կասկածի տակ դնելու հնարավորություն: Թույլտվությունն, ըստ էության, կարող է լինել որոշակի հանձնարարականի տեսքով: Վարույթն իրականացնող մարմնի հանձնարարականը պետք է ենթակա լինի կատարման այն մարմնի կողմից, ում դա ուղղված է, երբ այդ մասին հստակ է վարույթն իրականացնող մարմնի դիրքորոշումը կամ կամքը որոշակի վարքագիծ թույլատրելու կամ չթույլատրելու մասին: Այս պնդումը կարևոր է նաև այն տեսանկյունից, որ այն անձի համար կանխատեսելի է դարձնում իր վարքագծի թույլատրելիությունը, ով դրան համապատասխան էլ կառուցում է իր վարքագիծը<sup>101</sup>:

Այնուամենայնիվ, բացառված չէ ՀՀ ՔԴՕ 290-րդ հոդվածի կարգով կասկածյալի կամ մեղադրյալի կողմից նման թույլտվությունը չստանալը բողոքարկելու հնարավորությունը, սակայն հաշվի առնելով այն, որ սույն դասընթացը հետապնդում է այլ նպատակ, մենք չենք անդրադառնա այս հարցի քննարկմանը:

Մարդու իրավունքների պաշտպանն այս համատեքստում անդրադարձել է դատարանի կողմից գրությամբ, այլ ոչ թե որոշմամբ ՍԷԿՏ համակարգը բացելու, այսինքն՝ ՀՀ տարած-

<sup>100</sup> Այս խափանման միջոցն իր արտացոլումն ունեցել է նաև Ռուսական Կայսրության օրենսդրության մեջ: Մասնավորապես, 1864թ. քրեական դատարանակազմության կանոնադրությամբ (76, 415h.) մեղադրյալին չէր թույլատրվում լքել այն քաղաքը կամ տարածքը, որտեղ իրականացվում էր քննությունը՝ նույնիսկ եթե վերջինիս բնակության վայրն այլ էր (տե՛ս Трунов Н.Л., Трунова Л.К., «Меры пресечения в уголовном процессе». – СПб.: Издательство «Юридический центр Пресс», 2003. (Measures of restraint in criminal procedure) էջ 165):

<sup>101</sup> Տե՛ս՝ ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի ՀՀ բարձրագույն դատական խորհրդի նախագահին ուղղված 02,10,2019թ. թիվ 01/11,5/5106-19 գրությունը:

քը որոշակի ժամանակով լքելու թույլտվություն տալու հարցերին: Մասնավորապես նշել է, որ քրեական գործը քննող դատարանի՝ մարդու իրավունքներին առնչվող ակտերը պետք է կայացվեն որոշումների ձևով բոլոր այն դեպքերում, երբ դատարանն առնչվում կամ հաղորդակցվում է արտաքին աշխարհի, այսինքն՝ դատավարության մասնակից չհանդիսացող սուբյեկտների հետ: Ավելին, պետք է կայացվեն գրավոր ձև ունեցող որոշումներ: Սա կապահովի դատարանի ամուր դերն այլ սուբյեկտների հետ հարաբերություններում և չի հանգեցնի այնպիսի իրավիճակների, երբ այս կամ այն հանրային մարմինն իրեն թույլ կտա չկատարել դատարանի որոշումը<sup>102</sup>:

Պետք է նշել, որ այս խափանման միջոցի կիրառումը պրակտիկայում ուղեկցվում է կասկածյալի կամ մեղադրյալի անձնագիրը վերցնելու և համապատասխանաբար ՍԷԿՏ համակարգը փակելու միջոցով, որի արդյունքում անձը գրկվում է ազատ տեղաշարժվելու իրավունքից՝ առնվազն ՀՀ սահմաններից դուրս: Այդ նպատակով ընդունված ՀՀ քննչական կոմիտեի նախագահի 2015թ. հոկտեմբերի 1-ի Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի մարմինների և ստորաբաժանումների պետերին ուղղված «Ստորագրություն չհեռանալու մասին խափանման միջոց կիրառելիս ՀՀ քաղաքացու անձնագիրը վերցնելու և անհրաժեշտ տեղեկատվությունը ՀՀ ոստիկանությանը տրամադրելու վերաբերյալ» թիվ 91-Լ հանձնարարականով նշվել է, որ նկատի ունենալով ՀՀ ՔԴՕ 144-րդ հոդվածով նախատեսված ստորագրություն չհեռանալու մասին խափանման միջոց կիրառելիս կասկածյալի կամ մեղադրյալի կողմից առանց վարույթն իրականացնող մարմնի թույլտվության այլ տեղանք մեկնելը կամ բնակության վայրը փոխելը կանխելու անհրաժեշտությունը և ղեկավարվելով «ՀՀ քննչական կոմիտեի մասին» ՀՀ օրենքի<sup>103</sup> 12-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետով՝ հանձ-

<sup>102</sup> Տես՝ ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի ՀՀ բարձրագույն դատական խորհրդի նախագահին ուղղված 02,10,2019թ. թիվ 01/11,5/5106-19 գրությունը:

<sup>103</sup> Տես՝ ՀՀ ՊՏ 2014.06.18/31(1044):

նարարվում է ՀՀ ՔԴՕ 144-րդ հոդվածով նախատեսված ստորագրություն չհեռանալու մասին խափանման միջոց կիրառելու մասին որոշումը կասկածյալին կամ մեղադրյալին հայտարարելուց հետո «ՀՀ քաղաքացու անձնագրի մասին» ՀՀ օրենքի<sup>104</sup> 8-րդ հոդվածի 4-րդ մասի և ՀՀ կառավարության 1998 թվականի դեկտեմբերի 25-ի «Հայաստանի Հանրապետությունում անձնագրային համակարգի կանոնադրությունը և Հայաստանի Հանրապետության քաղաքացու անձնագրի նկարագիրը հաստատելու մասին» թիվ 821 որոշման<sup>105</sup> (ըստ էության, որոշմամբ հաստատված կանոնադրության) 19-րդ կետի համաձայն՝ ժամանակավորապես վերցնել կասկածյալի կամ մեղադրյալի ՀՀ քաղաքացու անձնագիրը և այդ մասին անմիջապես գրավոր հայտնել ՀՀ ոստիկանության անձնագրային և վիզաների վարչություն: Խափանման միջոցի վերաբերյալ որոշումը հայտարարելուց հետո անհապաղ ՀՀ կառավարության 2006 թվականի հունիսի 22-ի «Հայաստանի Հանրապետության սահմանային էլեկտրոնային կառավարման տեղեկատվական համակարգ ստեղծելու, դրա շահագործման կարգը և համակարգից օգտվողների ցանկը սահմանելու մասին» թիվ 884-Ն որոշմամբ<sup>106</sup> սահմանված տեղեկատվությունը տրամադրել ՀՀ ոստիկանության քրեական հետախուզության գլխավոր վարչությանը՝ ՀՀ սահմանային էլեկտրոնային կառավարման տեղեկատվական համակարգում մուտքագրելու համար: Իսկ նշված խափանման միջոցը վերացնելու կամ կասկածյալի կամ մեղադրյալի նկատմամբ քրեական հետապնդումը դադարեցնելու մասին որոշում կայացնելուց հետո անմիջապես վերադարձնել անձնագիրը և այդ մասին անհրաժեշտ տեղեկատվությունը տրամադրել ՀՀ ոստիկանության քրեական հետախուզության գլխավոր վարչությանը:

<sup>104</sup> Տե՛ս՝ ՀՀ ՊՏ 2011.12.28/71(874):

<sup>105</sup> Տե՛ս՝ ՀՀ ՊՏ 1998.12.31/33(66):

<sup>106</sup> Տե՛ս՝ ՀՀ ՊՏ 2006.07.12/38(493):



Ըստ էության, վարույթն իրականացնող մարմնի կողմից կայացվում է որոշում չհեռանալու մասին ստորագրության վերաբերյալ, ապա այդ որոշումը ծանոթացնելով կասկածյալին կամ մեղադրյալին՝ նրան տրամադրվում է արձանագրություն, որը ստորագրվում է վերջինիս կողմից, որը վկայում է այն մասին, որ անձը, ումից վերցվել է ստորագրություն չհեռանալու մասին, տեղյակ է իր նկատմամբ կիրառված խափանման միջոցի և դրանից բխող սահմանափակումների մասին:

Ինչ վերաբերում է ՄԻԵԴ նախադեպային իրավունքին, ապա պետք է նշել, որ չհեռանալու մասին պարտավորությունը միշտ որակվելու է որպես միջամտություն անձի տեղաշարժման ազատությանը: ՄԻԵԴ-ի կայուն նախադեպային իրավունքը դիտարկում է տեղաշարժման ազատությանը միջամտելն օրինականության, անհրաժեշտության և համաչափության թեստերի լույսի ներքո:

ՄԻԵԴ նախադեպային իրավունքի համաձայն՝ բոլոր սահմանափակումները, ներառյալ գրավոր պարտավորությունը տեղանքը կամ երկիրը չլքելու մասին, պետք է լինեն օրինական, անհրաժեշտ և համաչափ հետապնդվող նպատակին: Մասնավորապես, Խլյուստովն ընդդեմ Ռուսաստանի (Khlyustov v. Russia<sup>107</sup>) գործով նշվել է, որ դատական կարգադրիչների ծառայության (հարկադիր կատարման ծառայության) որոշմամբ դրվել էին ճանապարհորդական սահմանափակումներ այն պատճառով, որ դիմումատուն չէր կարողացել կամավոր վճարել երրորդ կողմի օգտին վճռված պարտավորությունը: Հիշատակման է արժանի նաև Իգնատովն ընդդեմ Բուլղարիայի (Ignatov v. Bulgaria<sup>108</sup>) գործը, որը վերաբերում է ոչ թե ճանապարհորդության արգելքին, այլ իրականում արտասահման թռիչքի համար անհրաժեշտ ճանապարհորդական փաստաթուղթ (անձնագիր) չտրամադրելուն՝ կրկին քաղաքացիական դատարանների կողմից վճռված պարտավորությունները չվճա-

<sup>107</sup> Տե՛ս՝ Case of Khlyustov v. Russia, 11/07/2013, 28975/05:

<sup>108</sup> Տե՛ս՝ Case of Ignatov v. Bulgaria, 02/07/2009, 50/02:

րելու պատճառով: Այս գործը ցույց է տալիս, որ ոչ միայն գրավոր պարտավորությունը կարող է միջամտություն լինել, այլև ճանապարհորդական փաստաթղթերի վավերականության ժամկետի երկարացման կամ դրանց տրամադրման մերժումը: Իսկ ահա Գոչևն ընդդեմ Բուլղարիայի (*Gochev v. Bulgaria*<sup>109</sup>) գործը ցույց է տալիս, որ, ինքնաբերաբար, անսահմանափակ արգելքը, որը թույլ չի տալիս պարտապանին երկիրը լքել, նրա անձնագրի անորոշ ժամկետով վերցնելու կամ նորը տրամադրելու արգելքի միջոցով, իրենից ներկայացնում է լուրջ և անհամաչափ միջամտություն՝ տեղաշարժման ազատության իրավունքին: Լուորդոն ընդդեմ Իտալիայի (*Luordo v. Italy*<sup>110</sup>) գործը փաստորեն ցույց է տալիս, որ տեղանքը/բնակավայրը և (կամ) երկիրը լքելու արգելքը, (սնանկության վարույթների համատեքստում), դիտարկվել էր որպես չիմնավորված՝ պայմանավորված վարույթի անհամաչափ երկարատևությամբ: Այսպես.

Այս իմաստով պատկերավոր է Ֆեդորովի և Ֆեդորովայի ընդդեմ Ռուսաստանի (*Fedorov and Fedorova v. Russia*<sup>111</sup>) գործը՝ կապված քրեական հետապնդման ժամանակ երկիրը/տարածքը/բնակավայրը չլքելու պարտականության հետ, որտեղ ՄԻԵԴ-ը չէր գտել տեղաշարժման ազատության խախտում: Միջոցը համարվել էր համաչափ, մասնավորապես այն պատճառով, որ այն ավելի լուրջ նպատակ էր հետապնդում, այն է՝ հանցագործությունը քննելու համար և ողջամտորեն հարմարեցված էր դիմումատուների կարիքներին.

*Ֆեդորովն ու Ֆեդորովան ընդդեմ Ռուսաստանի (Fedorov and Fedorova v. Russia). Դիմումատուների (ամուսին և կին) նկատմամբ քրեական գործ էր հարուցվել ծախսերի վերաբերյալ հաշիվների ենթադրյալ կեղծման վերաբերյալ: Նրանց համար որպես խափանման միջոց*

<sup>109</sup> Տե՛ս՝ Case of Gochev v. Bulgaria, 26/11/2009, 34383/03:

<sup>110</sup> Տե՛ս՝ Case of Luordo v. Italy, 17/07/2003, 32190/96:

<sup>111</sup> Տե՛ս՝ Case of Fedorov and Fedorova v. Russia, 13/10/2005, 31008/02:

ընտրվել էր նրանց բնակության վայրը չլքելու պարտավորություն, որը տևել էր գրեթե 4 տարի: Թեև ՄԻԵԴ-ը խախտում է արձանագրել քրեական դատավարության չհիմնավորված երկարատևության պատճառով, սակայն խախտում չէր արձանագրվել բնակության վայրը չլքելու պարտավորության երկարության առումով: Չէր վիճարկվել այն, որ սահմանափակումներ են եղել դիմումատուների տեղաշարժի ազատության վերաբերյալ: Միջամտությունը կատարվել էր օրենքին համապատասխան և հետապնդել էր դիմումատուների ներկայությունն ապահովելու նպատակ այն վայրում, որտեղ քննություն էր իրականացվում: Ինչ վերաբերում է խափանման միջոցի անհրաժեշտությանը և համաչափությանը, ապա սույն գործը պետք է տարբերվի *Luordo v. Italy*<sup>112</sup> գործից, որտեղ դատարանը գտել էր, որ բնակավայրը լքելու արգելքը (սնանկության վարույթների համարեքստում), չհիմնավորված էր՝ պայմանավորված վարույթի անհամաչափ երկարատևությամբ (այն տևել է 14 տարի և 8 ամիս): Տվյալ գործում (*Fedorov and Fedorova v. Russia*) դիմումատուները ենթարկվել են քրեական պատասխանատվության, և որևէ կասկած չկար, որ այս խափանման միջոցը կիրառվել էր քրեական հետապնդման իրականացման արդյունավետության ապահովման համար: Ավելին, այս խափանման միջոցը չէր կիրառվել ամբողջ քրեական վարույթի ընթացքում: Այն վերացվել էր մինչև գործն ավարտելը/կարճվելը: Հետևաբար, խափանման միջոցի տևողությունը ինքնին անհամաչափ չէր: Ուսումնասիրելով այն հարցը, թե արդյոք ապահովվել էր արդարացի հավասարակշռություն, Դատարանը նշել է, որ առաջին դիմումատուն երկու անգամ դիմել է իր բնակավայրից դուրս գալու թույլտվություն ստանալու համար, որը նրան տրամադրվել էր: Դիմումատուները որևէ ապա-

<sup>112</sup> St'u` Case of Luordo v. Italy, 17/07/2003, 32190/96:

*ցույց չէին ներկայացրել, որպեսզի ցույց տան, որ իրենց բնակության վայրից հեռանալու այդպիսի թույլտվությունը մերժվել է այլ առիթներով, մասնավորապես, երբ նրանք ցանկացել են իրենց որդուն ուղեկցել աշխատանքային հարցազրույցի: Ըստ այդմ, դիմումատուների տեղաշարժի ազատության սահմանափակումը անհամաչափ չէր դիտվել:*

Այնուամենայնիվ, Կոտլյն ընդդեմ Ուկրաինայի (*Kotiy v. Ukraine*<sup>113</sup>) գործով՝ ՄԻԵԴ-ը նշել էր, որ ճանապարհորդության/տեղաշարժման ընդհանրական սահմանափակումն, առանց վերանայման հնարավորության և այն դիմումատուի անհատական կարիքներին հարմարեցնելու հնարավորության, հանդիսանում է անձնական կյանքի անձեռնմխելիության իրավունքի խախտում (հոդված 8): Այսպես.

*Գործը վերաբերում է կալանքի տակ պահելուն և խափանման միջոցներին այն երկրից դուրս, որտեղ դիմումատուն աշխատել և ապրել է իր ընտանիքի հետ: Դիմումատուի դեմ հարուցվել է քրեական գործ՝ կապված ֆինանսական խարդախությունների հետ, և նրա նկատմամբ հետախուզում են հայտարարել այն հիմքով, որ նա չի բնակվում Ուկրաինայի իր հաշվառման վայրում, և նրա գտնվելու վայրն անհայտ է: Դիմումատուն փաստորեն այդ ժամանակ մի քանի տարի աշխատել և ապրում էր իր ընտանիքի հետ Գերմանիայում: Միջազգային անձնագիրը նորացնելու համար Խարկովում գտնվող միգրացիոն ծառայության բաժին հաճախելիս դիմումատուին ձերբակալել և ուղեկցել են Կիևի ոստիկանության շրջանի բաժին, որտեղ հարցաքննելուց հետո ձերբակալվել է: Դիմումատուին ազատ են արձակել գրավոր պարտավորություն ստորագրելուց փաստ օր հետո այն մասին, որ չլքի իր գրանցված բնակության վայրը Ուկրաինայում և հանձնի իր բոլոր անձնագրերը:*

<sup>113</sup> Տե՛ս՝ Case of Kotiy v. Ukraine, 05/03/2015, 28718/09:

*Չթաքնվելու և անձնագրերը հանձնելու պարտավորության արդյունքում դիմումատուին չէր կարողացել մեկնել Գերմանիա, որտեղ ապրում էր նրա ընտանիքը, և որտեղ նա իրականացնում էր իր մասնագիտական գործունեությունը: ... Քննության երեք տարվա և յոթ ամիսների ընթացքում դիմումատուին իրավական պաշտպանության այլ միջոց հասանելի չի եղել: Արդյունքում, ազգային օրենսդրությունը չի բավարարել օրենքի որակի պահանջները Կոնվենցիայի նպատակներով:*

*Բացի այդ, չնայած միջամտությունը հետապնդում էր հանցավորության կանխարգելման օրինական նպատակը, այն սահմանազանցված էր: Այն փաստը, որ դիմումատուին քննարկվող ժամանակահատվածում գործազուրկ էր, չի մեղմել այն փաստը, որ նրան ժամանակավորապես խանգարել են վերադառնալ Գերմանիա՝ վերսկսելու իր ընտանիքն ու անձնական կյանքը: Ավելին, ազգային իշխանությունները չեն քննարկել ազգային օրենսդրությամբ նախատեսված այլ անազատությանն հետը չկապված խափանման միջոցները և, ըստ էության, իրավական պաշտպանության որևէ արդյունավետ միջոց հասանելի չէր եղել: Չլքելու վերաբերյալ գրավոր պարտավորությունը ստորագրելուց հետո որևէ քննչական գործողության դիմումատուին չէր մասնակցել՝ այդպիսի պահանջ չէր էլ եղել վարույթն իրականացնող մարմինների կողմից: Ամփոփելով, նրա անձնական և ընտանեկան կյանքը հարգելու իրավունքը չէր հավասարակշռվել քրեական գործի արդյունավետ քննությունն ապահովելու հասարակության շահի հետ:*

Այսպիսով, ստորագրություն չհեռանալու մասին խափանման միջոցը պետք է լինի օրինական, անհրաժեշտ և համաչափ այն նպատակին, որը հետապնդում է: Այն պետք է հաշվի առնի ինչպես վարույթն իրականացնող մարմնի, այնպես էլ կասկածյալի կամ մեղադրյալի իրավաչափ շահերը՝ ընձեռելով

նաև բավարար և գործող հնարավորություններ այն վերանայելու համար:

### **Դաս 6. Երաշխավորություն (անձական և կազմակերպության)**

Երաշխավորությունը (և անձնական, և կազմակերպության), ինչպես և ստորագրություն՝ չհեռանալու մասին խափանման միջոցը հանդիսանում է հոգեբանական հարկադրանքի բնույթի խափանման միջոց:

Անձնական երաշխավորությունը վստահություն վայելող անձանց գրավոր պարտավորությունն է այն մասին, որ նրանք իրենց խոսքով և մուծվող դրամական գումարով երաշխավորում են կասկածյալի կամ մեղադրյալի պատշաճ վարքագիծը, քրեական վարույթն իրականացնող մարմնի կանչով նրա ներկայանալը և այլ դատավարական պարտականություններ կատարելը<sup>114</sup>:

Կազմակերպության երաշխավորությունը վստահություն վայելող իրավաբանական անձի գրավոր պարտավորությունն է այն մասին, որ նա իր հեղինակությամբ և մուծվող դրամական գումարով երաշխավորում է կասկածյալի կամ մեղադրյալի պատշաճ վարքագիծը, քրեական վարույթն իրականացնող մարմնի կանչով նրա ներկայանալը և այլ դատավարական պարտականություններ կատարելը<sup>115</sup>:

Այս խափանման միջոցների կիրառման դեպքում երաշխավորներն իրենց բարձր հեղինակության շնորհիվ կոչված են ապահովելու կասկածյալի (լրացումը՝ հեղինակի) կամ մեղադրյալի պատշաճ վարքագիծը, վարույթն իրականացնող մարմնի հրավերով նրա ներկայանալը և այլ պարտականություններ կատարելը: Երաշխավորությունն այնպիսի խափանման միջոց է, որի կիրառման ժամանակ կարևոր նշանակություն ունի սոցիալ-հոգեբանական գործոնը<sup>11</sup>, քանի որ այս խափանման

<sup>114</sup> ՀՀ ՔԴՕ 145-րդ հոդվածի 1-ին մաս:

<sup>115</sup> ՀՀ ՔԴՕ 146-րդ հոդվածի 1-ին մաս:

միջոցի խնդիրներին հասնելու նպատակով երաշխավորը սոցիալ-անձնային եղանակով ներազդում է կասկածյալի (լրացումը՝ հեղինակի) կամ մեղադրյալի վրա<sup>117</sup>:

**Անձնական երաշխավորության** դեպքում երաշխավորող կարող է լինել՝ վստահություն վայելող, չափահաս ֆիզիկական անձը, ով տալիս է գրավոր պարտավորություն և համապատասխան դեպոզիտ հաշվին վճարում 500 հազար դրամ:

Գրավոր պարտավորությունը տրվում է այն մասին, որ երաշխավորն իր խոսքով և մուծվող դրամական գումարով երաշխավորում է կասկածյալի կամ մեղադրյալի.

- պատշաճ վարքագիծը,
- քրեական վարույթն իրականացնող մարմնի կանչով նրա ներկայանալը և
- այլ դատավարական պարտականություններ կատարելը:

Ճիշտ է, օրենքը նշել է, որ երաշխավորողների թիվը երկուսից պակաս չի կարող լինել (ընդ որում, հարկ է նշել, որ այդ դեպքում յուրաքանչյուրը պետք է վճարում անի), սակայն սահմանել է նաև բացառություն այն դեպքերում, երբ առանձնակի վստահություն վայելող մեկ անձ կամահայտնություն հայտնի լինել երաշխավորող<sup>118</sup>:

Պետք է նշել, որ ՀՀ ՔԴՕ 2-րդ հոդվածով սահմանված քրեական դատավարության խնդիրները լուծելու իրավասություն ունեցող անձինք, ինչպիսիք կարող են լինել, օրինակ՝ հետաքննության մարմնի աշխատակիցները, քննիչները, դատա-

<sup>116</sup> Տե՛ս՝ Капинус Н.И., «Процессуальные гарантии прав личности при применении мер пресечения в уголовном процессе: монография». – М.: Издательский дом «Буквоед», 2007, էջ 321:

<sup>117</sup> Հայաստանի Հանրապետության քրեական դատավարություն: Մաս 1. Հեղ. խումբ: Հ 247, գիտ. խմբ. Ա. Ղամբարյան, 2-րդ լրամշակված հրատ., Եր. «Լուսաբաց հրատարակչատուն», 2017, էջ 538:

<sup>118</sup> ՀՀ ՔԴՕ 145-րդ հոդվածի 3-րդ մաս:

խազները, դատավորներն, ըստ էության, չեն կարող հանդիսանալ երաշխավոր՝ պայմանավորված իրենց մասնագիտական աշխատանքի էթիկական արգելքներով (ինչպիսի օրինակ է ինքնաբացարկ առաջացնող գործողություններից զերծ մնալու կանոնը): Ըստ էության, երաշխավոր չեն կարող լինել նաև անգործունակ և սահմանափակ գործունակ անձինք՝ պայմանավորված այն հանգամանքով, որ երաշխավոր հանդիսացող անձը պետք է գիտակցի ամբողջությամբ այն պարտականություններն ու պատասխանատվությունը, որ ստանձնում է այլ անձի համար:

**Կազմակերպության երաշխավորության** դեպքում երաշխավորող կարող է լինել վստահություն վայելող իրավաբանական անձը, ով ևս տալիս է գրավոր պարտավորություն և համապատասխան դեպոզիտ հաշվին վճարում է դրամ, սակայն 1 միլիոն դրամի չափով:

Գրավոր պարտավորությունը տրվում է այն մասին, որ երաշխավորն իր հեղինակությամբ և մուծվող դրամական գումարով<sup>119</sup> երաշխավորում է կասկածյալի կամ մեղադրյալի.

- պատշաճ վարքագիծը,
- քրեական վարույթն իրականացնող մարմնի կանչով նրա ներկայանալը և
- այլ դատավարական պարտականություններ կատարելը:

Երաշխավորություն խափանման միջոցի կիրառումն, ըստ էության, սովորաբար կարող է հանդես գալ որպես առավել խիստ խափանման միջոցի՝ կալանքի, գրավի այլընտրանք և

<sup>119</sup> Ինչպես անձնական, այնպես էլ կազմակերպության երաշխավորությունն, ըստ էության, գույքային բնույթի խափանման միջոցների շարքում կարող է դասվել՝ պայմանավորված այդ թվում նաև նրանով, որ երաշխավորողը կարող է որոշակի դրամական միջոցներ կորցնել (տես Тутьнин И.Б., Теоретические основы уголовно-процессуального принуждения имущественного характера: монография. – М.: Юрлитинформ, 2017, էջ. 114-116):



սկսվել համապատասխանաբար կասկածյալի կամ մեղադրյալի կամ նրանց կողմում հանդես եկող անձանց նախաձեռնությամբ: Այդպիսի նախաձեռնության առկայության պարագայում վարույթն իրականացնող մարմինն՝

- առաջին հերթին պետք է պարզի վայելում է արդյոք պոտենցիալ երաշխավորողը բավարար վստահություն, թե ոչ<sup>120</sup>;
- վերը նշված հարցին դրական պատասխանելու դեպքում, վարույթն իրականացնող մարմինը դիմողին՝ պոտենցիալ երաշխավորին/ներին, այդ թվում նաև՝ իրավաբանական անձի ներկայացուցչին՝ կազմակերպության երաշխավորության դեպքում, պետք է ծանոթացնի կասկածանքի կամ մեղադրանքի բովանդակությանը;
- այնուհետև բացատրի երաշխավորողի իրավունքները և պարտականություններն ու նախազգուշացնի երաշխավորողի պատասխանատվության մասին;
- նաև պարզի կասկածյալի կամ մեղադրյալի դիրքորոշումը՝ ստանա նրա համաձայնությունը<sup>121</sup>:

<sup>120</sup> Օրենսդրությունը չի բացահայտում այս հասկացության էությունը: Այնուամենայնիվ, գրականության մեջ նշվում է, որ համապատասխան անձը պետք է ունենա բարձր բարոյական և հոգեբանական հատկանիշներ: Նա պետք է ունենա իրավահպատակ վարքագիծ, վայելի հեղինակություն և հայտնի լինի որոշակի շրջանակներում (տես Трунов Н.Л., Трунова Л.К. «Меры пресечения в уголовном процессе». – СПб.: Издательство «Юридический центр Пресс», 2003. (Measures of restraint in criminal procedure) էջ. 200-201):

<sup>121</sup> «Կալանքի հետ չկապված այլ միջոցների մասին» ՄԱԿ-ի նվազագույն չափանիշների (ընդունվել է 14.12.1990թ.) 3.4-րդ կետի համաձայն՝ կալանքի հետ չկապված այլ միջոցները, որոնցով մեղադրյալի վրա դրվում են որոշակի պարտականություններ, կարող են կիրառվել նրա համաձայնությամբ (Հայաստանի Հանրապետության քրեական դատավարություն: Մաս 1. Հեղ. խումբ: Հ 247, գիտ. խմբ. Ա. Ղամբարյան, 2-րդ լրամշակված հրատ., Եր. «Լուսաբաց հրատարակչատուն», 2017, էջ 541):

Նշված գործողությունները, ինչպես նաև դիմողի կողմից իր խնդրանքը հաստատելը կամ դրանից հրաժարվելն արձանագրվում է վարույթն իրականացնող մարմնի կողմից:

Այսպիսով, եթե դիմողը հաստատում է իր խնդրանքը հանդես գալու որպես երաշխավոր, ապա վարույթն իրականացնող մարմնի կողմից կայացվում է որոշում նշված խափանման միջոցը կիրառելու մասին՝ նշելով երաշխավորողին: Որոշման պատճենն անմիջապես հանձնվում է երաշխավորողին<sup>122</sup>:

ՀՀ օրենսդրությունը սահմանում է գույքային և քրեական պատասխանատվություն երաշխավորի համար: Մասնավորապես, ՀՀ ՔԴՕ 147-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն<sup>123</sup>՝ երաշխավորողի կողմից մուծված դրամական գումարը քրեական վարույթն իրականացնող մարմնի որոշմամբ վերածվում է պետության եկամուտի, եթե երաշխավորողը՝

- 1) չի կատարել կասկածյալի կամ մեղադրյալի պատշաճ վարքագիծը ապահովելու իր պարտավորությունը<sup>124</sup>.
- 2) ինքնակամ հրաժարվել է երաշխավորությունից (մյուս բոլոր դեպքերում դրամական գումարը վերադարձվում է երաշխավորողին):

<sup>122</sup> ՀՀ ՔԴՕ 147-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասեր:

<sup>123</sup> Նախագծով երաշխավորողի մուծած դրամական գումարի պետության եկամտի վերածման իրավասությունն իրավացիորեն վերապահվել է միայն դատարանին: Այսպես. «3. Երաշխավորողի կողմից մուծված դրամական գումարը դատարանի որոշմամբ՝ մինչդատական վարույթում դատախազի միջնորդության հիման վրա, իսկ քրեական գործը դատարանում քննելիս՝ սեփական նախաձեռնությամբ կամ կողմի միջնորդության հիման վրա, վերածվում է պետության եկամուտի, եթե երաշխավորողը՝ ...»: Հասանելի է համացանցային <https://www.e-draft.am/projects/2074/about> հասցեում, վերջին մուտք՝ 15.01.2020թ., ժամը 22:59:

<sup>124</sup> Երաշխավորողն ամենից առաջ պետք է ինքնուրույն ձեռնարկի անձնական ազդեցության (համոզման, բացատրման, օրինակ ծառայելու և այլ ձևերով) միջոցներ կասկածյալի կամ մեղադրյալի պատշաճ վարքագիծն ապահովելու համար (տես Трунов Н.Л., Трунова Л.К., «Меры пресечения в уголовном процессе». – СПб.: Издательство «Юридический центр Пресс», 2003. (Measures of restraint in criminal procedure) էջ 206):

ՄԻԵԴ նախադեպային իրավունքում դժվար է գտնել կոնկրետ նախադեպ, որն ուղղակիորեն կվերաբերի այս խափանման միջոցին: Անձնական երաշխավորությունը կարող է դիտարկվել որպես այլընտրանք նախնական կամ դատական կալանքին: Այն, ըստ էության ազատման միջոց է, որը հիմնականում բաղկացած է վստահելի անձի (անձանց) կողմից տրված գրավոր պարտավորությունից՝ մեղադրյալի պատշաճ վարքագիծն ու նրա ներկայությունը նախաքննության կամ դատաքննության ընթացքում երաշխավորելու համար: Բեքսիևն ընդդեմ Մոլդովայի (Becciev v. Moldova)<sup>125</sup> գործը բացասական օրինակ է, երբ ներպետական դատարանները հաշվի չեն առել դիմումատուի երկու անձնական երաշխավորողների կողմից նրա պատշաճ վարքագիծը երաշխավորելու փորձերը:

*61. ... Անհրաժեշտ է նշել, որ դիմումատուին վիճարկել է իր կալանքի հիմքերը Մոլդովայի դատարաններում: Նա անդրադարձել էր այն փաստին, որ գործի վարույթն ընթանում է 2001 թվականից, և որ ինքը որևէ կերպ չի խոչընդոտել քննությանը: Իր դեմ սկսված վարույթից ի վեր բազմաթիվ անգամներ է եղել արտերկրում, և ամեն անգամ վերադարձել է, և քննության հետ կապված նրա վարքագիծը միշտ համարվել է անթերի: Նա ուներ ընտանիք և շատ հեղինակավոր անձինք, այդ թվում՝ խորհրդարանական ընդդիմադիր կուսակցության ղեկավարը և Քիշինևի քաղաքային խորհուրդը, պատրաստ էին երաշխիքներ առաջարկել՝ ազատ արձակելու համար՝ քրեական դատավարության օրենսգրքի դրույթներին համապատասխան: Դիմումատուին նաև պատրաստ էր հրաժարվել իր անձնագրից՝ որպես հավաստիացում, որ նա չի լքի երկիրը:*

*62. Ազգային դատարանները հաշվի չեն առել այս փաստարկներից որևէ մեկը՝ ակնհայտորեն դրանք հա-*

<sup>125</sup> Տե՛ս՝ Case of Becciev v. Moldova, 04/10/2005, 9190/03:

մարելով ոչ անհրաժեշտ՝ դիմողի միջնորդության իրավա-  
չափության հարցը քննարկելիս: Դատարանները ոչ մի  
գրառում էլ չեն կատարել դիմումատուի ներկայացրած  
փաստարկների վերաբերյալ և սահմանափակվել են  
իրենց որոշումները վերացական և կարծրափոխային  
ձևով կրկնելով օրենքով նախատեսված կալանքի հիմքե-  
րը՝ առանց որևէ փորձի ցույց տալու, թե ինչպես են նրանք  
կիրառելի դիմումատուի գործին: Բացի այդ, նրանք որևէ  
արժեք չեն տվել այնպիսի գործոնների, ինչպիսիք են դի-  
մումատուի լավ բնավորությունը, նրա հանցավոր անցյա-  
լի բացակայությունը, ընտանեկան և երկրի հետ կապերը  
(տուն, զբաղմունք, գույք): Վերջապես, նրանք հաշվի չէին  
առել դիմումատուի օգտին երրորդ անձանց առաջարկած  
երաշխիքները:

Մուշեղ Սաղաթելյանն ընդդեմ Հայաստանի (Mushegh  
Saghatelyan v. Armenia<sup>126</sup>) գործն անհրաժեշտ է վկայակոչել այն  
պատճառով, որ դիմումատուն, ի թիվս այլնի, վիճարկում էր իր  
կալանավորումն անձնական երաշխավորություն կիրառելու  
խնդրանքը մերժելը:

57 ... Հայաստանի խորհրդարանի անդամները միջ-  
նորդություն էին ներկայացրել գլխավոր դատախազին՝  
պահանջելով դիմումատուի կալանքը փոխարինել մեկ այլ  
խափանման միջոցով, մասնավորապես՝ նրանց անձնա-  
կան երաշխավորությամբ: Նրանք ի սկզբանե պնդում  
էին, որ նախագահական ընտրություններին հաջորդած  
մի քանիստ հարյուր անձանց, այդ թվում նաև դիմումատուի  
կալանավորումն անհամաչափ միջոց էր և հիմնված չէր  
հիմնավորված կասկածների վրա: Նրանք նաև պնդել  
էին, որ իրենք անձամբ ճանաչում են դիմումատուին և  
երաշխավորում են, որ եթե նա մնա ազատության մեջ,  
ապա նա չի թաքնվի, զերծ կմնա քննությանը խոչընդո-

<sup>126</sup> Տե՛ս՝ Case Mushegh Saghatelyan v. Armenia, 20/09/2018, 23086/08:

*դելուց, չի կատարի այլ հանցագործություն կամ խուսափի պատժից, եթե այդպիսին լինի:*

Մեկ այլ գործով անձնական երաշխավորության վերաբերյալ միջնորդությունն ուղարկվել էր դատարանին՝ ի տարբերություն Մուշեղ Սաղաթեյանն ընդդեմ Հայաստանի գործի, երբ միջնորդությունն ուղարկվել էր դատախազության մարմիններին, սակայն որևէ իրական արդյունք այս միջնորդությունը ևս չէր ունեցել:

*Սեֆիլյան ընդդեմ Հայաստանի (Sefilyan v. Armenia)<sup>127</sup>), պարագրաֆ 18 ... Պարզվում է, որ նույն օրը (...) խորհրդարանի երեք անդամներ դիմում են ներկայացրել շրջանային դատարան՝ իրենց անձնական երաշխիքները տրամադրելով դիմումատուի պատշաճ վարքագծի վերաբերյալ և խնդրել, որ կալանք չկիրառվի: ...*

Իր կարգավիճակով և հետևանքներով **կազմակերպության երաշխավորությունը** նման է անձնական երաշխավորությանը: ՄԻԵԴ նախադեպային պրակտիկան, ըստ էության, այս խափանման միջոցին անդրադարձող կոնկրետ նախադեպ չի պարունակում, և, կարելի է ասել, այնպիսի տպավորություն է ստեղծվում, որ այս այլընտրանքային միջոցը հնացած է, այսպես ասած այն «արխայիկ» միջոց է և գործնականում քիչ կիրառելի, սակայն անձնական երաշխավորության համար կիրառելի սկզբունքները կարևոր են նաև սույն այլընտրանքային միջոցի համար:

Պետք է նշել, որ երաշխավորողի մուծած դրամական գումարը պետության եկամուտ դարձնելու մասին որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով<sup>128</sup>:

Ինչ վերաբերում է քրեական պատասխանատվությանը, ապա ՀՀ քրեական օրենսգրքի<sup>129</sup> 346-րդ հոդվածի («Անձնա-

<sup>127</sup> Տե՛ս՝ Case Sefilyan v. Armenia, 02/10/2012, 22491/08:

<sup>128</sup> Տե՛ս՝ ՀՀ ՔԴՕ 147-րդ հոդվածի 5-րդ մասը:

<sup>129</sup> Տե՛ս՝ ՀՀ ՊՏ 2003.05.02/25(260):

**կան երաշխավորի կողմից իր ստանձնած պարտավորությունները չարամտորեն չկատարելը»**) համաձայն՝ քրեական պատասխանատվություն կարող է առաջադրվել անձնական երաշխավորի կողմից իր ստանձնած պարտավորությունները չարամտորեն չկատարելու համար, որի հետևանքով կասկածյալը կամ մեղադրյալը խուսափել է քննությունից կամ դատից:

Պետք է նշել, որ պրակտիկայում այս հոդվածով քրեական պատասխանատվության սակավությունը, եթե ոչ բացակայությունը<sup>130</sup> պայմանավորված է ոչ միայն քննարկվող խափանման միջոցի սակավ կիրառման հետևանքով, այլ հատկապես նշված «ստանձնած պարտավորությունների» ոչ այնքան հստակ սահմանված լինելու, ինչպես նաև «չարամտությունն» ապացուցելու պրակտիկ դժվարություններով, եթե ոչ անհնարինությամբ:

### **Դաս 7. Հսկողության հանձնելը (անչափահասների նկատմամբ այլընտրանքների կիրառման առանձնահատկությունների համատեքստում)**

Հսկողության հանձնելը հանդիսանում է հոգեբանական ներազդման խափանման միջոցներից և կարող է կիրառվել միայն անչափահասների նկատմամբ:

Այս խափանման միջոցը կարող է կիրառվել ինչպես անչափահաս կասկածյալի կամ մեղադրյալի ծնողի/ների, խնամակալների, հոգաբարձուների կամ փակ մանկական հիմնարկների վարչակազմի, այնպես էլ վարույթն իրականացնող մարմնի նախաձեռնությամբ:

Այս խափանման միջոցը կարող է կիրառվել մինչև 18 տարին լրացած անձի նկատմամբ և այն պետք է փոփոխվի 18 տարին լրանալուց հետո, եթե համապատասխան անձի նկատմամբ շարունակվում է պահպանվել խափանման միջոց կիրառելու անհրաժեշտությունը:

<sup>130</sup> Մեզ հայտնի չէ, որևէ նման դեպք:

Խափանման միջոցի հարցի լուծման համար ամենից առաջ վարույթն իրականացնող մարմինը պետք է հաշվի առնի մի շարք հանգամանքներ, որոնք ունեն կրիմինալոգիական նշանակություն և կարող են որոշիչ լինել այս կամ այն խափանման միջոցի կիրառման համար: Մասնավորապես,

- անչափահասի հանցավոր վարքագծի մոտիվացիան,
- անչափահասի դերը մեղսագրվող հանցագործությունում,
- ենթադրյալ հանցագործության կատարման պայմանները և պատճառները,
- անչափահասի կյանքի և դաստիարակության պայմանները,
- անչափահասի մտավոր զարգացման և հոգեբանական վիճակը,
- անչափահասի մինչհանցավոր և հետհանցավոր վարքագիծը<sup>131</sup>:

Վերը նշած հանգամանքները վերլուծելուց հետո և հաշվի առնելով այն հանգամանքը, որ ՀՀ ՔԴՕ 148-րդ հոդվածի 3-րդ մասով նախատեսված է ծնողների, խնամակալների, հոգաբարձուների հնարավորություն հրաժարվելու անչափահասի նկատմամբ հսկողություն իրականացնելուց՝ վարույթն իրականացնող մարմինն ըստ հերթականության պետք է՝

- պարզի որոշակի հանգամանքներ պոտենցիալ հսկողություն իրականացնող անձանց մասին (տարիք, առողջական վիճակ, նախկինում արատավորված լինելու հանգամանք (դատվածություն, սոցիալ-հոգեբանական նկարագիր և այլն), զբաղվածության աստիճան (ազատ ժամանակի առկայություն), անչա-

<sup>131</sup> Տե՛ս՝ Трунов Н.Л., Трунова Л.К, «Меры пресечения в уголовном процессе». – СПб.: Издательство «Юридический центр Пресс», 2003. (Measures of restraint in criminal procedure), էջ 234:

փահասի հետ հարաբերություններ<sup>132</sup>);

- համապատասխան հսկողություն իրականացնող անձին (այդ թվում փակ մանկական հիմնարկի վարչակազմի ներկայացուցչին<sup>133</sup>) ծանոթացնի կասկածանքի կամ մեղադրանքի բովանդակությանը;
- համապատասխան հսկողություն իրականացնող անձին (այդ թվում փակ մանկական հիմնարկի վարչակազմի ներկայացուցչին) բացատրի իր իրավունքները, պարտականությունները և պատասխանատվությունը:

Այս ամենն արձանագրվում է վարույթն իրականացնող մարմնի կողմից, որից հետո նոր միայն կարծում ենք ճիշտ կլինի վերջինիս կողմից կայացվի համապատասխան որոշում<sup>134</sup> և

<sup>132</sup> Անչափահասի հետ հարաբերությունների պարզումը կարևոր է այն պատճառով, քանի որ, օրինակ՝ համապատասխան ծնողը կարող է և չունենալ հեղինակություն անչափահասի մոտ և արդյունքում չկարողանա իրականացնել իր՝ որպես հսկողություն իրականացնողի պարտականությունները (տես Капинус Н.И., Процессуальные гарантии прав личности при применении мер пресечения в уголовном процессе: монография. – М.: Издательский дом «Буквоед», 2007, էջ 329):

<sup>133</sup> Անհրաժեշտ է նշել, որ, կարծես թե օրենսդիրը չի նախատեսել փակ մանկական հիմնարկի ներկայացուցչի կողմից հսկողությունից հրաժարվելու հնարավորություն՝ ըստ էության, պայմանավորված այդ մարմնում համապատասխան անձի աշխատանքային հարաբերություններ ունենալու հանգամանքով:

<sup>134</sup> ՀՀ ՔԴՕ 148-րդ հոդվածի 2-րդ մասի շարադրանքից բխում է, որ վարույթն իրականացնող մարմինն արդեն իսկ կայացրած որոշումը ծանոթացնում է հսկողություն իրականացնող սուբյեկտին, սակայն հաջորդող մասում առկա է իրավակարգավորում, համաձայն որի պտտենցիալ հսկողություն իրականացնողը կարող է հրաժարվել հսկողություն իրականացնելուց: Մեր կարծիքով, առավել նպատակահարմար է մինչ որոշում կայացնելը ծանոթացնել համապատասխան իրավունքներին ու պարտականություններին, այդ թվում նաև կասկածանքի կամ մեղադրանքի բովանդակությանն ու հսկողական պարտականությունների չկատարման համար վրա հասնող պատասխանատվությանը, նոր միայն կայացնել որոշում այս կամ այն անձի վրա նման պարտականություն դնելու մասին:



դրա պատճեն տրամադրի հսկողություն իրականացնողին կամ նրա ներկայացուցչին:

Փակ մանկական հիմնարկին<sup>135</sup> հանձնարարվող հսկողությունը, որը գրականության մեջ նաև անվանվում է պաշտոնական հսկողություն<sup>136</sup> (ի տարբերություն անձնական հսկողության), կարող է կիրառվել, ըստ էության, այն դեպքերում, երբ անչափահասն արդեն իսկ գտնում է համապատասխան հիմնարկում կամ մնացել է առանց խնամքի և պետք է տեղավորվի այդպիսի հիմնարկում:

Ասյախով, վարույթն իրականացնող մարմնի որոշմամբ հսկողություն իրականացնող անձի կամ մարմնի վրա պարտականություն է դրվում ապահովելու կասկածյալ կամ մեղադրյալ անչափահասի.

- պատշաճ վարքագիծը,
- քրեական վարույթն իրականացնող մարմնի կանչով նրա ներկայանալը և

<sup>135</sup> ՀՀ գործող օրենսդրությունը չի բացահայտում, թե որոնք են համարվում փակ մանկական հիմնարկներ: Որոշակի հարաբերություններ կարգավորված են ՀՀ կառավարության 2015թ. սեպտեմբերի 25-ի «Երեխաների, տարեց և/կամ հաշմանդամություն ունեցող անձանց խնամքի տրամադրման կարգը և պայմանները սահմանելու, տարեց և/կամ հաշմանդամություն ունեցող անձանց խնամքի տրամադրումը մերժելու հիմք հանդիսացող հիվանդությունների ցանկը հաստատելու և ՀՀ կառավարության մի շարք որոշումներ ուժը կորցրած ճանաչելու մասին» թիվ 1112-Ն որոշմամբ հաստատված «Երեխաների խնամքի տրամադրման կարգն ու պայմանները» սահմանող հավելված N 1-ով: Նշված հավելվածով կարգավորվում են բնակչության սոցիալական պաշտպանության ընդհանուր տիպի, հատուկ (մասնագիտացված), խնամքի գիշերօթիկ հաստատություններում ու սոցիալական հոգածության ցերեկային կենտրոններում երեխաների խնամքի տրամադրման հետ կապված հարաբերությունները:

<sup>136</sup> Տե՛ս՝ Հայաստանի Հանրապետության քրեական դատավարություն: Մաս 1. Հեղ. խումբ: Հ 247, գիտ. խմբ. Ա. Ղամբարյան, 2-րդ լրամշակված հրատ., Եր. «Լուսաբաց հրատարակչատուն», 2017, էջ. 544-546:

- այլ դատավարական պարտականություններ կատարելը:

Ինչ վերաբերում է միջազգային իրավական փաստաթղթերին և ՄԻԵԴ նախադեպային իրավունքին, ապա պետք է նշել, որ բազմաթիվ փաստաթղթերում կարևորվել և ընդգծվել է այն հանգամանքը, որ անչափահասների նկատմամբ կալանավորումը պետք է դիտարկվի որպես ծայրահեղագույն միջոց և այն էլ հնարավորինս կարճ ժամանակահատվածով: Այսպես.

Անչափահասների գործերով արդարադատության իրականացման ՄԱԿ-ի նվազագույն ստանդարտ կանոնների (Պեկինյան կանոններ<sup>137</sup>) համաձայն.

*13.1 Մինչև դատը կալանքի տակ պահելը կիրառվում է միայն որպես ծայրահեղ միջոց և ամենակարճ ժամանակաընթացքի համար:*

*13.2 Մինչև դատը կալանքի տակ պահելը հնարավորին չափ փոխարինվում է այլընտրանքային միջոցներով, ինչպիսիք են մշտական հսկողությունը, դաստիարակչական ակտիվ աշխատանքը կամ ընտանիքում, դաստիարակչական հաստատությունում կամ ուղղիչ տանը տեղավորելը:*

Այսպիսով, չի կարելի թերագնահատել «քրեական ազդեցության» վտանգավորությունը մինչև դատը կալանքի տակ վերցված անչափահասների վրա: Դրա համար ընդգծվում է այլընտրանքային միջոցների կիրառման անհրաժեշտությունը:

<sup>137</sup> Տե՛ս՝ Անչափահասների գործերով արդարադատության իրականացման ՄԱԿ-ի նվազագույն ստանդարտ կանոններ (Պեկինյան կանոններ). մեկնաբանություններով (United Nations Standard Minimum Rules for the Administration of Juvenile Justice («The Beijing Rules», with commentaries) Հաստատվել են ՄԱԿ-ի Գլխավոր Ասամբլեայի 1985թ. նոյեմբերի 29-ի թիվ 40/33 բանաձևով, Անչափահասների գործերով արդարադատության ոլորտի միջազգային փաստաթղթերի ժողովածու – Երևան: Միջազգային բանտային բարեփոխումներ, Քաղաքացիական հասարակության ինստիտուտ ՀԿ. 2012թ., էջ 40:

Այդ կապակցությամբ 13.1 կանոնում խրախուսվում է նոր և նորարարական միջոցների մշակումը, որպեսզի, անչափահասների բարեկեցության շահերից ելնելով, հնարավոր լինի մինչև դատը կալանավորելուց խուսափել: Միևնույն ժամանակ հանցագործությունները կանխելու և իրավախախտների նկատմամբ վարվելաձևին նվիրված ՄԱԿ-ի 6-րդ Կոնգրեսը Անչափահասների նկատմամբ արդարադատության ստանդարտի մասին իր 4-րդ բանաձևում ցույց է տվել, որ կանոնը, մասնավորապես, պետք է արտացոլի հիմնական սկզբունքը, մինչև դատը կալանքի տակ պահելը պետք է օգտագործվի միայն որպես ծայրահեղ միջոց, որ անչափահաս իրավախախտներին չի կարելի պահել հաստատություններում, որտեղ նրանք բանտարկված մեծահասակների կողմից կարող են ենթարկվել բացասական ազդեցությունների, և որ մշտապես պետք է հաշվի առնել նրանց զարգացման մակարդակին բնորոշ պահանջ-մունքները<sup>138</sup>:

Ազատությունից զրկելու հետ չկապված միջոցների վերաբերյալ ՄԱԿ-ի նվազագույն ստանդարտ կանոնները (Տոկիոյի կանոններ)<sup>139</sup> որպես հիմնական նպատակ ի թիվս այլի սահմանել են.

*1.5. Անդամ երկրները պետք է իրենց իրավական հավակարգներում որպես այլընտրանք ձևավորեն ազատու-*

<sup>138</sup> Տե՛ս՝ Անչափահասների գործերով արդարադատության ոլորտի միջազգային փաստաթղթերի ժողովածու – Երևան: Միջազգային բանտային բարեփոխումներ, Քաղաքացիական հասարակության ինստիտուտ ՀԿ. 2012թ. էջ 41:

<sup>139</sup> Տե՛ս՝ Ազատությունից զրկելու հետ չկապված միջոցների վերաբերյալ ՄԱԿ-ի նվազագույն ստանդարտ կանոններ (Տոկիոյի կանոններ) (United Nations Standard Minimum Rules for Non-custodial Measures (The Tokyo Rules) Հաստատվել են Գլխավոր Ասամբլեայի 1990թ. դեկտեմբերի 14-ի թիվ 45/110 բանաձևով, Անչափահասների գործերով արդարադատության ոլորտի միջազգային փաստաթղթերի ժողովածու – Երևան: Միջազգային բանտային բարեփոխումներ, Քաղաքացիական հասարակության ինստիտուտ ՀԿ. 2012թ., էջ. 125-135:

թյունից զրկելու հետք չկապված այլ միջոցներ՝ դրանցով կրճատելով բանտարկության կիրառումը և բարելավելով քրեական արդարադատության քաղաքականությունները՝ հաշվի առնելով մարդու իրավունքները, սոցիալական արդարության պահանջները և իրավախախտի վերականգնման հետք կապված կարիքները:

Միաժամանակ սահմանվել է, որ ազատությունից զրկելու հետ չկապված միջոցների շրջանակը պետք է լայն և ճկուն լինի

2.3 ... բանտարկության անհարկի կիրառումից խուսափելու նպատակով քրեական արդարադատության համակարգը պետք է ապահովի ազատությունից զրկելու հետք չկապված միջոցների առկայությունը՝ մինչդարական փուլից մինչև դատավճռի կայացումից հետո ընկած ժամանակահատվածը կիրառելու համար: Ազատությունից զրկելու հետք չկապված միջոցների թիվը և տեսակները պետք է նշանակվեն այնպես, որպեսզի հետագայում պարտի կիրառումը հնարավոր լինի:

(...)

2.6. Ազատությունից զրկելու հետք չկապված միջոցները պետք է կիրառվեն նվազագույն միջամտության սկզբունքին համապատասխան:

(...)

## **6. Մինչդարական կալանքի կիրառումից ձեռնպահ մնալը**

6.1. Մինչդարական կալանքը պետք է քրեական վարույթի ընթացքում կիրառվի որպես ծայրահեղ միջոց՝ պարզաճ ուշադրություն դարձնելով ենթադրվող իրավախախտման քննությանը և հասարակության և տուժողի պաշտպանությանը:

6.2. Մինչդարական կալանքի այլընտրանքները պետք է կիրառվեն հնարավորինս վաղ փուլում: Մինչդարական կալանքը պետք է տևի ոչ ավելի, քան անհրաժեշտ է 5.1 կանոնով սահմանված խնդիրներն իրականացնելու համար, և պետք է իրականացվի մարդասիրաբար՝ հարգելով մարդկային էականերին բնորոշ արժանապատվությունը:

6.3. Իրավախախտը պետք է իրավունք ունենա դարական կամ այլ իրավասու անկախ մարմնին բողոքարկելու մինչդարական կալանքի որոշումը:

Ազատությունից զրկված անչափահասների պաշտպանության վերաբերյալ ՄԱԿ-ի կանոնների (Հավանայի կանոններ)<sup>140</sup> համաձայն.

17. Ձերբակալված կամ կալանավորված (չդատապարտված) անչափահասները համարվում են անմեղ և պետք է արժանանան համապատասխան վերաբերմունքի: **Անհրաժեշտ է հնարավորության սահմաններում խուսափել մինչև դարական քննությունը կալանքի տակ պահելուց և այդ միջոցին դիմել միայն ծայրահեղ դեպքերում: Հարկավոր է ամեն կերպ ձգտել օգտագործելու այլընտրանքային միջոցները:** Այն դեպքերում, երբ որպես խափանման միջոց, այնուամենայնիվ, կիրառվում է կալանավորումը, անչափահասների գործերով զբաղվող դատարանները կամ քննչական մարմինները պետք

<sup>140</sup> Տե՛ս՝ Ազատությունից զրկված անչափահասների պաշտպանության վերաբերյալ ՄԱԿ-ի կանոններ (Հավանայի կանոններ) (United Nations Rules for the Protection of Juveniles Deprived of their Liberty (The Havana Rules) 14-ը դեկտեմբերի, 1990թ., Անչափահասների գործերով արդարադատության ոլորտի միջազգային փաստաթղթերի ժողովածու – Երևան: Միջազգային բանտային բարեփոխումներ, Քաղաքացիական հասարակության ինստիտուտ ՀԿ. 2012թ., էջ. 75-95:

*է առաջնահերթ ուշադրություն դարձնեն գործի առավելագույնս արագ քննությանը, որպեսզի կալանքի տակ գտնվելու ժամանակահատվածը հնարավորինս կարճատև լինի:*

Կալանքի կամ ազատագրկման որևէ ձևի ենթարկված բոլոր անձանց պաշտպանության հիմնական սկզբունքների համաձայն<sup>141</sup>.

### **Սկզբունք 5**

*1. Սույն սկզբունքները կիրառվում են տվյալ երկրի տարածքում գտնվող բոլոր անձանց նկատմամբ՝ առանց ռասայով, մաշկի գույնով, սեռով, լեզվով, կրոնով կամ դավանանքով, քաղաքական կամ այլ հայացքներով, ազգային, էթնիկ կամ սոցիալական ծագման, գույքային, ծննդյան կամ այլ կարգավիճակով պայմանավորված որևէ տարբերակման:*

*2. Բացառապես կանանց, հատկապես հղի կանանց և կերակրող մայրերի, **երեխաների ու անչափահասների**, տարեցների, վատառողջ կամ անդամալույծ անձանց նկատմամբ կիրառված, օրենքով նախատեսված միջոցները և վերջիններիս իրավունքների ու սոցիալական կարգավիճակի պաշտպանության համար նախատեսված օրենքները չպետք է խտրականություն համարվեն: Նման միջոցները և դրանց կիրառման անհրաժեշտությունը պետք է մշտապես վերանայվի դատական կամ այլ մարմնի կողմից:*

<sup>141</sup> Կալանքի կամ ազատագրկման որևէ ձևի ենթարկված բոլոր անձանց պաշտպանության հիմնական սկզբունքներ (Body of Principles for the Protection of All Persons under Any Form of Detention or Imprisonment), Անչափահասների գործերով արդարադատության ոլորտի միջազգային փաստաթղթերի ժողովածու – Երևան: Միջազգային բանտային բարեփոխումներ, Քաղաքացիական հասարակության ինստիտուտ ՀԿ. 2012թ., էջ. 136-146:

## **Սկզբունք 11**

(...)

*3. Դատական կամ այլ մարմինը պետք է իրավունք ունենա ըստ անհրաժեշտության վերանայելու կալանքի շարունակման հարցը:*

Եվրոպայի խորհրդի նախարարների կոմիտեի թիվ CM/Rec(2008)11 հանձնարարականն անդամ երկրներին՝ Պատիժների կամ այլ միջոցների ենթարկված անչափահաս իրավախախտների վերաբերյալ եվրոպական կանոնների վերաբերյալ<sup>142</sup> սահմանել է, որ.

*10. Անչափահասներին ազատությունից զրկելը պետք է կիրառվի որպես ծայրահեղ միջոց, որը նշանակվում և իրականացվում է հնարավորինս կարճ ժամկետով: Հարկավոր է հատուկ ջանք գործադրել մինչդպարական կալանքից խուսափելու համար:*

Եվրոպայի խորհրդի նախարարների կոմիտեի թիվ Rec(2003)20 հանձնարարականն անդամ երկրներին՝ անչափահասների հանցավորությանն արձագանքելու նոր ուղիների և անչափահասների գործերով արդարադատության դերի վերաբերյալ<sup>143</sup> սահմանում է, որ.

*16. Երբ անչափահաս կասկածյալները որպես ծայրահեղ միջոց կալանավորվում են, մինչև դատավարության*

<sup>142</sup> Տես՝ Եվրոպայի խորհրդի նախարարների կոմիտեի թիվ CM/Rec(2008)11 հանձնարարականն անդամ երկրներին՝ Պատիժների կամ այլ միջոցների ենթարկված անչափահաս իրավախախտների վերաբերյալ եվրոպական կանոնների վերաբերյալ (Recommendation CM/Rec(2008)11 of the Committee of Ministers to member states on the European Rules for juvenile offenders subject to sanctions or measures) (Կոմիտեի կողմից հաստատվել է 2008թ. նոյեմբերի 5-ին՝ փոխնախարարների թիվ 1040 հանդիպման ժամանակ), Անչափահասների գործերով արդարադատության ոլորտի միջազգային փաստաթղթերի ժողովածու – Երևան: Միջազգային բանտային բարեփոխումներ, Քաղաքացիական հասարակության ինստիտուտ ՀԿ. 2012թ., էջ. 147-178:

մեկնարկը նրանք **կալանքի տակ կարող են պահվել վեց ամսից ոչ ավելի տևողությամբ**: Այդ ժամկետը կարող է երկարաձգվել միայն այն դեպքում, երբ տվյալ գործում չեն երգրավված դատավորը եզրակացնում է, որ դատավարության հետաձգումը միանգամայն արդարացված է բացառիկ հանգամանքներով:

17. Հնարավորության դեպքում **անչափահաս մեղադրյալների նկատմամբ պետք է կիրառվեն կալանավորման այնպիսի այլընտրանքներ**, ինչպիսիք են՝ ազգականների, խնամատար ընտանիքների **հսկողությանը հանձնելը** կամ տեղավորման այլ եղանակները: Կալանավորումը որևէ դեպքում չպետք է կիրառվի որպես պատիժ կամ ահաբեկման միջոց, կամ երեխայի պաշտպանության կամ հոգեկան առողջության հետ կապված միջոցների փոխարեն:

18. Անչափահասի հետագա հանցավորությունը կանխելու նպատակով **անչափահասին կալանավորելու հարցը վճռելիս դատարանները պետք է ռիսկի լիարժեք գնահատում իրականացնեն՝ հիմնվելով երիտասարդի ինքնության և նրա հետ կապված սոցիալական հանգամանքների վերաբերյալ հավաստի տեղեկատվության վրա**:

<sup>143</sup> Եվրոպայի խորհրդի նախարարների կոմիտեի թիվ Rec(2003)20 հանձնարարականն անդամ երկրներին՝ անչափահասների հանցավորությանն արձագանքելու նոր ուղիների և անչափահասների գործերով արդարադատության դերի վերաբերյալ (Recommendation Rec(2003)20 of the Committee of Ministers to member states concerning new ways of dealing with juvenile delinquency and the role of juvenile justice) (Նախարարների կոմիտեի կողմից հաստատվել է 2003թ. սեպտեմբերի 24-ին՝ փոխնախարարների թիվ 853 հանդիպման ժամանակ), Անչափահասների գործերով արդարադատության ոլորտի միջազգային փաստաթղթերի ժողովածու – Երևան: Միջազգային բանտային բարեփոխումներ, Քաղաքացիական հասարակության ինստիտուտ ՀԿ. 2012թ., էջ. 179-185:



Երեխայի իրավունքների մասին 1989թ. նոյեմբերի 20-ի կոնվենցիայի<sup>144</sup> 37-րդ հոդվածը նույնպես անդրադարձել է այս հարցին, նշելով.

### Հոդված 37

*Մասնակից պետություններն ապահովում են, որ.*

*(...)*

*(բ) ոչ մի երեխա չգրկվի ազատությունից անօրինական կամ կամայական կերպով: Երեխայի ձերբակալությունը, կալանքը կամ ազատազրկումն իրականացվում են համաձայն օրենքի և գործադրվում են միայն որպես ծայրահեղ միջոց և որքան հնարավոր է՝ կարճ ժամանակամիջոցով:*

Միննույն ժամանակ անհրաժեշտ ենք գտնում վկայակոչել նաև ՀՀ վճռաբեկ դատարանի Ռուբեն Աղաբաբյանի վերաբերյալ 2018 թվականի սեպտեմբերի 20-ի թիվ ԵԱԴԴ/0023/06/17 որոշումը, համաձայն որի.

15. (...)

*ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 135-րդ հոդվածի 3-րդ մասի 3-րդ կետի համաձայն՝ «Խափանման միջոց կիրառելու անհրաժեշտության և կասկածյալի կամ մեղադրյալի նկատմամբ դրա տեսակն ընտրելու հարցը լուծելիս հաշվի [է] առնվում (...) տարիքը (...)»:*

*ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 439-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «[Անչափահասների գործերով վարույթի առանձնահատկությունները սահմանող] գլխի դրույթները կիրառվում են այն անձանց հանցագործությունների վերաբերյալ գործերով, ում տասնութ տարին չի լրացել հանցանքը կատարելու պահին»:*

<sup>144</sup> Տե՛ս՝ ՄՊ ՀՀ ՊՏ 2008/Հատուկ թողարկում:

«Հ քրեական դատավարության օրենսգրքի 442-րդ հոդվածի համաձայն՝ «Անչափահաս կասկածյալի կամ մեղադրյալի նկատմամբ կալանքը որպես խափանման միջոց կիրառել թույլատրվում է միայն այն դեպքում, երբ նրան վերագրվում է միջին ծանրության, ծանր կամ առանձնապես ծանր հանցանքների կատարում»:

(...)

17. ... Վճռաբեկ դատարանը փաստում է, որ հաշվի առնելով անչափահաս մեղադրյալների կյանքի և դատարարության պայմանները, ծնողների հետ ունեցած հոգեբանական փոխկապվածությունը, հոգեկան զարգացվածության աստիճանը, ընդհանուր զարգացման և առողջական վիճակը՝ նրանց մասնակցությամբ քրեական վարույթն անցկացվում է հատուկ իրավական երաշխիքների ապահովմամբ: Դրանց համատեքստում իր հիմնարար բնույթով առանձնանում է անչափահաս մեղադրյալի ազատության իրավունքի պաշտպանությունը, որի գերակայությունից ելնելով՝ անչափահասի վարքագծի պատշաճությունն ապահովելու նպատակով **սահմանվում է կալանավորումը որպես ծայրահեղ միջոց կիրառելու պահանջը:**

(...)

18.1 Հիմք ընդունելով վերոնշյալ իրավական պահանջները՝ Մարդու իրավունքների եվրոպական դատարանը Կոնվենցիայի 5-րդ հոդվածի համատեքստում ևս նշել է, որ կալանավորումը որպես խափանման միջոց կիրառելու հարցը լուծելիս խիստ կարևոր հանգամանք է մեղադրյալի տարիքը, անչափահաս մեղադրյալների նկատմամբ մինչդատարական կալանքը կարող է կիրառվել որպես ծայրահեղ միջոց և հնարավորինս կարճ ժամանակահատվածով (Տես Մարդու իրավունքների եվրոպա-

կան դատարանի՝ Selçuk v. Turkey գործով 2006 թվականի հունվարի 10-ի վճիռը, գանգատ թիվ 21768/02, կետեր 35-36, Nart v. Turkey գործով 2008 թվականի մայիսի 6-ի վճիռը, գանգատ թիվ 20817/04, կետեր 31, 33, Korneykova v. Ukraine գործով 2012 թվականի հունվարի 19-ի վճիռը, գանգատ թիվ 39884/05, կետ 44):

19. ... Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ մինչդեռ դատարանն անհամապատասխան է համարում **անչափահաս մեղադրյալի ազատության իրավունքը կարող է սահմանափակվել բացառիկ դեպքերում, երբ գործի փաստական հանգամանքներով կեղծվի այլընտրանքային միջոցներով կալանավորումը որպես խափանման միջոց կիրառելու հիմքերը չեզոքացնելու հնարավորությունը**: Ընդ որում, Վճռաբեկ դատարանն ընդգծում է, որ չափահաս մեղադրյալների համեմատ անչափահասների նկատմամբ կալանավորումը որպես խափանման միջոց կիրառելիս պահանջվում է առավել ծանրակշիռ փաստական հանգամանքների համակցություն, որը համոզիչ կերպով կհիմնավորի անչափահաս մեղադրյալի՝ ազատության մեջ գտնվելու կանխավարկածը հաղթահարելու անհրաժեշտությունը: Այդ համապատասխանում դատարաններն անչափահաս մեղադրյալի նկատմամբ կալանավորումը որպես խափանման միջոց կիրառելու անհրաժեշտությունը գնահատելիս գործի շրջանակներում պետք է հաշվի առնեն սույն որոշման 17-րդ կետում թվարկված՝ անչափահասին հատուկ իրավական երաշխիքներ տրամադրելու հիմքում ընկած պայմանները, ինչպես նաև հիմնավորեն ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 135-րդ հոդվածի 1-ին մասում մատնանշված՝ կալանավորման հիմքերի կանխապես ստուգման առավել բարձր աստիճանը: Այդ կապակցությամբ Վճռաբեկ դատարանը փաստում է, որ անչափահաս մեղադրյալի նկատմամբ կալանավորման

*հիմքերի առկայության վերաբերյալ դատարանի դատողությունները չեն կարող հիմնված լինել միայն մեղսագրվող հանցագործության բնույթի և հանրային վրանգավորության աստիճանի գնահատման վրա, այլ անչափահասի անձը բնութագրող տվյալների հաշվառմամբ և կոնկրետ փաստական հանգամանքների վկայակոչմամբ պետք է հիմնավորեն անչափահասին կալանքի տակ պահելու բացարձակ անհրաժեշտությունը:*

Այսինքն՝ անչափահասների կալանավորումն ավելի խիստ մոտեցում և բացառիկ կանոններ է պահանջում, քան մեծահասակ իրավախախտների կալանավորումը: Այն այսպես ասած բացառություն է բացառությունից, քանի որ այստեղ այլընտրանքների կիրառումն ավելի շուտ պարտադիր է, քան ընտրովի: Քրեական դատավարությունում անչափահասներին կալանավորելու, ինչպես նաև ծնողական հսկողություն հանձնելու հնարավորության համատեքստում առկա է ՄԻԵԴ Նիկոլովն ընդդեմ Բուլղարիայի (Nikolov v. Bulgaria<sup>145</sup>) գործը, որը վերաբերում է անչափահաս իրավախախտին ծնողական հսկողությամբ ազատ արձակելու ձգձգումներին՝ «կանոնավոր վարչական ձևականությունների և դիմումատուի մորը գտնելու դժվարությունների պատճառով, որը պետք է ստորագրեր հայտարարություն այն մասին, որ նա կապահովի իր որդու ներկայությունն իրավասու մարմնի առջև: Թեև ազատման հետ կապված այս վարչական ձևականությունները չեն կարող դիտվել որպես անհիմն կամ անկանխատեսելի, դրանք, սակայն, չեն կարող արդարացնել ավելորդ ձգձգումները: Տվյալ դեպքում ձգձգումները գերազանցել էին ողջամիտ տևողությունը (ավելի քան մի քանի ժամ) և թույլ չէին տվել ազատ արձակել անչափահասին ծնողական հսկողությանը հանձնելու այլընտրանքային միջոցի համար նախատեսված պայմանի կատարումից անմիջապես հետո:

<sup>145</sup> Տե՛ս՝ Case of Nikolov v. Bulgaria, 30/01/2003, 38884/97:

Ինչ վերաբերում է ՀՀ օրենսդրությամբ նախատեսված պատասխանատվությանը<sup>146</sup>, ապա փաստացի այդպիսի հանցակազմ նախատեսված չէ, որպիսի հանգամանքը նվազ կիրառելի է դարձնում խափանման այս միջոցը:

### **Դաս 8. Հրամանատարության հսկողությանը հանձնել**

Հրամանատարության հսկողությանը հանձնելն<sup>147</sup> այն է, երբ զորամասի, զորամիավորման հրամանատարի, զինվորական հիմնարկի պետի վրա, որտեղ ծառայում է կամ զորահավաքներ կամ վարժահավաքներ է անցնում կասկածյալը կամ մեղադրյալը, պարտականություն է դրվում ապահովել վերջինիս պատշաճ վարքագիծը, քրեական վարույթն իրականացնող մարմնի կանչով ներկայանալը և այլ դատավարական պարտականություններ կատարելը<sup>148</sup>:

Այսինքն, հրամանատարության հսկողությանը հանձնելը որպես խափանման միջոց կիրառվում է միայն այն կասկածյալ-

<sup>146</sup> ՀՀ քրեական օրենսգրքի 170-րդ և 172-րդ հոդվածներով նախատեսված հանցակազմերն այս կամ այն իրավիճակում կարող են առաջադրվել անբարեխիղճ ծնողի կամ այն անձի կողմից, ում վրա դրված է երեխայի դաստիարակության և խնամքի պարտականություն կամ խնամատար ծնողի, խնամակալի կամ հոգաբարձուի իրավունքները չարաշահելու դեպքերում՝ համապատասխան անձանց՝ պայմանավորված կոնկրետ փաստական հանգամանքներով և այն պարտականությունների չկատարմամբ, որոնք առաջացրել են համապատասխան վտանգավոր հետևանքները: Սակայն այս հանցակազմերը չունեն որևէ աղերս խափանման միջոցի ոչ էության և ոչ էլ նրա բովանդակության ու հետապնդվող նպատակների հետ:

<sup>147</sup> Այս խափանման միջոցը հայտնի է դեռևս մինչհեղափոխական Ռուսաստանի իրավական համակարգին՝ (1864թ.) (տես Трунов Н.Л., Трунова Л.К. «Меры пресечения в уголовном процессе». – СПб.: Издательство «Юридический центр Пресс», 2003. (Measures of restraint in criminal procedure) էջ 208):

<sup>148</sup> Տես՝ ՀՀ ՔԴՕ 149-րդ հոդվածի 1-ին մասը:

ների կամ մեղադրյալների նկատմամբ, ովքեր զինվորական ծառայող են, զորահավաքների կամ վարժահավաքների մասնակից են: Այսպես, «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» ՀՀ օրենքի<sup>149</sup> 3-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն. «Զինվորական ծառայությունը Հայաստանի Հանրապետության զինված ուժերում և այլ զորքերում օրենքով սահմանված պետական ծառայության հատուկ տեսակ է: Հայաստանի Հանրապետության զինված ուժերում և այլ զորքերում սույն օրենքով և այլ օրենքներով սահմանված կարգով զինվորական ծառայություն անցնող անձինք համարվում են զինծառայող: Օտարերկրյա պետությունների զինված ուժերում և այլ զորքերում կամ ռազմաուսումնական հաստատություններում Հայաստանի Հանրապետության քաղաքացիների ծառայությունը կամ ուսումնառությունը, ինչպես նաև օտարերկրյա պետությունների քաղաքացիների ծառայությունը կամ ուսումնառությունը Հայաստանի Հանրապետության զինված ուժերում և այլ զորքերում կամ ռազմաուսումնական հաստատություններում կարգավորվում են համապատասխան պայմանագրերով»: Նույն հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ. «Զինվորական ծառայությունը ներառում է՝ 1) զորակոչի՝ պարտադիր կամ զորահավաքային կամ պայմանագրի կնքման կամ վարժական հավաքի կանչվելու միջոցով զինվորական ծառայությանը ներգրավումը»:

Ռազմական ուսումնական հաստատություններ ընդունված քաղաքացիները պարտադիր զինվորական ծառայության զինծառայողներ են: Եթե կասկածյալը (լրացումը՝ հեղինակի), մեղադրյալը ռազմաուսումնական հաստատության անչափահաս զինծառայող է, ապա նրա նկատմամբ կիրառվում է ոչ թե հսկողության հանձնելը, այլ հրամանատարության հսկողության հանձնելը խափանման միջոցը<sup>150</sup>:

<sup>149</sup> Տե՛ս՝ ՀՀ ՊՏ 2017.12.06/73 (1348):

<sup>150</sup> Տե՛ս՝ Հայաստանի Հանրապետության քրեական դատավարություն: Մաս 1. Հեղ. խումբ: Հ 247, գիտ. խմբ. Ա. Ղամբարյան, 2-րդ լրամշակված հրատ., Եր. «Լուսաբաց հրատարակչատուն», 2017, էջ 549:

Պարտադիր զինվորական ծառայության ենթակա չէ այն քաղաքացին, ով նախկինում դատապարտվել է ազատազրկման՝ ծանր կամ առանձնապես ծանր կամ առնվազն երկու անգամ դիտավորությամբ կատարած հանցագործության համար և ազատազրկման ձևով պատիժ է կրել երեք տարուց ոչ պակաս ժամկետով, կամ դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած դատավճռով դատապարտվել է Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի 139-րդ կամ 142-րդ կամ 266-րդ կամ 272-րդ կամ 327.2-րդ կամ 327.3-րդ կամ 327.5-րդ կամ 362-րդ հոդվածով կամ 363-րդ հոդվածի 2-րդ և (կամ) 3-րդ մասերով նախատեսված արարքներ կատարելու համար<sup>151</sup>:

Հայտարարված զորակոչի ժամանակ պարտադիր զինվորական ծառայության չի կարող զորակոչվել այն անձը, ով պատիժ է կրում ազատազրկման կամ կալանքի ձևով, կամ ում նկատմամբ իրականացվում է քրեական հետապնդում, բացառությամբ քաղաքացու նկատմամբ պարտադիր զինվորական ծառայության զորակոչից խուսափելու պատճառով հարուցված քրեական հետապնդման, եթե քաղաքացին գրավոր ցանկություն է հայտնել զորակոչվելու պարտադիր զինվորական ծառայության<sup>152</sup>:

Կասկածյալի կամ մեղադրյալի նկատմամբ որպես խափանման միջոց հրամանատարության հսկողությանը հանձնելը կիրառելու դեպքում քրեական վարույթն իրականացնող մարմինը հետևյալ հաջորդականությամբ իրականացնում է օրենքով նախատեսված գործողությունները<sup>153</sup>, մասնավորապես.

- հրամանատարության ներկայացուցչին ծանոթացնում է հրամանատարության հսկողությանը հանձնելու մասին կայացված որոշմանը և նրան հանձնում որոշման պատճենը,

<sup>151</sup> Տե՛ս՝ «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» ՀՀ օրենքի 19-րդ հոդվածի 2-րդ մասը:

<sup>152</sup> Տե՛ս՝ «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» ՀՀ օրենքի 19-րդ հոդվածի 3-րդ մասը:

<sup>153</sup> Տե՛ս՝ ՀՀ ՔԴՕ 149-րդ հոդվածի 2-րդ մասը:

- ծանոթացնում է կասկածանքի կամ մեղադրանքի բովանդակությանը,
- նրան բացատրում է իր իրավունքները, պարտականությունները և պատասխանատվությունը:
- Վերը նշված բոլոր գործողություններն արտացոլվում են արձանագրության մեջ:

Պետք է նշել, որ ենթակայի նկատմամբ հսկողություն իրականացնելիս հրամանատարությունը գործում է զինվորական կանոնադրություններին<sup>154</sup> համապատասխան<sup>155</sup>, միաժամանակ որպես առանձին կարգավորում ՀՀ ՔԴՕ-ն՝ ի տարբերություն նախորդ դասերի ժամանակ քննարկված այլ խափանման միջոցների, այս դեպքում սահմանել է իրավունքների և պարտականությունների կոնկրետ ցանկ, որոնք պիտի հստակորեն իրականացվեն թե հսկողություն իրականացնողի և թե կասկածյալի կամ մեղադրյալի կողմից: Մասնավորապես.

- կասկածյալի կամ մեղադրյալի նկատմամբ վերոհիշյալ խափանման միջոցի կիրառման ընթացքում նա չի նշանակվում պահակության և մարտական հերթապահության,
- զրկվում է խաղաղ ժամանակ գենք կրելու իրավունքից,
- սպա կամ ենթասպա չհանդիսացող զինծառայողը միայնակ չի ուղարկվում զորամասի տարածքից դուրս:

Այսպիսով, վարույթն իրականացնող մարմնի որոշմամբ զորամասի, զորամիավորման հրամանատարի, զինվորական հիմնարկի պետի վրա, որտեղ ծառայում է կամ զորահավաքներ կամ վարժապետներ է անցնում կասկածյալը կամ մեղադրյալը, պարտականություն է դրվում ապահովելու կաս-

<sup>154</sup> Տե՛ս՝ «ՀՀ զինված ուժերի ներքին ծառայության կանոնագիրքը հաստատելու մասին» ՀՀ օրենք (ՀՀ ՊՏ 1997.01/1 հունվար), «ՀՀ զինված ուժերի կայազորային և պահակային ծառայությունների կանոնագիրքը հաստատելու մասին» ՀՀ օրենք (ՀՀ ՊՏ 1997.01/1 հունվար):

<sup>155</sup> Տե՛ս՝ ՀՀ ՔԴՕ 149-րդ հոդվածի 3-րդ մաս:



կածյալի կամ մեղադրյալի.

- պատշաճ վարքագիծը,
- քրեական վարույթն իրականացնող մարմնի կանչով նրա ներկայանալը և
- այլ դատավարական պարտականություններ կատարելը:

Միջազգային իրավունքի տեսանկյունից, իր բուն իմաստով այս խափանման միջոցն իր էությանը նման է նախորդ խափանման միջոցին (հսկողության հանձնելուն), այն առանձնահատկությամբ, որ կիրառելի է միայն այն իրավախախտների նկատմամբ, որոնք ունեն հատուկ զինվորական կարգավիճակ<sup>156</sup>: Ըստ էության, այս միջոցը ենթադրում է վերադաս զինձառայողի կողմից մեկ այլ զինձառայողի նկատմամբ վերահսկողություն: Այս տեսանկյունից կալանավորմանը և դրա այլընտրանքների վերաբերյալ կարևոր է նշել Զալյանը և մյուսներն ընդդեմ Հայաստանի (*Zalyan and Others v. Armenia*<sup>157</sup>) գործը ՄԻԵԴ նախադեպային իրավունքում:

Հարկ է նշել, որ ազատության իրավունքի տեսանկյունից զինվորական կալանավորումներն ընդգրկում են Կոնվենցիայով տարբեր ասպեկտներ և իրավական դասակարգում: Պետք է հստակ տարբերակվեն զինվորական կարգապահության կանոնները խախտելու համար նախատեսված վարույթները զինձառայողների նկատմամբ սովորական քրեական վարույթից: Միայն երկրորդ իրավիճակում, ըստ երևույթին, ներկայիս խափանման միջոցը կիրառելի է դառնում մեղադրյալի զինվորական կարգավիճակի պատճառով, բայց ոչ նրա մեղադրանքի պատճառով:

<sup>156</sup> Գրականության մեջ այն նաև անվանվում է քրեական դատավարության հատուկ խափանման միջոց՝ պայմանավորված հատուկ սուբյեկտի առկայությամբ (տե՛ս Трунов Н.Л., Трунова Л.К., «Меры пресечения в уголовном процессе». – СПб.: Издательство «Юридический центр Пресс», 2003. (Measures of restraint in criminal procedure) էջ 209):

<sup>157</sup> Տե՛ս՝ Case of Zalyan and Others v. Armenia, 17/03/2016, 36894/04 3521/07:

Թեև զինվորական կարգապահությունը կարող է թելադրել պատժիչ կալանքի կարճ ժամանակահատվածներ, ՄԻԵԴ-ը նշել է, որ «զինվորական կարգապահությունը ... չի ընկնում 5-րդ հոդվածի 1-ին կետի տակ» (Էնգելը և ուրիշներն ընդդեմ Նիդեռլանդների (Engel and others v. Netherlands<sup>158</sup>)): Որոշ չափանիշներ, որոնք նշվել են Էնգելի գործով, պետք է բավարարվեն, որպեսզի կալանքը համապատասխանի 5-րդ հոդվածի 1-ին կետի դրույթներին: Դրանցից մեկն այն է, որ զինծառայողների կալանավորումը վերաբերում է միայն այն դեպքերին, երբ օրենքը թույլ է տալիս անձի կալանավորումը, որպեսզի նրան հարկադրեն կատարել որոշակի և կոնկրետ պարտավորություն՝ համաձայն «օրենքով նախատեսված ցանկացած պարտավորության կատարումն ապահովելու» նպատակի, որը նախատեսված է համապատասխանաբար Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 1-ին կետի (բ) ենթակետի, և որպեսզի կալանքը լինի արդարացված, այն չպետք է ունենա պատժիչ բնույթ: Եվ եթե այն պատժիչ բնույթի է, ապա այն կլինի Կոնվենցիայի խախտում: Ա.Դ.-ն ընդդեմ Թուրքիայի (A.D. v. Turkey<sup>159</sup>) գործը ցույց է տալիս այս հանգամանքը.

*Սույն գործով Դատարանը գտել է, որ դիմումատուին 21-օրյա կալանքը կրել է բանտերում, որոնք վերապահված են սպաների ... համար: Հետևաբար, նա զրկվել էր ազատությունից՝ Կոնվենցիայի 5-րդ հոդվածի իմաստով: Այս կալանքը կայացվել էր նրա զինվորական վերադասի կողմից: Վերջինս իր գործառույթներն իրականացնում է զինվորական հիերարխիայի համաձայն, ենթարկվում է այլ բարձրագույն իշխանություններին և, հետևաբար, վերջիններից անկախ չէ: Ավելին, զինվորական վերադասի կարգապահական վարույթները չեն տրամադրում 5-րդ հոդվածի 1-ին կե-*

<sup>158</sup> Տե՛ս՝ Case of Engel and others v. Netherlands, 08/06/1976, 5100/71 5101/71 5102/71 5354/72 5370/72:

<sup>159</sup> Տե՛ս՝ Case of A.D. v. Turkey, 22/07/2014, 22681/09:

*Կրի «ա» ենթակետով պահանջվող դատական երաշխիքներ: Արդյունքում դիմումատուի համար չի ապահովվել «կալանքի տակ պահելը իրավասու դատարանի կողմից» պայմանը:*

Ամեն դեպքում, այլընտրանքային միջոցները միշտ պետք է հաշվի առնվեն՝ կապված կալանքի տեսակի և այն իրավիճակի հետ, որում կիրառելի է: Զինվորական հսկողության դեպքում, ինչպես նախատեսված է սույն խափանման միջոցով, այն, ըստ էության, այլընտրանք է 5-րդ հոդվածի 1-ին կետի «գ» ենթակետով նախատեսված կալանքին, այսինքն. «իրավախախտում կատարած լինելու հիմնավոր կասկածի առկայության դեպքում նրան իրավասու օրինական մարմինն ներկայացնելու նպատակով կամ այն դեպքում, երբ դա հիմնավոր կերպով անհրաժեշտ է համարվում նրա կողմից հանցագործության կատարումը կամ այն կատարելուց հետո նրա փախուստը կանխելու համար»:

Ի վերջո, այս այլընտրանքային խափանման միջոցի կիրառելիությունը որոշելու համար նախ պետք է հասկանալ, թե Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 1-ին կետի որ դրույթի կամ կետի տակ է ընկնում համապատասխան իրավիճակը:

Պետք է նշել, որ ՀՀ ՔԴՕ 149-րդ հոդվածի 5-րդ մասը սահմանել է, որ իրենց արտականությունները չկատարելու համար հսկողություն իրականացնելու պարտավորություն ստանձնած անձինք կրում են օրենքով նախատեսված պատասխանատվություն, սակայն ՀՀ գործող օրենսդրությունը նման իրավակարգավորումներ չի պարունակում, որպիսի պարագայում գործում է *nullum crimen nulla poena sine lege* (չկա պատասխանատվություն, եթե այն նախատեսված չէ օրենքով) սկզբունքը, և որի հետևանքով էլ սույն խափանման միջոցը վարույթն իրականացնող մարմինների համար, ըստ էության, դիտարկվում է կիրառման տեսանկյունից ոչ այնքան արդյունավետ միջոց:

## ՄՈԴՈՒԼ 4.

### ՕՏԱՐԵՐԿՐԱՑԻՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԱՅԼԸՆՏՐԱՆՔԱՅԻՆ ԽԱՓԱՆՄԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԿԻՐԱՌՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

**Դաս 9.** Օտարերկրացիները՝ ՄԻԵԴ նախադեպային իրավունքի և ընդհանուր միջազգային իրավունքի ներքո և նրանց նկատմամբ կիրառելի միջոցների տեսակները ներպետական օրենսդրության մակարդակում, և այլընտրանքային խափանման միջոցների կիրառման հնարավորությունները

**Դաս 9.** Օտարերկրացիները՝ ՄԻԵԴ նախադեպային իրավունքի և ընդհանուր միջազգային իրավունքի ներքո և նրանց նկատմամբ կիրառելի միջոցների տեսակները ներպետական օրենսդրության մակարդակում, և այլընտրանքային խափանման միջոցների կիրառման հնարավորությունները

Օտարերկրացիների նկատմամբ այլընտրանքային խափանման միջոցների կիրառման առանձնահատկություններն ամենից առաջ պայմանավորված են նրանով, որ վերջիններս չեն հանդիսանում Հայաստանի Հանրապետության քաղաքացի և չունեն համապատասխան իրավունքներ և պարտականություններ: «Օտարերկրացիների մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածը սահմանել է «օտարերկրացիներ» հաս-

կացությունը, համաձայն որի այդ հասկացության մեջ ներառվում են Հայաստանի Հանրապետության քաղաքացի չհամարվող այն անձինք, որոնք ունեն այլ պետության քաղաքացիություն (օտարերկրյա քաղաքացիներ) կամ չունեն որևէ պետության քաղաքացիություն (քաղաքացիություն չունեցող անձինք)<sup>160</sup>:

Այնուամենայնիվ, ՀՀ Սահմանադրության 28-րդ հոդվածը սահմանում է օրենքի առաջ բոլորի հավասարության սկզբունքը, որից ելնելով էլ պետք է նշել, որ քրեադատավարական վարույթում առնվազն պետք է ապահովվի հավասար երաշխիքների հնարավորությունը՝ պայմանավորված վերջիններիս կարգավիճակի օրենքով սահմանված առանձնահատկություններով:

Ըստ էության, ՀՀ քրեական դատավարությունում առկա իրավական ռեժիմներից ելնելով կարելի է նշել, որ առկա են օտարերկրացիների երեք տեսակներ՝ օտարերկրացիներ, որոնք ամբողջությամբ ենթարկվում են ՀՀ իրավասությանը (զբոսաշրջիկներ, ուսանողներ, մասնագետներ և այլոք), օտարերկրացիներ, որոնք ունեն դիվանագիտական անձեռնմխելիություն ամբողջ ծավալով և օտարերկրացիներ, որոնք ունեն սահմանափակ ծավալով դիվանագիտական անձեռնմխելիություն:

Նույնիսկ օտարերկրացիները, որոնք օգտվում են դիվանագիտական անձեռնմխելիությունից, չեն ազատվում ոչ իրավաչափ վարքագծի համար սահմանված պատասխանատվությունից, այլ համապատասխան գործընթացը պետք է տեղի ունենա որոշակի հատուկ երաշխիքների պահպանմամբ<sup>161</sup>:

Ըստ էության, օտարերկրացիներն օգտվում են Կոնվենցիայով նախատեսված հատուկ ռեժիմից: Գոյություն ունեն մի-

<sup>160</sup> ՀՀ ՊՏ 2007.01.24/6 (530):

<sup>161</sup> Տե՛ս՝ Капинус Н.И., Процессуальные гарантии прав личности при применении мер пресечения в уголовном процессе: монография. – М.: Издательский дом «Буквоед», 2007, էջ 379:

ջազգային գործիքներ և հսկայական նախադեպային իրավունք, որոնք սահմանում են օտարերկրացիների կալանավորման հիմքերը և կարգավորում դրա հետ կապված մի շարք սապեկտներ:

Անհրաժեշտ է նշել, որ օտարերկրացիների դեպքում այլընտրանքային միջոցառումները տարբերվում են պետությունից պետություն:

Կոնվենցիան՝ իր 5-րդ հոդվածի 1-ին կետի «գ» ենթակետով, հստակ սահմանում է օտարերկրացիներին կալանավորելու երկու հիմք՝

- Համապատասխան անձի անօրինական մուտքը երկիր կանխելու նպատակով, և
- Այն անձի նկատմամբ, որի դեմ միջոցներ են ձեռնարկվում՝ նրան արտաքսելու կամ հանձնելու նպատակով:

Այս հիմքերը տարբերվում են Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 1-ին կետի «գ» ենթակետով<sup>162</sup> սահմանված նպատակներով կալանքի տակ պահելու հիմքերից: Այսինքն, եթե ՀՀ քաղաքացի չհանդիսացող կամ որևէ երկրի քաղաքացիություն չունեցող անձը մեղադրվում է քրեական օրենքով արգելված որևէ արարք կատարելու մեջ, ապա Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 1-ին կետի «գ» ենթակետի իմաստով այդ անձը չի համարվի օտարերկրացի և համապատասխան դրույթները նրա նկատմամբ կիրառելի չեն լինի:

*Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 1-ին կետի «գ» ենթակետով կիրառելի նորմը չի պահանջում ճանաչել այնպիսի անձի կալանավորման անհրաժեշտության հիմնավորվա-*

<sup>162</sup> Անձի օրինական կալանավորումը կամ ձերբակալումը՝ իրավախախտում կատարած լինելու հիմնավոր կասկածի առկայության դեպքում նրան իրավասու օրինական մարմնին ներկայացնելու նպատակով կամ այն դեպքում, երբ դա հիմնավոր կերպով անհրաժեշտ է համարվում նրա կողմից հանցագործության կատարումը կամ այն կատարելուց հետո նրա փախուստը կանխելու համար:

ծությանը, որի համար ձեռնարկվում են արտահանման միջոցներ, օրինակ՝ իրավախախտման կատարումը կանխելու նպատակով կամ, օրինակ, թաքնվելը թույլ չտալու համար: Այս առումով, 5-րդ հոդվածի 1-ին կետի «զ» ենթակետը նախատեսում է պաշտպանության 5-րդ հոդվածի 1-ին մասի «զ» կետից փարբերվող մակարդակ: «Ձ» ենթակետի միակ պահանջն այն է, որ «ձեռնարկվում են միջոցներ անձին երկրից վտարելու կամ արտահանմանը համար»: Հերևաբար, 5-րդ հոդվածի 1-ին կետի «զ» ենթակետի իմաստով էական չէ, թե վտարման որոշումը հիմնավորված է ազգային օրենսդրությամբ կամ Կոնվենցիային համապատասխան (տես Չահալն ընդդեմ Միացյալ Թագավորության (*Chahal v. the United Kingdom*), պարագրաֆ 112; Յոնկան ընդդեմ Բելգիայի (*Čonka v. Belgium*), պարագրաֆ 38; Նասրուլլոյևն ընդդեմ Ռուսաստանի (*Nasrulloev v. Russia*), պարագրաֆ 69; Սոլդատենկոն ընդդեմ Ուկրաինայի (*Soldatenko v. Ukraine*), պարագրաֆ 109)<sup>163</sup>:

Կոնվենցիան և ՄԻԵԴ-ն օգտագործում են օտարերկրացիների ինքնավար հասկացությունը, ինչն ավելի լայն է և կարող է ներառել փախստականներ, միգրանտներ, ապաստան հայցողներ և այլն, այսինքն՝ ցանկացած այլ անձի, որը չի հանդիսանում տվյալ երկրի քաղաքացի: Այնուամենայնիվ, այլընտրանքային խափանման միջոցների հիմնավորված կիրառումն օտարերկրացիների նկատմամբ պետք է համապատասխանի այն նույն չափորոշիչներին, ինչպիսիք են՝ օրինականությունը, կամայականության բացակայությունը, ազատության կանխավարկածը և 5-րդ հոդվածի 1-ին կետի «զ» ենթակետով նախատեսված կանխավորման հիմքերի անխախտ կիրառումը: Ավելին, կալանա-

<sup>163</sup> Տես՝ Case of *Chahal v. the United Kingdom*, § 112 (15/11/1996, 22414/93); Case of *Čonka v. Belgium*, § 38 (05/02/2002, 51564/99); Case of *Nasrulloev v. Russia*, § 69 (11/10/2007, 656/06); Case of *Soldatenko v. Ukraine*, § 109 (23/10/2008, 2440/07):

վորված օտարերկրացիները պետք է օգտվեն 5-րդ հոդվածի 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված նույն երաշխիքներից: Թեպետև 5-րդ հոդվածի 3-րդ կետով ամրագրված երաշխիքները, որոնք վերաբերում են կալանավորման տակ գտնվելու ողջամիտ ժամկետներին, դատական վերահսկողությանը, ազատ արձակվելու իրավունքին, կիրառելի չեն օտարերկրացիների նկատմամբ, ՄԻԵԴ-ը տարածել է այս երաշխիքներն օտարերկրացիների նկատմամբ: Ըստ այդմ, քրեական դատավարության ընթացքում այլընտրանքային միջոցներին վերաբերող ընդհանուր սկզբունքները *mutatis mutandis* կիրառելի կլինեն օտարերկրացիների նկատմամբ:

Օտարերկրացիների նկատմամբ այլընտրանքային միջոցների կիրառման հարցը պահանջում է առանձին ուշադրություն, քանի որ ունի ընդգրկվածության և կիրառման լայն շրջանակ և իր մեջ ներառում է բազմաթիվ իրավիճակներ: Այն իր մեջ ընդգրկվում է մի շարք հարակից իրավունքներ, ինչպիսիք են՝ ընտանեկան և մասնավոր կյանքի անձեռնմխելիությունը, տեղաշարժման ազատությունը և մի շարք սոցիալական երաշխիքներ, որ կարևոր դերակատարում ունեն այլընտրանքային միջոցների կիրառման մասին որոշում կայացնելու համար: Այնուամենայնիվ, հիմնական սկզբունքը մնում է նույնը, որ օտարերկրացու կալանավորումը պետք է ազատ լինի «կամայականություններից», այսինքն՝ այդպիսի կալանքը պետք է իրականացվի բարեխղճորեն. այն պետք է սերտորեն կապված լինի 5-րդ հոդվածի 1-ին կետի «գ» ենթակետում նշված նպատակների հետ: Այս սկզբունքն օգտագործում է մի շարք այլ հարակից երաշխիքներ, ինչպիսիք են՝ համապատասխան վայրի և պահպանման պայմանների պատշաճությունը՝ հաշվի առնելով այն, որ միջոցը կիրառելի է ոչ թե նրանց համար, ովքեր կատարել են հանցագործություններ, այլ այն անձանց համար, ովքեր, հաճախ վախենալով իրենց կյանքի համար, իրենց սեփական երկրից դիմել են փախուստի: Կալանավորման ժամկետը չպետք է գերազանցի ողջամտորեն պահանջվող այն ժամանակահատվածը, որ անհրաժեշտ է հետապնդվող նպա-



տակի համար (օր.՝ e.g. Saadi v. the United Kingdom [GC], պարագրաֆներ 73, 74<sup>164</sup>):

Այսպիսով, անհրաժեշտ է նշել, որ առկա են երկու հնարավոր ռեժիմներ օտարերկրացիների նկատմամբ խափանման միջոցներ (այդ թվում՝ այլընտրանքային միջոցներ) կիրառելու համար: Առաջինը վերաբերում է քրեական օրենքով արգելված արարք կատարած անձանց նկատմամբ կիրառվող խափանման միջոցներին, որի պարագայում թե՛ ներպետական օրենսդրությունը և թե՛ պետությունների կողմից ստորագրված և վավերացված միջազգային պայմանագրերը շատ մեծ հնարավորություն չեն տալիս կալանքից բացի այլ խափանման միջոցների կիրառման համար: Երկրորդն առընչվում է փախստականների կամ այլ կերպ երկրում անօրինական գտնվող անձանց վտարելու/արտաքսելու, արտահանձնելու հարցերին: Առաջին դեպքում կիրառելի է Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 1-ին կետի «գ» ենթակետը, իսկ երկրորդի դեպքում՝ «գ» ենթակետը: Սակայն խնդիրը բարդանում է այն դեպքերում, երբ Կոնվենցիայի 5-րդ կետի 1-ին կետի «գ» ենթակետի կիրառումը անմիջականորեն կապված է քրեորեն պատժելի արարքի հետ, այսինքն՝ ունի քրեական ենթատեքստ ևս: Նման դեպքերում ևս այլընտրանքային միջոցներն ունեն շատ սահմանափակ կիրառում: Ավելին, ինչպես կտեսնենք, ՀՀ ՔԴՕ-ն նույնիսկ չի նախատեսում գրավի կիրառումը:

Այս առումով ՄԻԵԴ նախադեպային իրավունքով որոշակի հստակություն է մտցվում ոլորտում:

*Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 1-ին կետի (գ) ենթակետի երկրորդ մասով ազատությունից ցանկացած զրկում համարվելու է հիմնավոր, եթե արտաքսման կամ արտահանձնման վարույթներն ընթացքի մեջ են: Եթե նման վարույթները չեն իրականացվի պարտաճ կերպով, ապա կալանքը կդադարի թույլատրելի լինել 5-րդ հոդվածի 1-ին կետի (գ) ենթակետի շրջանակներում (Խլայֆիան և*

<sup>164</sup> Տե՛ս՝ Case of Saadi v. the United Kingdom [GC], 29/01/2008, 13229/03:

այլը ընդդեմ Իտալիա (*Khlaifia and Others v. Italy [GC]*), պարագրաֆ 90; Էյ-ը և այլը ընդդեմ Միացյալ Թագավորության (*A. and Others v. the United Kingdom [GC]*), պարագրաֆ 164; Ամին և այլը ընդդեմ Բելգիայի (*Amie and Others v. Bulgaria*), պարագրաֆ 72<sup>165</sup>):

Կոնվենցիան չի պարունակում դրոյթներ, որոնց պարագայում կարող է իրականացվել հանձնումը կամ ընթացակարգեր, որոնք պետք է նախորդեն հանձնմանը/արտահանձնմանը: Այն հարցի կապակցությամբ, թե արդյոք կալանավորումը «օրինական» էր և համապատասխանում էր «օրենքով սահմանված ընթացակարգին», Դատարանը կրկնել է, որ Կոնվենցիան հիմնականում հղում է կատարում ներպետական իրավունքին և սահմանում է նյութական և դատավարական նորմերին ենթարկվելու պարտավորություն: Այնուամենայնիվ, այն հավելյալ պահանջում է, որ ցանկացած ազատազրկում պետք է համապատասխանի 5-րդ հոդվածի նպատակին, այն է՝ անձանց պաշտպանել կամայականությունից: Դատարանը նաև նշում էր, որ Կոնվենցիան չի խանգարում անդամ պետությունների միջև համագործակցությանը՝ արտահանձնման պայմանագրերի շրջանակներում կամ արտաքսման հարցերում, փախստական հանցագործներին պատասխանատվության ենթարկելու նպատակով՝ պայմանով, որ այն չի խոչընդոտում Կոնվենցիայով ճանաչված որևէ հատուկ իրավունքներին (*Օջալանն ընդդեմ Թուրքիայի (Öcalan v. Turkey [GC])*, պարագրաֆ 86; Ադամովն ընդդեմ Շվեյցարիայի (*Adamov v. Switzerland*), պարագրաֆ 57)<sup>166</sup>:

<sup>165</sup> Տե՛ս՝ Case of *Khlaifia and Others v. Italy [GC]*, 15/12/2016, 16483/12; Case of *A. and Others v. the United Kingdom [GC]*, 19/02/2009, 3455/05; Case of *Amie and Others v. Bulgaria*, 12/02/2013, 58149/08:

<sup>166</sup> Տե՛ս՝ Case of *Öcalan v. Turkey [GC]*, 12/05/2005, 46221/99; Case of *Adamov v. Switzerland*, 21/06/2011, 3052/06:

Երբ արտահանածնման մասին հայցը վերաբերում է այն անձին, որին քրեական մեղադրանք է առաջադրվել հայցող պետությունում, հայցող պետությունը պարտավոր է գործել ավելի մեծ ջանասիրությամբ, քան այն դեպքում, երբ արտահանածնումը հայցվում է պատիժը կատարելու նպատակներով, որպեսզի ապահովի շահագրգիռ անձի իրավունքների պաշտպանությունը (Գալարդո Սանչեսն ընդդեմ Իտալիայի (*Gallardo Sanchez v. Italy*), պարագրաֆ 42)<sup>167</sup>:

Ինչ վերաբերում է պետությունների միջև արտահանածնման վերաբերյալ պայմանավորվածություններին, երբ մեկը Կոնվենցիայի կողմ է, իսկ մյուսը՝ ոչ, ապա արտահանածնման պայմանագրով սահմանված կանոնները կամ, այդպիսի պայմանագրի բացակայության դեպքում, շահագրգիռ պետությունների միջև համագործակցությունը նույնպես հանդիսանում է կարևոր գործոն՝ որոշելու համար նաև այն, թե արդյոք օրինական էր այն կալանավորումը, որը հանգեցրել է հետազայում դատարան ներկայացվող միջնորդության: Այն փաստը, որ պետությունների միջև համագործակցության արդյունքում է փախուստի դիմած անձը հանձնվել, ինքնին չի նշանակում, որ կալանավորումն անօրինական է և, հետևաբար, չի առաջացնում 5-րդ հոդվածով նախատեսված «որևէ խնդիր» (*Օջալանն ընդդեմ Թուրքիայի Öcalan v. Turkey [GC]*), պարագրաֆ 87):

Արտաքսման հետ կապված հարաբերությունները կարգավորված են «Օտարերկրացիների մասին» ՀՀ օրենքով: Մասնավորապես, **արտաքսումը** վերը նշված օրենքով նախատեսված դեպքերում իրավասու պետական մարմնի կողմից օտարերկրացու հարկադիր հեռացումն է ՀՀ-ից<sup>168</sup>:

<sup>167</sup> Տե՛ս՝ *Case of Gallardo Sanchez v. Italy*, 24/03/2015, 11620/07:

<sup>168</sup> Տե՛ս՝ «Օտարերկրացիների մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածը:

Արդարադատության բնագավառում լիազորված պետական մարմինն օտարերկրացու ազատազրկման դատապարտման մասին դատարանի դատավճռի օրինական ուժի մեջ մտնելու մասին անհապաղ տեղեկացնում է ոստիկանության բնագավառում լիազորված պետական մարմնին՝ արտաքսման վերաբերյալ գործ հարուցելու համար:

Օրինական ուժի մեջ մտած դատավճռով օտարերկրացու ազատազրկման դատապարտվելու պատճառով արտաքսման մասին որոշում կայացվելու դեպքում օտարերկրացու մուտքը ՀՀ արգելվում է, եթե օրինական ուժի մեջ մտած արտաքսման մասին որոշումն ի կատար ածելուց հետո ոչ մեծ կամ միջին ծանրության հանցագործություն կատարելու դեպքում չի անցել երեք տարի, ծանր հանցագործություն կատարելու դեպքում՝ հինգ տարի, իսկ առանձնապես ծանր հանցագործություն կատարելու դեպքում՝ ութ տարի<sup>169</sup>:

Եթե «Օտարերկրացիների մասին» ՀՀ օրենքի 30-րդ հոդվածով նախատեսված դեպքերում<sup>170</sup> օտարերկրացին կամավոր չի հեռացել ՀՀ տարածքից, կամ եթե ՀՀ արդարադատության բնագավառում լիազորված պետական մարմինը նույն օրենքի 8-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված դեպքերում տեղե-

<sup>169</sup> Տե՛ս՝ «Օտարերկրացիների մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի 2-րդ մասը:

<sup>170</sup> Տե՛ս՝ **Հոդված 30. Օտարերկրացիների կամավոր հեռանալը Հայաստանի Հանրապետությունից** Օտարերկրացին պարտավոր է կամավոր հեռանալ ՀՀ տարածքից, եթե՝

- ա) լրացել է նրա մուտքի վիզայի կամ կացության կարգավիճակի վավերականության ժամկետը.
- բ) առկա են սույն օրենքի 8-րդ հոդվածի 1-ին և 3-րդ մասերում նշված հիմքերը.
- գ) մերժվել է նրա՝ կացության կարգավիճակ ստանալու կամ ժամկետը երկարաձգելու համար դիմումը.
- դ) նա սույն օրենքի 21-րդ հոդվածում նշված հիմքերով զրկվել է կացության կարգավիճակից:

Սույն հոդվածի 1-ին մասով սահմանված պարտավորությունը չի տարածվում այն օտարերկրացու նկատմամբ, որը օրենքով նախատեսված կարգով գտնվում է մտորման ժամկետում:

կացրել է համապատասխան դատավճռի օրինական ուժի մեջ մտնելու մասին, ապա ՀՀ ոստիկանությունն արտաքսման վերաբերյալ գործ է հարուցում և ներկայացնում դատարան<sup>171</sup>:

Միաժամանակ օտարերկրացին կարող է ձերբակալվել և պահվել հատուկ կացարանում, եթե բավարար հիմքեր կան կասկածելու, որ նա կարող է թաքնվել մինչև դատարանում արտաքսման մասին գործի քննությունը կամ օրինական ուժի մեջ մտած արտաքսման որոշման կատարումը: Օտարերկրացուն ձերբակալելուց և հատուկ կացարանում տեղավորելուց հետո ՀՀ ոստիկանությունը ոչ ուշ, քան 24 ժամվա ընթացքում տեղեկացնում է ձերբակալված օտարերկրացու ծագման պետության դիվանագիտական ներկայացուցչությանը կամ հյուպատոսական հիմնարկին, կամ տվյալ պետության շահերը ներկայացնող այլ պետության դիվանագիտական ներկայացուցչությանը և(կամ) տվյալ օտարերկրացու՝ ՀՀ-ում գտնվող մերձավոր ազգականներին, իսկ 48 ժամվա ընթացքում դիմում է դատարան՝ օտարերկրացուն մինչև 90 օր պահելու թույլտվության վերաբերյալ որոշում ստանալու համար<sup>172</sup>:

Պետք է նշել, որ օտարերկրացիների հանձնումն իրականացվում է ՀՀ ՔԴՕ և ՀՀ միջազգային պայմանագրերով սահմանված կարգով<sup>173</sup>՝ բացառող հանգամանքները հաշվի առնելով: Ինչպիսիք են, մասնավորապես, օտարերկրացիների հանձնումն արգելվում է, եթե այն արարքի համար, որի կատարման համար օտարերկրացիները պատասխանատվության

<sup>171</sup> Տես՝ «Օտարերկրացիների մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածը:

<sup>172</sup> Տես՝ «Օտարերկրացիների մասին» ՀՀ օրենքի 38-րդ հոդվածը:

<sup>173</sup> Տես՝ «Հանձնման մասին» եվրոպական կոնվենցիան, ընդունված 1957թ. դեկտեմբերի 13-ին (ՀՀ ԱԳՆՊՏ 2004.12.20/05(13)), «Քաղաքացիական, ընտանեկան և քրեական գործերով իրավական օգնության և իրավական հարաբերությունների մասին» Քիշնևի կոնվենցիան, ընդունված 2002թ. հոկտեմբերի 7-ին (<https://www.arlis.am/>), «Քաղաքացիական, ընտանեկան և քրեական գործերով իրավական օգնության և իրավական հարաբերությունների մասին» Միսկի կոնվենցիան, ՀՀ-ի համար ուժի մեջ մտած 1994թ. դեկտեմբերի 21-ին (ՀՀ ԱԳՆՊՏ 2004.12.20/3(11)) և այլ:

են կանչվում, նախատեսված է մահապատիժ, կամ լուրջ հիմքեր կան կասկածելու, որ կարող են ենթարկվել խոշտանգումների, դաժան, անմարդկային կամ նվաստացնող պատժի կամ վերաբերմունքի<sup>174</sup>:

Ինչ վերաբերում է ՀՀ տարածքից դուրս հանցագործություն կատարած անձանց հանձնելու նպատակով ժամանակավոր կալանավորմանը, հանձնելու համար կալանավորմանը կամ նախքան հանձնելու մասին խնդրանքը ստանալը կալանավորելուն, ապա պետք է նշել, որ ՀՀ ՔԴՕ 478.3-րդ հոդվածի 7-րդ մասի համաձայն՝ անձին կալանավորումից ազատելու դեպքում նրա նկատմամբ կարող են կիրառվել նույն օրենսգրքի 144–148-րդ հոդվածներով նախատեսված խափանման այլ միջոցներ՝ մինչև 8 ամիս ժամկետով: Փաստորեն, այլընտրանքային խափանման միջոցներ նախատեսված են միայն, երբ դատարանը **կալանավորումից կազափի** համապատասխան անձին, այսինքն՝ ոչ թե ՔԴՕ 478.3-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված կարգով կալանավորում կիրառելու կամ կալանավորման ժամկետը երգարածգելու միջնորդությունները կմերժի: Իսկ **կալանավորումից ազափելու** իրավակարգավորումը, ըստ էության, նախատեսված է այն դեպքերում, երբ հանձնելու նպատակով կալանավորման համար նախատեսված առավելագույն ժամկետը (8 ամիս) լրացած կլինի և անձին հանձնելու հարցը լուծված չի լինի կամ անձը փաստացի հանձնված չի լինի (478.3-րդ հոդվածի 6-րդ մաս):

Միաժամանակ նույնպիսի կարգավորում է նախատեսված այն դեպքերում, երբ առկա չէ միջազգային պայմանագիր քրեական գործերով իրավական օգնություն ցույց տալիս: Մասնավորապես, ՀՀ ՔԴՕ 491-րդ հոդվածի 2-րդ մասը («Հանձնելու համար կալանավորելը») սահմանում է, որ ՀՀ դատարանի կողմից հանձնելու համար կալանավորման միջնորդության քննարկումը կատարվում է նույն օրենսգրքի 478.3-րդ հոդվածի 3-7-րդ մասերով սահմանված կարգով: Իսկ ահա 492-րդ հոդվածի («Նախքան հանձնելու մասին խնդրանքն ստանալը

<sup>174</sup> Տե՛ս՝ «Օտարերկրացիների մասին» ՀՀ օրենքի 40-41-րդ հոդվածները:

կալանավորելը կամ ձերբակալելը») հողվածի 3-րդ մասը նշել է, որ անձին կալանավորելիս կիրառվում են նույն օրենսգրքի 491-րդ հոդվածի 2-րդ մասի կանոնները, այսինքն՝ փաստացի գործում են ՔԴՕ 478.3-րդ հոդվածի իրավակարգավորումները:

Ուշադրության է արժանի այն, որ գրավը չի նախատեսված որպես հնարավոր այլընտրանքային խափանման միջոց այն դեպքերում, երբ քննարկվում է անձի հանձնման համար կալանավորման հարցը ոչ միջազգային պայմանագրերի առկայության դեպքում և ոչ էլ դրանց բացակայության դեպքերում կալանքից ազատելու ժամանակ որպես այլընտրանքային խափանման միջոց: Պետք է նշել, որ որպես այլընտրանք նախատեսված չէ նաև հրամանատարությանը հանձնելը, սակայն հասկանալի է, որ նման խափանման միջոցն իր սուբյեկտային առանձնահատկությամբ չի կարող երբևիցե իրականության մեջ կիրառելի լինել՝ ինչը տարօրինակ է գրավի պարագայում: Եվ միակ բացատրությունը գրավի չկիրառման առումով, ըստ էության, հանգում է այն մտքին, որ ՀՀ գործող օրենսդրությունը գրավը դիտարկում է միայն և միայն որպես կալանքի առկայության դեպքում վերջինիս պայմանների և հիմքերի ռիսկայնության աստիճանի նվազման որոշակի այլընտրանք, և չի դիտարկում գրավը որպես ինքնուրույն խափանման միջոցի: Այսինքն, քանի որ ՔԴՕ 478.3-րդ հոդվածի իրավակարգավորումները միայն վերաբերելի են **կալանքից ազատելու** դեպքերում այլընտրանքներ կիրառելու հնարավորությանը, ուստիև գրավը չէր կարող գոյություն ունենալ:

Ինչ վերաբերում է դիվանագիտական անձեռնմխելիությունից օգտվող անձանց խափանման միջոցների առանձնահատկություններին, ապա պետք է նշել, որ դիվանագիտական անձեռնմխելիությունից օգտվող անձինք կարող են գտնվել ՀՀ իրավասության ներքո այն դեպքում, երբ համապատասխան օտարերկրյա պետությունը կամ միջազգային կազմակերպու-

<sup>175</sup> Տե՛ս՝ ՀՀ ՔԴՕ 44-րդ հոդվածը:

թյունը դրա առնչությամբ կտա հստակ համաձայնություն<sup>175</sup>: Միաժամանակ ՀՀ ՔԴՕ 445-րդ հոդվածի համաձայն.

*Դիվանագիտական անձեռնմխելիությունից օգտվում են հետևյալ անձինք՝*

- 1) օտարերկրյա պետության դիվանագիտական ներկայացուցչությունների ղեկավարները, այդ ներկայացուցչությունների դիվանագիտական անձնակազմի անդամները և նրանց ընտանիքների համատեղ բնակվող անդամները, եթե նրանք Հայաստանի Հանրապետության քաղաքացի չեն.
- 2) փոխադարձության հիման վրա դիվանագիտական ներկայացուցչությունների վարչական-տեխնիկական անձնակազմի աշխատակիցները և նրանց ընտանիքների համատեղ բնակվող անդամները, եթե նրանք Հայաստանի Հանրապետության քաղաքացի չեն և մշտապես չեն բնակվում Հայաստանի Հանրապետությունում.
- 3) փոխադարձության հիման վրա դիվանագիտական ներկայացուցչության սպասարկող անձնակազմի աշխատակիցները, որոնք Հայաստանի Հանրապետության քաղաքացի չեն և մշտապես չեն բնակվում Հայաստանի Հանրապետությունում.
- 4) դիվանագիտական սուրհանդակները.
- 5) հյուպատոսական հիմնարկների ղեկավարները և այլ պաշտոնատար անձինք.
- 6) օտարերկրյա պետության ներկայացուցիչները, խորհրդարանական և կառավարական պատվիրակությունների անդամները և, փոխադարձության հիմքով, օտարերկրյա պետության այն պատվիրակությունների անդամները, որոնք ժամանել են միջազգային բա-



նակցությունների, միջազգային վեհաժողովների և խորհրդակցությունների կամ այլ պաշտոնական հանձնարարություններով կամ նույն նպատակներով Հայաստանի Հանրապետության տարածքում գտնվում են տարանցիկ, նշված անձանց ընտանիքի անդամները, որոնք ուղեկցում են նրանց և Հայաստանի Հանրապետության քաղաքացի չեն:

- 7) միջազգային կազմակերպություններում օտարերկրյա պետության ներկայացուցչությունների ղեկավարները, անդամները և անձնակազմը, դրանց պաշտոնատար անձինք, որոնք Հայաստանի Հանրապետության տարածքում գտնվում են միջազգային համաձայնագրերի կամ միջազգային հանրաճանաչ սովորույթների ուժով:
- 8) երրորդ պետությունում դիվանագիտական ներկայացուցչությունների ղեկավարները, օտարերկրյա պետության դիվանագիտական ներկայացուցչությունների դիվանագիտական անձնակազմի անդամները, որոնք Հայաստանի Հանրապետության տարածքում գտնվում են տարանցիկ, և նրանց ընտանիքի անդամները, որոնք ուղեկցում են նշված անձանց կամ ճանապարհորդում են առանձին՝ նրանց միանալու կամ իրենց պետություն վերադառնալու նպատակով:

Վերը նշված անձինք Հայաստանի Հանրապետությունում օգտվում են քրեական հետապնդման անձեռնմխելիությունից: Այսինքն, այդպիսի անձանց որպես կասկածյալ կամ մեղադրյալ ներգրավելու, ինչպես նաև այլ դատավարական գործողությունները, այդ թվում՝ նաև խափանման միջոց կիրառելու հարցը լուծվում է դիվանագիտական ճանապարհով:

Ինչ վերաբերում է դիվանագիտական ներկայացուցչությունը սպասարկող անձնակազմի աշխատակիցներին, որոնք ՀՀ քաղաքացի չեն և մշտապես չեն բնակվում ՀՀ-ում, ապա վերջիններս, ինչպես նաև հյուպատոսական հիմնարկների ղեկավարները և այլ պաշտոնատար անձինք ՀՀ-ում օգտվում են

քրեական հետապնդման անձեռնմխելիությունից միայն իրենց գործունեության ոլորտում ծառայողական պարտականությունները կատարելիս<sup>176</sup>:

Այսպիսով, օտարերկրացիների նկատմամբ խափանման միջոցներ ընտրելիս պետք է հաշվի առնել այն հանգամանքը, թե դրանք քրեական օրենքով արգելված արարքի մեղսագրման հետևանքով իրականացվող վարույթային միջոց է, թե երկրում անօրինական գտնվող անձի արտաքսման կամ արտահանձնման համար անհրաժեշտ իրավական գործիք, ինչպես նաև համապատասխան անձինք օգտվում են արդյոք դիվանագիտական անձեռնմխելիությունից, թե՞ ոչ: Ինչպես նշվել է վերևում խնդիրը բարդանում է այն ժամանակ, երբ Կոնվենցիայի 5-րդ կետի 1-ին կետի «զ» ենթակետի կիրառումն անմիջականորեն կապված է քրեորեն պատժելի արարքի հետ, այսինքն, ունի քրեական ենթատեքստ ևս: Նման դեպքերում ևս այլընտրանքային միջոցներն ունեն շատ սահմանափակ կիրառում: Ավելին, ինչպես տեսանք վերևում, ՀՀ ՔԴՕ-ն նույնիսկ չի նախատեսում գրավի կիրառումը:

<sup>176</sup> Տե՛ս՝ ՀՀ ՔԴՕ 447-րդ հոդվածը:

## ՄՈԴՈՒԼ 5.

### ԽԱՓԱՆՄԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԿԻՐԱՌՈՒՄԸ ԴԱՏԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅԱՆ ՓՈՒԼՈՒՄ

#### Դաս 10. Դատական քննության փուլում այլընտրանքային խափանման միջոցների կիրառումը

#### Դաս 10. Դատական քննության փուլում այլընտրանքային խափանման միջոցների կիրառումը

Խափանման միջոցների կիրառման հիմնավորվածությունը ենթակա է քննության ինչպես նախնական քննության, այնպես էլ դատական քննության նախապատրաստման և դատական քննության փուլերում: Այս առումով ուշադրության են արժանի ՀՀ Սահմանադրական դատարանի երկու որոշումներ՝ ՍԴՈ-1421<sup>177</sup> և ՍԴՈ-1487<sup>178</sup>, որոնք կներկայացվեն սույն մոդուլի

<sup>177</sup> Տես՝ ՀՀ Սահմանադրական դատարանի 2018 թվականի հունիսի 26-ի «ՀՀ վճռաբեկ դատարանի դիմումների հիման վրա՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 300-րդ հոդվածի՝ ՀՀ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ գործով» թիվ ՍԴՈ-1421 որոշումը: Հասանելի է նաև համացանցային <http://www.concourt.am/armenian/decisions/common/2018/pdf/sdv-1421.pdf> հասցեով, վերջին մուտք՝ 03.01.2020թ., ժամը 20:32:

<sup>178</sup> Տես՝ ՀՀ Սահմանադրական դատարանի 2019թ. նոյեմբերի 6-ի «Արտակ Գալստյանի և ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի դիմումների հիման վրա՝ քրեական դատավարության օրենսգրքի 376.1-ին հոդվածի 4-րդ կետի՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ գործով» թիվ ՍԴՈ-1487 որոշումը: Հասանելի է նաև համացանցային <http://www.concourt.am/armenian/decisions/common/2019/pdf/sdv-1487.pdf> հասցեով, վերջին մուտք՝ 03.01.2019թ., ժամը 20:37:

շրջանակներում՝ նպատակ ունենալով ցույց տալ համակարգային այն փոփոխությունները, որոնք առաջ բերվեցին այս որոշումների ընդունմամբ:

Ճիշտ է, այս որոշումներն առավելապես արտացոլում են անձի ազատությունից զրկման հետ կապված հարաբերություններում առաջարկվող լուծումները, սակայն, ըստ էության, դրանք իրենց ընդհանուր սկզբունքներով առնչվում են նաև ազատության սահմանափակման հարցերին, այսինքն՝ նաև խափանման այլընտրանքային միջոցներին:

Մասնավորապես, ՍԴՈ-1421 որոշմամբ Սահմանադրական դատարանը նշել է, որ.

*Անձի իրավունքների պաշտպանության օրենսդրական երաշխիք է, ի թիվս այլնի, նաև այն, որ դատարանը, դատական քննության ժամանակ, լսելով ամբաստանյալի բացատրությունները, կողմերի կարծիքները, իրավունք ունի ամբաստանյալի նկատմամբ ընտրել, փոխել կամ վերացնել խափանման միջոցը (Օրենսգրքի 312-րդ հոդված):*

*Սահմանադրական դատարանը փաստում է, որ, ի տարբերություն վերը նշվածի՝ գործը դատական քննության նախապատրաստելու շրջանակներում դատարանի կողմից առանց մեղադրյալի և/կամ նրա պաշտպանի մասնակցության մեղադրյալի նկատմամբ կալանքը որպես խափանման միջոց ընտրելու կամ չընտրելու, կալանքը որպես խափանման միջոց ընտրված լինելու դեպքում դրա հիմնավոր լինելու կամ չլինելու հարցը քննելու ժամանակ, մասնավորապես, **անձնական ազատության, արդար դատաքննության իրավունքների, քրեական դատավարության ընթացքում մրցակցության սկզբունքի ապահովման օրենսդրական երաշխիքներ նախատեսված չեն:** Օրենսդիրն այս առումով միայն սահմանել է գործը դատական քննության նախապատրաստելու*

փուլում մեղադրյալի նկատմամբ խափանման միջոցներ ընտրելու կամ չընտրելու և խափանման միջոցն ընտրված լինելու դեպքում դրա տեսակի հիմնավոր լինելու կամ չլինելու հարցը քննելու դատարանի պարտավորությունը (Օրենսգրքի 300-րդ հոդված), որը դատարանն իրականացնում է՝ առանց դատական նիստ հրավիրելու:

(...)

Անձնական ազատության իրավունքի սահմանափակման սահմանադրաիրավական չափորոշիչներին Սահմանադրական դատարանն անդրադարձել է նաև 2016 թվականի սեպտեմբերի 2-ի ՍԴՈ-1295 որոշմամբ՝ ամրագրելով, որ ՀՀ Սահմանադրության 27-րդ հոդվածի նորմերի իրավական բովանդակությունից անմիջականորեն բխում է, որ, մասնավորապես.

- անձնական ազատությունից զրկելու իրավական չափանիշները սահմանվում են Սահմանադրությամբ,
- անձնական ազատությունից զրկելու կարգը սահմանվում է օրենքով,
- անձն իրավունք ունի դատական կարգով վիճարկելու իրեն ազատությունից զրկելու իրավաչափությունը:

Սույն գործի շրջանակներում ևս, վերահաստատելով վերոհիշյալ իրավական դիրքորոշումները, Սահմանադրական դատարանը կարևոր է համարում անձնական ազատության իրավունքի սահմանափակման սահմանադրաիրավական չափորոշիչների պահպանումը, հատկապես անձին ազատությունից զրկելու իրավաչափության նկատմամբ դատական վերահսկողության իրականացումը նաև գործը դատական քննության նախապարտապետելու փուլում:

(...)

Այս կապակցությամբ Սահմանադրական դատարանը ՍԴՈ-1295 որոշմամբ ամրագրել է հետևյալը. «...ազատությունից զրկելու հետ կապված հարկադրանքի միջոցների կիրառումից պաշտպանվելու իրավունքն իր սահմանադրաիրավական բովանդակությամբ չի կարող բացառել անձի՝ անձամբ պաշտպանվելու իրավունքը, եթե առկա է վերջինիս կողմից հստակ արտահայտված համապատասխան ցանկություն (դատավարական միջնորդություն): ... **Սահմանադրական դատարանը կարևոր է համարում արդար դատաքննության իրավունքի բաղադրարարը հանդիսացող՝ անձի՝ լսվելու (անձամբ պաշտպանվելու) իրավունքի իրացումն ինչպես առաջին աստիճանի դատարանում, այնպես էլ դատական բողոքարկման (ստուգման) հետագա ընթացակարգերում»:**

(...)

Սահմանադրական դատարանը գտնում է, որ անձնական ազատության սահմանադրական իրավունքի սահմանափակումն իրավաչափ է միայն դատարանի որոշմամբ, որն ընդունվել է դատական նիստում՝ դատարանի կողմից կալանքը որպես խափանման միջոց ընտրելու, ինչպես նաև ընտրված կալանքի հիմքերի և հիմնավորումների համակողմանի և անաչառ քննության, այդ թվում՝ մեղադրյալի և/կամ նրա պաշտպանի՝ իր դիրքորոշումը դատարանին ներկայացնելու հնարավորության առկայության դեպքում:

Ելնելով վերոգրյալից՝ Սահմանադրական դատարանը գտնում է, որ սույն գործով վիճարկվող իրավակարգավորումն այն մասով, որ չի նախատեսում գործը դատական քննության նախապարաստելիս դատարանի կողմից մեղադրյալի նկատմամբ կալանքը որպես խափանման միջոց ընտրելու կամ չընտրելու և կալանքը որպես խա-

փանման միջոց ընտրված լինելու դեպքում դրա հիմնավոր լինելու կամ չլինելու հարցի քննությանը մեղադրյալի և/կամ նրա պաշտպանի մասնակցության հնարավորություն, չի ապահովում անձի՝ դատարանի կողմից լսվելու սահմանադրական իրավունքի իրացումը՝ օրենքով սահմանված կարգով: Հետևաբար, այն չի համապատասխանում նաև արդար դատաքննության չափանիշներին:

(...)

Սահմանադրական դատարանը գտնում է, որ քրեական գործը դատական քննության նախապատրաստելու ժամանակ դատարանի կողմից առանց մեղադրյալի և/կամ նրա պաշտպանի մասնակցության մեղադրյալի նկատմամբ կալանքը որպես խափանման միջոց ընտրելու և ընտրված կալանքը հիմնավոր համարելու հարցի քննությունը չի սահմանափակում անձին՝ իրեն ազատությունից զրկելու իրավաչափությունը վիճարկելու հնարավորությունը՝ դատական բողոքարկման (ստրուգման) ձևով դրսևորվելու դեպքում:

(...)

Սահմանադրական դատարանը գտնում է, որ անձի սահմանադրական իրավունքների պատշաճ պաշտպանության երաշխավորումը քրեական վարույթի շրջանակներում հավասարապես հասանելի պետք է լինի ինչպես գործի դատական քննության, այնպես էլ դատական քննության նախապատրաստման շրջանակներում, ինչը կարևոր երաշխիք է արդար դատաքննության իրավունքի իրացման ապահովման տեսանկյունից:

(...)

ՄԻԵԴ-ի նախադեպային իրավունքի շրջանակներում առկա են նաև գործը դատական քննության նախապատրաստելու փուլում դատարանի կողմից կալանքի՝ որպես

խափանման միջոցի, հարցի քննության ժամանակ մեղադրյալի իրավունքների երաշխավորման խնդրին անմիջականորեն վերաբերող իրավական դիրքորոշում: Մասնավորապես, Խողորկովսկին ընդդեմ Ռուսաստանի Դաշնության գործով 2011թ. մայիսի 31-ի վճռով (գանգադր թիվ 5829/04) ՄԻԵԴ-ը գործը դատական քննության նախապատրաստելու փուլում, առանց դատական նիստ նշանակելու, կալանքն անփոփոխ թողնելը և կալանքի հարցի քննությունը դիմումատուի կամ իր փաստաբանի բացակայության պայմաններում գնահատել է որպես անձի՝ Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 4-րդ մասով ամրագրված իրավունքների խախտում:

(...)

Հարկ է նաև նշել, որ քննարկվող հարցին վերաբերելի իրավունքներին անդրադարձ կատարվել է նաև մարդու իրավունքների միջազգային մի շարք այլ փաստաթղթերում, մասնավորապես, Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագրի (ընդունվել է ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի 1966 թվականի դեկտեմբերի 16-ի 2200 Ա (XXI) բանաձևով) 9-րդ հոդվածի 4-րդ մասով և Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեի 2006 թվականի սեպտեմբերի 27-ի թիվ Rec(2006)13 հանձնարարականի 28-րդ կետով:

Ելնելով վերոգրյալից՝ Սահմանադրական դատարանը գտնում է, որ սույն գործով վիճարկվող իրավակարգավորումն այն մասով, որը չի նախատեսում գործը դատական քննության նախապատրաստելիս դատարանի կողմից մեղադրյալի նկատմամբ կալանքը որպես խափանման միջոց ընտրելու կամ չընտրելու և կալանքը որպես խափանման միջոց ընտրված լինելու դեպքում դրա հիմնավոր լինելու կամ չլինելու հարցի քննությանը մեղադրյալի և/կամ նրա պաշտպանի մասնակցության հնարավորու-



թյուն, համահունչ չէ ՀՀ վավերացրած՝ մարդու իրավունքների վերաբերյալ միջազգային պայմանագրերի հիման վրա գործող մարմինների պրակտիկայի շրջանակներում ձևավորված անձնական ազատության իրավունքի սահմանափակման չափորոշիչներին:

(...)

Սահմանադրական դատարանը գտնում է, որ մինչև Ազգային ժողովի կողմից համապատասխան իրավակարգավորումներ սահմանելը **դատական պրակտիկան պետք է առաջնորդվի այն մտպեցմամբ, որ քրեական գործը դատական քննության նախապարաստելիս դատարանի կողմից մեղադրյալի նկատմամբ կալանքը որպես խափանման միջոց ընտրելու կամ չընտրելու և կալանքը որպես խափանման միջոց ընտրված լինելու դեպքում դրա հիմնավոր լինելու կամ չլինելու հարցի քննությանը պետք է ապահովվի, մասնավորապես, մեղադրյալի և/կամ նրա պաշտպանի մասնակցության հնարավորությունը (ինչպես նախատեսված է Օրենսգրքի, մասնավորապես, 285 և 312-րդ հոդվածներով)**՝ առաջնորդվելով անձնական ազատության իրավունքի, արդար դատաքննության բաղադրարար հանդիսացող լավելու իրավունքի լիարժեք և արդյունավետ իրացման, քրեական դատավարության ընթացքում մրցակցության սկզբունքի ապահովման անհրաժեշտությամբ:

Այսինքն, այս որոշումը սկիզբ դրեց այնպիսի դատական պրակտիկայի, որի արդյունքում դատական քննության նախապատրաստության ընթացքում խափանման միջոցի (ներկայումս դեռևս միայն կալանքի դեպքում) ընտրելու կամ չընտրելու և դրա տեսակի հիմնավոր լինելու կամ չլինելու հարցը քննության առնելու համար առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանները պարտադիր նիստեր են

նշանակում՝ փորձելով ապահովել մրցակցային դատավարությանը նաև այս հարցում: Միաժամանակ այս նիստերի արդյունքում կայացված որոշումները փաստացի դարձան նաև վերաքննիչ դատարանի կողմից ստուգման ենթակա որոշումներ՝ ի տարբերություն դատաքննության փուլում կալանքն անփոփոխ թողնելու կամ գրավը մերժելու վերաբերյալ և նմանատիպ այլ որոշումները, որոնց բողոքարկման մասին կխոսենք ներքևում:

Միևնույն ժամանակ պետք է նշել, որ ՀՀ վճռաբեկ դատարանն իր՝ Նարեկ Հարությունյանի վերաբերյալ 2016 թվականի մարտի 30-ի թիվ ԵԱՆԴ/0081/01/14 որոշմամբ<sup>179</sup> նշել է, որ.

*... Այլ խոսքով՝ գործի ըստ էության քննության ընթացքում դատարանի կողմից ամբաստանյալի նկատմամբ խափանման միջոց ընտրելու, փոփոխելու կամ վերացնելու հարցերի լուծումը գտնվում են նրա՝ արդարադատության իրականացման պատշաճ կազմակերպման լիազորության ոլորտում: Միևնույն ժամանակ հաշվի առնելով, որ կալանքի՝ որպես խափանման միջոցի հետ կապված հարցերը սերտորեն առնչվում են անձի ազատության իրավունքի էական սահմանափակման հետ, իսկ մյուս կողմից՝ ենթադրում առավել արժեքավոր հանրային շահի հնարավոր առկայություն՝ օրենսդիրը կալանքը որպես խափանման միջոց ընտրելու, փոփոխելու կամ վերացնելու վերաբերյալ առաջին աստիճանի դատարանի որոշումներն ընդգրկել է վերաքննիչ բողոքարկման առարկայի շրջանակում:*

*Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում արձանագրել, որ առաջին աստիճանի դատարանի կողմից անձի նկատմամբ կալանքը որպես խափանման միջոց ընտրելու, փոփոխելու կամ վերացնելու մասին որոշում-*

<sup>179</sup> Հասանելի է համացանցային <https://www.arlis.am/> հասցեում, վերջին մուտք՝ 27.01.2020թ., ժամը 18:16:

ների կայացումը և վերջիններիս՝ վերաքննության կարգով վերանայումն իրականացվում են տարբեր դատավարական գործառույթների շրջանակներում: Անձի նկատմամբ կալանքը որպես խափանման միջոց ընտրելու, փոփոխելու կամ վերացնելու մասին ընդհանուր իրավասության դատարանի որոշումը կայացվում է գործի ըստ էության քննության շրջանակներում, իսկ վերաքննիչ դատարանի կողմից նշված ակտերի վերանայումը՝ ստորադաս դատարանի որոշումների ստուգման և վերանայման վերադաս դատական արյանի գործառույթի շրջանակներում:

Վերոնշյալի հիման վրա Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ մրցակցող արժեքների՝ մի կողմից՝ արդարադատության իրականացման դատարանի լիազորության, իսկ մյուս կողմից՝ անձի ազատության իրավունքի և դրան հակակշռող հանրային շահի համարժեք ապահովման անհրաժեշտությունից ելնելով՝ քննարկվող որոշումների վերաքննիչ վերանայման սահմանները ողջամտորեն պետք է նեղ լինեն մինչդատական վարույթի նկատմամբ դատական վերահսկողության շրջանակներում կալանքի կապակցությամբ կայացվող որոշումների վերանայման սահմաններից: Մասնավորապես՝ քննարկվող որոշումների վերանայման շրջանակներում չեն կարող քննարկվել այնպիսի հարցեր, որոնք այս կամ այն չափով առնչվում են գործի ըստ էության լուծմանը: Այդպիսիք են, օրինակ՝ հիմնավոր կասկածի առկայության, արարքի որակման, որոշման հիմքում դրված ապացույցների թույլատրելիության հետ կապված հարցերը և այլն:

Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում ընդգծել, որ քննարկվող որոշումների վերաքննիչ վերանայման սահմանների լայն մեկնաբանումը կհանգեցնի կոնկրետ գործով արդարադատություն իրականացնող

*առաջին արյանի դարարանի գործունեությանն անհարկի միջամտության և կվտանգի դարավորի ներքին անկախությունը:*

Այնուամենայնիվ, դատական քննության փուլում կալանքի վիճարկման ժամանակ հիմնավոր կասկածի առկայությունը չքննարկելու իրավակիրառ պրակտիկա դեռևս չի ձևավորվել՝ այն պայմաններում, երբ, օրինակ՝ բողոք ներկայացվել է պաշտպանի կամ ամբաստանյալի կողմից, որոնք իրենց անհամաձայնությունն են հայտնել նաև հիմնավոր կասկածի վերաբերյալ, թեպետև որոշ դատավորներ, թե առաջին ատյանում և թե վերաքննիչ դատարանում ունեցել են նման փորձեր:

Ինչ վերաբերում է կալանքից բացի այլ խափանման միջոցի վերաբերյալ մոտեցումներին, ապա պետք է նշել, որ ՍԴՈ-1421 որոշմամբ Սահմանադրական դատարանն, ըստ էության, խոսում է ոչ միայն ազատությունից զրկման, այլ նաև դրա սահմանափակման հարցերի վերաբերյալ և կարևորում դրա նկատմամբ դատական վերահսկողության իրականացումը նաև դատական քննության նախապատրաստելու փուլում:

*Սահմանադրական դարարանը կարևոր է համարում անձնական ազատության իրավունքի սահմանափակման սահմանադրաիրավական չափորոշիչների պահպանումը ...*

Միաժամանակ արդար դատաքննության վերաբերյալ վերոնշյալ որոշմամբ արտահայտված մոտեցումները չեն կարող չվերաբերել այլընտրանքային խափանման միջոցներին, որոնք այս կամ այն ծավալով խստագույնս սահմանափակում են անձի Կոնվենցիայով նախատեսված իրավունքները:

Ինչ վերաբերում է ՍԴՈ-1487 որոշմանը, ապա պետք է ասել, որ այն վերաբերում որպես խափանման միջոց ընտրված կալանքը փոփոխելու կամ վերացնելու միջնորդությունները մերժելու (որպես խափանման միջոց ընտրված կալանքը չփոփոխելու կամ չվերացնելու) մասին որոշումների վերաքննության կարգով անմիջական բողոքարկմանը:

ՀՀ ՔԴՕ 376.1-ին հոդվածի 4-րդ կետով սահմանվում է, որ վերաքննության կարգով բողոքարկման ենթակա են առաջին ատյանի դատարանների՝ **կալանքը որպես խափանման միջոց ընտրելու, փոփոխելու կամ վերացնելու մասին որոշումները**: Փաստացի ստացվում է, որ **որպես խափանման միջոց ընտրված կալանքը փոփոխելու կամ վերացնելու միջնորդությունները մերժելու մասին որոշումները** ենթակա չեն վերաքննիչ բողոքարկման:

Վճռաբեկ դատարանը ևս անդրադարձել է քննության առարկա հարցին, մասնավորապես, իր՝ 2018 թվականի մարտի 20-ի ԵԿԴ/0274/01/15 քրեական գործով կայացրած որոշմամբ: Դրանով Վճռաբեկ դատարանը, ի թիվս այլնի, նշել է, որ « ... քրեադատավարական օրենքը չի նախատեսում ընտրված խափանման միջոց կալանավորումը չփոփոխելու (ներառյալ՝ կալանքը գրավով փոխարինելու մասին միջնորդությունը մերժելու) մասին առաջին ատյանի դատարանի՝ դատական քննության նախապատրաստելու փուլի ավարտից հետո (այլ կերպ՝ դատական քննություն նշանակելու մասին որոշման կայացումից հետո դատական նիստում դատավարության համապատասխան մասնակիցների մասնակցությամբ քննարկումների արդյունքների հիման վրա) կայացրած որոշման՝ վերաքննության կարգով անմիջական բողոքարկման հնարավորություն»<sup>180</sup>:

Սակայն Սահմանադրական դատարանը նշել է, որ.

*... անձնական ազատությունից զրկելու հետ կապված հարկադրանքի միջոցների կիրառումից պաշտպանվելու իրավունքի իրացման միջազգային իրավական չափանիշները սահմանված են միջազգային իրավական մի շարք փաստաթղթերում, մասնավորապես՝*

- *Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցի-*

<sup>180</sup> Տե՛ս՝ ՀՀ ՊՏ 2018.11.07/83(1441):

այի (այսուհետ՝ Կոնվենցիա) 5-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ յուրաքանչյուր ոք, ով ձերբակալման կամ կալանավորման պատճառով զրկված է ազատությունից, իրավունք ունի վիճարկելու իր կալանավորման օրինականությունը, որի կապակցությամբ դատարանն անհապաղ որոշում է կայացնում և կարգադրում է նրան ազատ արձակել, եթե կալանավորումն անօրինական է,

- Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագրի 9-րդ հոդվածի 4-րդ մասով սահմանվում է, որ ձերբակալման կամ կալանքի տակ պահվելու հետևանքով ազատագրված յուրաքանչյուր անձ օժտված է դատարանում իր գործի քննության իրավունքով, որպեսզի այդ դատարանը կարողանա անհապաղ որոշում կայացնել նրա ձերբակալման օրինականության վերաբերյալ և նրան ազատելու որոշում կայացնի, եթե ձերբակալումն անօրինական է,
- Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեի 2006 թվականի սեպտեմբերի 27-ի «Կալանավորման, դրա կիրառման պայմանների և չարաշահման դեմ երաշխիքների վերաբերյալ» Rec (2006)13 հանձնարարականի 19-րդ կետի համաձայն՝ «(1) Կալանքի տակ գտնվող անձը պետք է հատուկ իրավունք ունենա արագացված ընթացակարգով բողոքարկելու իր կալանավորման օրինականությունը դատարանում: (2) Այդ իրավունքը կարող է իրականացվել կալանքի կիրառման վերաբերյալ որոշման պարբերաբար վերանայման միջոցով, որի ընթացքում կարող են քննարկվել կալանավորված անձի կողմից բարձրացված բոլոր հարցերը»:

(...)

**... անձնական ազատությունից զրկելու՝ կալանքի իրավաչափությունը վիճարկելու իրավունքի իրացման համար անհրաժեշտ են իրավական այնպիսի երաշխիքներ, որոնք, մասնավորապես, կապահովեն կալանքի իրավաչափության ստուգման ողջամիտ պարբերականությունը, կողմերի՝ իրենց դիրքորոշումները պաշտպանելու հավասար հնարավորությունները և կլինեն արդյունավետ՝ չխախտելով անձնական ազատությունից զրկելու՝ կալանքի իրավաչափությունը վիճարկելու իրավունքի էությունը:**

(...)

Ինչ վերաբերում է կալանքի իրավաչափության ստուգման ողջամիտ պարբերականությանը, ապա գործող իրավակարգավորումներով այն առաջին արյանի դատարանի կողմից իրականացվում է միայն մինչդատարանական վարույթում: Դատարան քննության փուլի ողջ ընթացքում արդեն ընտրված խափանման միջոց կալանքի իրավաչափության ստուգման միակ նախադրյալ կարող է հանդիսանալ այն փոփոխելու կամ վերացնելու վերաբերյալ կողմի միջնորդությունը: Նման միջնորդության բացակայության դեպքում դատարանի վրա օրենսդրորեն դրված է կալանքի իրավաչափությունը ստուգելու որևէ պարտականություն: Դատարան քննության փուլում կալանքի իրավաչափության ստուգումը ձևավորված իրավակիրառական պրակտիկայում վերադաս դատարանական արյանների քննարկման առարկա է դառնում միայն առաջին արյանի դատարանում գործի վարույթի ավարտից հետո, այլ ոչ թե դրա ընթացքում:

**Սահմանադրական դատարանի գնահատմամբ՝ նման վիճակը համահունչ է անձնական ազատությունից զրկելու՝ կալանքի իրավաչափությունը վիճարկելու իրավունքի իրացումն ապահովելու սահմանադրական և միջազգային չափանիշներին:**

(...)

Սահմանադրական դատարանը գտնում է, որ պաշտպանության կողմի համար վերը նշված հնարավորության բացակայության դեպքում մրցակցության սկզբունքի լիարժեք իրացումը չի ապահովվում, հետևաբար՝ **կալանքի իրավաչափության վիճարկման հարցում վերադաս դատական ատյաններում պաշտպանության կողմը պետք է ունենա նույն իրավունքները, հնարավորությունները, ինչ առաջին ատյանի դատարանում:**

(...)

Հարկ է ընդգծել նաև, որ ... ՄԻԵԴ-ն (Moiseyev v. Russia գործով 2008թ. հոկտեմբերի 9-ի վճիռ, գանգապ թիվ 62936/00, § 160-163) արձանագրել է Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 4-րդ մասի խախտում այն պատճառով, որ **վերադաս դատական ատյանն անհապաղ չի քննել անձի՝ իրեն կալանքից ազատելու միջնորդությունը մերժելու մասին դատարանի որոշման դեմ բերված բողոքը:**

Վերոգրյալի հիման վրա Սահմանադրական դատարանը գտնում է, որ **պաշտպանության կողմի՝ որպես խափանման միջոց ընտրված կալանքի փոփոխման կամ վերացման միջնորդությունների մերժման մասին որոշումների անմիջական բողոքարկման հնարավորություն նախատեսելու անհրաժեշտությունը բխում է նաև Սահմանադրության 27-րդ հոդվածի 5-րդ մասով ամրագրված «սեղմ ժամկետի» պահանջից, որով ապահովվում է նաև հիշյալ մասով սահմանված հիմնական իրավունքի արդյունավետ իրացումը:**

(...)

Սահմանադրական դատարանը գտնում է, որ, երբ գործն ըստ էության չլուծող դատական ակտով սահմանափակվում է անձնական ազատության հիմնական իրա-



վունքը, ապա այդ իրավունքի պաշտպանությունն արդյունավետ է չի իրացվում հետաձգված բողոքարկման միջոցով, քանի որ անձը դատական քննության ողջ ընթացքում շարունակում է մնալ կալանքի տակ անորոշ ժամկետով՝ չունենալով այդ ընթացքում կալանքի իրավաչափությունը բողոքարկելու հնարավորություն:

Քրեական դատավարությունում մեղադրյալների կալանքի ժամկետը, ըստ արմատացած մեկնաբանության, դիտարկվում է իր ամբողջության մեջ՝ անկախ վարույթի փուլերից: Մասնավորապես,

Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 3-րդ կետին համապատասխան կալանքի տևողությունը ... սկսվում է մեղադրյալին կալանքի տակ վերցնելու օրվանից – ավարտվում, երբ որոշվում է մեղադրանքը, եթե նույնիսկ այն որոշվում է միայն առաջին ատյանի դատարանի կողմից (Վեմհոֆն ընդդեմ Գերմանիայի (*Wemhoff v. Germany*), պարագրաֆ 9; Լաբիտան ընդդեմ Իտալիայի (*Labita v. Italy [GC]*) պարագրաֆ 147; Կալաշնիկովն ընդդեմ Ռուսաստանի (*Kalashnikov v. Russia*), պարագրաֆ 110; և այլ)<sup>181</sup>:

Սոլմազն ընդդեմ Թուրքիայի (*Solmaz v. Turkey*)<sup>182</sup> գործով, դիմումատու ձերբակալվել էր անօրինական զինված կազմակերպության գործունեությանը մասնակցելու կասկածանքով և ապա կալանավորվել: Մինչև դատաքննությունն ազատ արձակելու նրա հայցերը մերժվել էին: Նա դատապարտվել էր ցմահ ազատազրկման Պետական անվտանգության դատարանի կողմից: Այդ որոշումը բեկանվել էր վճարել դատարանի կողմից 2001

<sup>181</sup> Տե՛ս՝ *Case of Wemhoff v. Germany*, 27/06/1968, 2122/64; *Case of Labita v. Italy [GC]*, 06/04/2000, 26772/95; *Case of Kalashnikov v. Russia*, 15/07/2002, 47095/99 և այլ:

<sup>182</sup> Տե՛ս՝ *Case of Solmaz v. Turkey*, 16/01/2007, 27561/02:

թվականի մայիսին՝ դատավարական հիմքերով, և գործն ուղարկվել էր ստորադաս դատարան՝ հետագա քննության: Դիմումատուին մնացել էր կալանքի տակ: Նա գրավի դիմաց ազատ էր երկրորդ դատական քննության ընթացքում՝ բժշկական/ստողջական հիմնավորումներով՝ հաշվի առնելով այն ժամանակահատվածը, որ արդեն անցկացրել էր կալանքի տակ:

Դիմումատուի կալանքի տակ գտնվող ժամանակահատվածը, 5-րդ հոդվածի 3-րդ կետի իմաստով, սկսվել էր նրա ձերբակալությունից մինչև երկու տարի անց Պետական անվտանգության դատարանի կողմից նրա նախնական դատապարտումը: Այդ օրվանից սկսած, երբ Վճռաբեկ դատարանը բեկանեց դատավճիռը, դիմումատուին 5-րդ հոդվածի 1-ին կետի (ա) ենթակետի իմաստով պահվում էր կալանքի տակ «իրավասու դատարանի կողմից դատավճռի հրապարակումից հետո»: Հետևաբար, այդ կալանքի ժամկետը դուրս է եկել 5-րդ հոդվածի 3-րդ կետի սահմաններից: Գործի վերաբացման օրվանից և Վճռաբեկ դատարանի կողմից այն վերանայման ուղարկելու պահից մինչև նրա գրավի դիմաց ազատ արձակման պահը, դիմումատուին նորից գտնվում էր նախնական կալանքի տակ՝ 5-րդ հոդվածի 3-րդ կետի նպատակներով/իմաստով: Կալանավորման իրար հաջորդող անընդմեջ ժամանակահատվածները պետք է դիտարկել որպես մեկ ամբողջություն: Այսպիսով, Դատարանը դիմումատուի նախնական կալանքի ժամկետի ողջամտությունը գնահատելու համար 5-րդ հոդվածի 3-րդ կետի համաձայն՝ իրականացրեց համախմբված գնահատում: Ձերբակալման, 5-րդ հոդվածի 1-ին կետի (ա) ենթակետի համաձայն դատապարտվելուց հետո, անազատության մեջ պահվելու ժամանակահատվածները հաշվանցելուց հետո, կալանավորման ժամանակահատվածը կազմել էր մոտ վեց տարի և ութ ամիս:

Համապատասխանաբար, հաշվի առնելով ՄԻԵԴ-ի կողմից որդեգրված համապարփակ մոտեցումը՝ իր կողմից տարատեսակ արգելանքների/կալանքների/detentions/վերաբերյալ քննված գործերով, քրեական դատավարության փուլերը նշանակություն չունեն այլընտրանքային միջոցների կիրառման համար: Այլ կերպ ասած, այլընտրանքային միջոցների իրավական ռեժիմը և կարգավիճակը կախված չեն քրեական դատավարության փուլերից. այլընտրանքային միջոցները մնում են նույնը՝ մինչև նախաքննության կամ դատաքննության ավարտը: Դրանք կախված են հենց կալանավորումից և ոչ թե դրա փուլերից:

Ավելին, արդեն իսկ հաստատված սկզբունքի համաձայն՝ շարունակական կալանքի տակ գտնվելն ամբողջ դատավարության ընթացքում մինչև դատարանի կողմից գործի լուծման վերաբերյալ որոշում կայացնելը, առանց վերանայման կամ ազատ արձակելու հնարավորության, անպայման կհամարվի օրինականության պահանջի հետ անհամատեղելի (Բարանովսկին ընդդեմ Լեհաստանի (Baranowski v. Poland), պարագրաֆներ 56, 57<sup>183</sup>):

*56. ... Դատարանը գտնում է, որ այն գործելակերպը, որը ձևավորվել է ի պատասխան օրենքի բացի, համաձայն որի անձը կարող է մնալ կալանքի տակ անսահմանափակ և անկանխատեսելի ժամանակով, և առանց կոնկրետ իրավական դրույթի հիմնավորման կամ առանց դատական որոշման, ինքնին հակասում է իրավական որոշակիության սկզբունքին: Այն մի սկզբունք է, որը ենթադրվում է Կոնվենցիայում, և որը հանդիսանում է օրենքի գերակայության հիմնական տարրերից մեկը:*

*57. Այդ համատեքստում Դատարանը շեշտում է նաև, որ Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 1-ին կետի նպատակներին փեսանկյունից անձին կալանքի տակ պահելը, որը*

<sup>183</sup> Տե՛ս Case of Baranowski v. Poland, 28/03/2000, 28358/95:

տրել է մի քանի ամիս և չի նշանակվել դատարանի, դատավորի կամ այլ անձի կողմից, որը «օրենքով լիազորված է իրականացնելու դատական իշխանություն» չի կարող համարվել «օրինական» այս դրույթի իմաստով: Թեև այս պահանջը հստակորեն նախատեսված չէ 5-րդ հոդվածի 1-ին կետով, այն կարող է բխել 5-րդ հոդվածից, մասնավորապես, 1-ին կետի «գ» ենթակետի («նրան իրավասու օրինական մարմնին ներկայացնելու նպատակով») և 3-րդ կետի («անհապաղ փարվում է դատավորի կամ այլ պաշտոնատար անձի մոտ, ով օրենքով լիազորված է իրականացնելու դատական իշխանություն») ձևակերպումներից: Բացի դրանից, 5-րդ հոդվածի 4-րդ կետում պարունակվող *habeas corpus*-ի երաշխիքը հաստատում է այն տեսակետը, որ կալանքը, որը երկարաձգվում է 3-րդ կետով նախատեսված նախնական ժամանակահատվածից հետո, պահանջում է «դատական» միջամտություն՝ որպես կամայականություններից պաշտպանություն: Դատարանի կարծիքով, ազատությունից կամայական զրկվելուց 5-րդ հոդվածի 1-ին կետով նախատեսված պաշտպանվածությունը լրջագույնս կիսաթարվի, եթե անձին հնարավոր կլինի կալանավորվել միայն գործադիր կարգադրությամբ՝ առանց դատական մարմնի առջև կանգնելու 5-րդ հոդվածի 3-րդ կետում նշված հնարավորության:

Հետևաբար, այլընտրանքային միջոցները պետք է հավասարապես հասանելի լինեն քրեական դատավարության ցանկացած փուլում:

**Հավելված**

**Այլընտրանքային խափանման միջոցների  
օրինակելի ակտեր**

ԵԴ/0000/01/00  
(գործի համար)



**ՈՐՈՇՈՒՄ**

ԽԱՓԱՆՄԱՆ ՄԻՋՈՑԸ ՓՈՓՈԽԵԼՈՒ ԵՎ  
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ՝ ՉՀԵՌԱՆԱԼՈՒ ՄԱՍԻՆ ԽԱՓԱՆՄԱՆ  
ՄԻՋՈՑ ԿԻՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

.....  
.....

(Օր/ամիս/տարի)  
(քաղաք)

..... առաջին  
ատյանի ընդհանուր իրավասության դատարանը (այսուհետ  
նաև՝ Դատարան),

նախագահությամբ դատավոր՝  
քարտուղարությամբ՝

մասնակցությամբ՝  
մեղադրող՝  
տուժող՝  
տուժողի ներկայացուցիչ՝  
պաշտպան՝  
մեղադրյալ/ամբաստանյալ՝

դռնբաց/դռնփակ դատական նիստում քննության առնելով  
..... յանի պաշտպան  
..... ի կողմից 0000 թվականի ..... 00–ին ներ-  
կայացված միջնորդությունը՝ թիվ 00000000 քրեական գործով  
մեղադրյալ ..... ի նկատմամբ  
կիրառված ..... խափանման միջոցը փոփոխելու մա-  
սին.

## ՊԱՐԶԵՑ

### 1. Դատավարական նախապատմությունը

1. 0000 թվականի ..... 00–ին հարուցվել է թիվ  
00000000 նախաքննական համարով քրեական գործը:

Կարող են նշվել դատավարական այն որոշումները՝ առ-  
կայության դեպքում, որոնք վերաբերում են ձերբակալմանը,  
նախնական քննության փուլում խափանման միջոց կիրառե-  
լուն, դատական քննության փուլում՝ այն անփոփոխ թողնելուն,  
վերահաստատելուն, մեղադրյալ ներգրավելուն, հետախուզում  
հայտարարելուն, մեղադրանքը փոփոխելուն և այլ:

2. 0000 թվականի ..... 00–ին գործն ուղարկվել է  
..... առաջին ատյա-  
նի ընդհանուր իրավասության դատարան:

0000 թվականի ..... 00–ին ստացված գործը դա-  
տավորների միջև գործերի բաշխման էլեկտրոնային համա-

կարգի միջոցով, թիվ ԵԴ/0000/01/00 համարի ներքո, մակագրվել և 0000 թվականի ..... 00-ին հանձնվել է դատավոր .....-ին: Նույն օրը կայացվել է քրեական գործը վարույթ ընդունելու մասին որոշում:

## **II. Միջնորդության հիմքերը, հիմնավորումները և պահանջը.**

Համառոտ շարադրել միջնորդությամբ ներկայացված հիմքերը, հիմնավորումները և պահանջը:

## **III. Դատարանի իրավական վերլուծությունը և եզրահանգումը**

Նկատի ունենալով, որ ..... որոշումը պետք է լինի պատճառաբանված, բովանդակի մեղադրյալին/ամբաստանյալին վերագրվող հանցագործության մասին նշումներ և համապատասխան խափանման միջոց ընտրելու անհրաժեշտության մասին հիմնավորում:

Վերոգրյալի հիման վրա և ղեկավարվելով ՀՀ Սահմանադրության 27-րդ և ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 11-րդ, 41-րդ, 135-136-րդ, 144-րդ, 151-րդ, 300-րդ (դատական քննության նախապատրաստության փուլում որոշում կայացնելիս) և 313-րդ հոդվածներով՝

## **ՈՐՈՇԵՑ**

1. Թիվ ԵԴ/0000/01/00 քրեական գործով մեղադրյալ .....-ի (ծննդյան օր/ամիս/տարեթիվ, ազգություն, քաղաքացիություն, ընտանեկան կարգավիճակ, աշխատանքի վայր, դատվածություն, հաշվառման, բնակության վայր) նկատմամբ որպես խափանման միջոց կի-

րառված կալանքը փոփոխել և կիրառել ստորագրություն՝ չհեռանալու մասին խափանման միջոցը:

2. Պարզաբանել մեղադրյալին/ամբաստանյալին այն մասին, որ նա պարտավոր է՝

- 2.1. ներկայանալ դատարանի կանչով,**
- 2.2. հայտնել իր բնակության վայրը փոխելու մասին,**
- 2.3. ձեռնպահ մնալ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 135-րդ հոդվածով նախատեսված արարքները կատարելուց:**

**Մասնավորապես՝**

**2.3.1. չթաքնվել քրեական վարույթն իրականացնող մարմնից.**

**2.3.1. չխոչընդոտել դատարանում գործի քննությանը՝ քրեական դատավարությանը մասնակցող անձանց վրա անօրինական ազդեցություն գործադրելու, գործի համար նշանակություն ունեցող նյութերը թաքցնելու կամ կեղծելու, դատարանի կանչով առանց հարգելի պարճառների չներկայանալու կամ այլ ճանապարհով.**

**2.3.1. չկատարել քրեական օրենքով չթույլատրված արարք.**

**2.3.2. չխուսափել քրեական պատասխանատվությունից և նշանակված պատիժը կրելուց.**

**2.3.3. չխոչընդոտել դատարանի դատավճռի կատարմանը:**

Չհեռանալու մասին ստորագրությունը տալուց հետո որոշման պատճենն անմիջապես հանձնել մեղադրյալին/ամբաստանյալին:

**ԴԱՏԱՎՈՐ՝**

.....



**ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ**  
**չհեռանալու մասին ստորագրություն վերցնելու**  
**վերաբերյալ**

Ես՝ ..... ս, տալիս եմ ստորագրություն այն մասին, որ ինձ հայտարարվել է դատարանի 0000 թվականի ..... 00-ի որոշումն իմ նկատմամբ ստորագրություն՝ չհեռանալու մասին խափանման միջոցի կիրառելու վերաբերյալ:

Պարտավորվում եմ պահպանել դատարանի որոշման եզրափակիչ մասով սահմանված պարտականությունները:

Մեղադրյալ/ամբաստանյալ .....

ԵԴ/0000/01/00  
(գործի համար)



**ՈՐՈՇՈՒՄ**

ԽԱՓԱՆՄԱՆ ՄԻՋՈՑԸ ՓՈՓՈԽԵԼՈՒ ԵՎ  
ԱՆՁՆԱԿԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ/  
ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ  
ԽԱՓԱՆՄԱՆ ՄԻՋՈՑ ԿԻՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

.....  
.....

.....

(Օր/ամիս/տարի)  
(քաղաք)

..... առաջին  
ատյանի ընդհանուր իրավասության դատարանը (այսուհետ  
նաև՝ Դատարան),

նախագահությամբ դատավոր՝  
քարտուղարությամբ՝

մասնակցությամբ՝  
մեղադրող՝

տուժող՝  
տուժողի ներկայացուցիչ՝  
պաշտպան՝  
մեղադրյալ/ամբաստանյալ՝

դռնբաց/դռնփակ դատական նիստում քննության առնելով  
..... ի պաշտպան ..... ի  
կողմից 0000 թվականի ..... 00-ին ներկայացված միջ-  
նորդությունը՝ թիվ 00000000 քրեական գործով մեղադրյալ  
..... ի նկատմամբ կիրառված  
..... խափանման միջոցը փոփոխելու մասին.

## ՊԱՐԶԵՑ

### I. Դատավարական նախապատմությունը

1. 0000 թվականի .....00-ին հարուցվել է թիվ  
00000000 նախաքննական համարով քրեական գործը:

Կարող են նշվել դատավարական այն որոշումները՝ առ-  
կայության դեպքում, որոնք վերաբերում են ձերբակալմանը,  
նախնական քննության փուլում խափանման միջոց կիրառե-  
լուն, դատական քննության փուլում՝ այն անփոփոխ թողնելուն,  
վերահաստատելուն, մեղադրյալ ներգրավելուն, հետախուզում  
հայտարարելուն, մեղադրանքը փոփոխելուն և այլ:

2. 0000 թվականի ..... 00-ին գործն ուղարկվել է  
..... առաջին ատյանի  
ընդհանուր իրավասության դատարան:

0000 թվականի ..... 00-ին ստացված գործը դա-  
տավորների միջև գործերի բաշխման էլեկտրոնային համա-  
կարգի միջոցով, թիվ ԵԴ/0000/01/00 համարի ներքո,  
մակագրվել և 0000 թվականի ..... 00-ին հանձնվել է  
դատավոր .....-ին: Նույն օրը կայացվել է քրեա-  
կան գործը վարույթ ընդունելու մասին որոշում:

**II. Միջնորդության հիմքերը, հիմնավորումները և պահանջը.**

Համառոտ շարադրել միջնորդությամբ ներկայացված հիմքերը, հիմնավորումները և պահանջը:

**III. Դատարանի իրավական վերլուծությունը և եզրահանգումը**

Նկատի ունենալով, որ ..... որոշումը պետք է լինի պատճառաբանված, բովանդակի մեղադրյալին/ամբաստանյալին վերագրվող հանցագործության մասին նշումներ և համապատասխան խափանման միջոց ընտրելու անհրաժեշտության մասին հիմնավորում: Այդ թվում՝ նաև անհրաժեշտ է նշել, թե ինչ փաստական տվյալներ են դատարանի մոտ առաջացրել կարծիք այն մասին, որ երաշխավորողը վայելում է վստահություն:

Երաշխավորողը/ները (այդ թվում՝ իրավաբանական անձի ներկայացուցիչը)՝

- Ա) ծանոթացել են մեղադրանքի բովանդակությանը: Մասնավորապես, ... (շարադրել մեղադրանքի էությունը);
- Բ) նրան/ց բացատրվել են երաշխավորողի իրավունքները և պարտականությունները: Մասնավորապես, որ պարտավոր է/են ապահովել մեղադրյալի/ամբաստանյալի պատշաճ վարքագիծը վարույթի ընթացքում, այդ թվում՝ վերջինիս կողմից ձեռնպահ մնալը ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 135-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված արարքները կատարելուց;
- Գ) ներկայացրել է/են օրենքով սահմանված չափի գումարի վճարման անդորրագիր/անդորրագրեր;
- Դ) նախազգուշացվել է/են երաշխավորողի պատասխանատվության մասին (գումարը պետության եկամուտ դարձնելու և ՀՀ քրեական օրենսգրքի 346-րդ հոդվածով («Անձնական երաշխավորի կողմից իր ստանձնած պար-

տավորությունները չարամտորեն չկատարելը») նախատեսված), որից հետո դիմողը հաստատել է իր խնդրանքը երաշխավորող հանդես գալու համար:

Այս գործողություններն արձանագրվել են:

Վերոգրյալի հիման վրա և ղեկավարվելով ՀՀ Սահմանադրության 27-րդ և ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 11-րդ, 41-րդ, 135-136-րդ, 145-րդ (անձնական երաշխավորության դեպքում), 146-րդ (կազմակերպության երաշխավորության դեպքում), 147-րդ, 151-րդ, 300-րդ (դատական քննության նախապատրաստության փուլում որոշում կայացնելիս) և 313-րդ հոդվածներով՝

## ՈՐՈՇԵՑ

1. Թիվ ԵԴ/0000/01/00 քրեական գործով մեղադրյալ ..... յանի (ծննդյան օր/ամիս/տարեթիվ, ազգություն, քաղաքացիություն, ընտանեկան կարգավիճակ, աշխատանքի վայր, դատվածություն, հաշվառման, բնակության վայր) նկատմամբ որպես խափանման միջոց կիրառված կալանքը փոփոխել և կիրառել անձնական երաշխավորություն (կազմակերպության երաշխավորություն) խափանման միջոցը:

2. Երաշխավորող հանդիսանում է/են .....  
..... ը և .....  
..... ը (Ֆիզիկական անձի դեպքում գրել անունը/ները, հայրանունը/ները, ազգանունը/ները, անձը հաստատող փաստաթղթի տվյալները, իրավաբանական անձի դեպքում՝ իրավաբանական անձի անվանումը, պետական գրանցման ամսաթիվը, համարը և նրա անունից հանդես եկող ներկայացուցչի անունը, հայրանունը, ազգանունը, անձը հաստատող փաստաթղթի տվյալները):

3. Պարզաբանել երաշխավորողին/ներին այն մասին, որ
  - 3.1. նրա/նրանց կողմից մուծված դրամական գումարը քրեական վարույթն իրականացնող մարմնի որոշմամբ վերաձվում է պետության եկամուտի, եթե երաշխավորողը՝
    - 3.1.1. չի կատարել կասկածյալի կամ մեղադրյալի պատշաճ վարքագիծն ապահովելու իր պարտավորությունը.
    - 3.1.2. ինքնական հրաժարվել է երաշխավորությունից:
  - 3.2. Բացի սույն որոշման 3.1.1 և 3.1.2 կետերում նախատեսված դեպքերից, մյուս բոլոր դեպքերում դրամական գումարը վերադարձվում է երաշխավորողին:
  - 3.3. Երաշխավորողի մուծած դրամական գումարը պետության եկամուտ դարձնելու մասին որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով:
4. Պարզաբանել մեղադրյալին/ամբաստանյալին այն մասին, որ նա պարտավոր է՝

**4.1. ներկայանալ դատարանի կանչով,**

**4.2. հայտնել իր բնակության վայրը փոխելու մասին,**

**4.3. ձեռնպահ մնալ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 135-րդ հոդվածով նախատեսված արարքները կատարելուց:**

**Մասնավորապես՝**

**4.3.1. չթաքնվել քրեական վարույթն իրականացնող մարմնից.**

**4.3.2. չխոչընդոտել դատարանում գործի քննությանը՝ քրեական դատավարությանը մասնակցող անձանց վրա անօրինական ազդեցություն գործադրելու, գործի համար նշանակություն ունեցող նյութերը թաքցնելու կամ կեղծելու, դատարանի կանչով առանց հարգելի պատճառների չներկայանալու կամ այլ ճանապարհով.**

**4.3.3. չկատարել քրեական օրենքով չթույլատրված արարք.**

**4.3.4. չխուսափել քրեական պատասխանատվությունից և նշանակված պատիժը կրելուց.**

**4.3.5. չխոչընդոտել դատարանի դատավճռի կատարմանը:**

Որոշման պատճենն անմիջապես հանձնել մեղադրյալին/ամբաստանյալին և երաշխավորողին/ներին (այդ թվում՝ հրավաբանական անձի ներկայացուցչին):

**ԴԱՏԱՎՈՐ՝** .....

ԵԴ/0000/01/00  
(գործի համար)



**ՈՐՈՇՈՒՄ**

ԽԱՓԱՆՄԱՆ ՄԻՋՈՑԸ ՓՈՓՈԽԵԼՈՒ ԵՎ  
ՀՍԿՈՂՈՒԹՅԱՆԸ ՀԱՆՁՆԵԼՈՒ ԽԱՓԱՆՄԱՆ ՄԻՋՈՑ  
ԿԻՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

.....  
.....

.....

(Օր/ամիս/տարի)  
(քաղաք)

..... առաջին  
ատյանի ընդհանուր իրավասության դատարանը (այսուհետ  
նան՝ Դատարան),

նախագահությամբ դատավոր՝  
քարտուղարությամբ՝

մասնակցությամբ՝  
մեղադրող՝  
տուժող՝  
տուժողի ներկայացուցիչ՝  
պաշտպան՝



մեղադրյալ/ամբաստանյալ՝

դռնբաց/դռնփակ դատական նիստում քննության առնելով  
..... ի պաշտպան ..... ի  
կողմից 0000 թվականի ..... 00-ին ներկայացված միջ-  
նորդությունը՝ թիվ 00000000 քրեական գործով մեղադրյալ  
..... ի նկատմամբ կիրառված  
..... խափանման միջոցը փոփոխելու մասին.

## ՊԱՐԶԵՑ

### I. Դատավարական նախապատմությունը

1. 0000 թվականի ..... 00-ին հարուցվել է թիվ  
00000000 նախաքննական համարով քրեական գործը:

Կարող են նշվել դատավարական այն որոշումները՝ առ-  
կայության դեպքում, որոնք վերաբերում են ձերբակալմանը,  
նախնական քննության փուլում խափանման միջոց կիրառե-  
լուն, դատական քննության փուլում՝ այն անփոփոխ թողնելուն,  
վերահաստատելուն, մեղադրյալ ներգրավելուն, հետախուզում  
հայտարարելուն, մեղադրանքը փոփոխելուն և այլ:

2. 0000 թվականի ..... 00-ին գործն ուղարկվել  
է ..... առաջին ատյա-  
նի ընդհանուր իրավասության դատարան:

0000 թվականի ..... 00-ին ստացված գործը դա-  
տավորների միջև գործերի բաշխման էլեկտրոնային համա-  
կարգի միջոցով, թիվ ԵԴ/0000/01/00 համարի ներքո,  
մակագրվել և 0000 թվականի ..... 00-ին հանձնվել է  
դատավոր ..... ին: Նույն օրը կայացվել է քրեա-  
կան գործը վարույթ ընդունելու մասին որոշում:

## **II. Միջնորդության հիմքերը, հիմնավորումները և պահանջը.**

Համառոտ շարադրել միջնորդությամբ ներկայացված հիմքերը, հիմնավորումները և պահանջը:

## **III. Դատարանի իրավական վերլուծությունը և եզրահանգումը**

Նկատի ունենալով, որ ..... որոշումը պետք է լինի պատճառաբանված, բովանդակի մեղադրյալին/ամբաստանյալին վերագրվող հանցագործության մասին նշումներ և համապատասխան խափանման միջոց ընտրելու անհրաժեշտության մասին հիմնավորում: Այդ թվում՝ նաև անհրաժեշտ է պարզել որոշակի հանգամանքներ պոտենցիալ հսկողություն իրականացնող անձանց մասին (տարիք, առողջական վիճակ, նախկինում արատավորված լինելու հանգամանք (դատվածություն, սոցիալ-հոգեբանական նկարագիր և այլն) զբաղվածության աստիճան (ազատ ժամանակի առկայություն), անչափահասի հետ հարաբերություններ):

Ծնողները, խնամակալները, հոգաբարձուները, փակ մանկական հիմնարկի վարչակազմի ներկայացուցիչը՝

Ա) ծանոթացել են մեղադրանքի բովանդակությանը: Մասնավորապես, ... (շարադրել մեղադրանքի էությունը);

Բ) նրան/ց բացատրվել են իրենց իրավունքները և պարտականությունները: Մասնավորապես, որ պարտավոր է/են ապահովել մեղադրյալի/ամբաստանյալի պատշաճ վարքագիծը վարույթի ընթացքում, այդ թվում՝ վերջինիս կողմից ձեռնպահ մնալը ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 135-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված արարքները կատարելուց;

Ծնողները, խնամակալները, հոգաբարձուներն հաստատել

են իրենց պատրաստակամությունն անչափահաս կասկածյալի կամ մեղադրյալի նկատմամբ հսկողություն իրականացնելու համար:

Այս գործողություններն արձանագրվել են:

Վերոգրյալի հիման վրա և ղեկավարվելով ՀՀ Սահմանադրության 27-րդ և ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 11-րդ, 41-րդ, 135-136-րդ, 148-րդ, 151-րդ, 300-րդ (դատական քննության նախապատրաստության փուլում որոշում կայացնելիս) և 313-րդ հոդվածներով՝

## ՈՐՈՇԵՑ

1. Թիվ ԵԴ/0000/01/00 քրեական գործով մեղադրյալ .....-յանի (ծննդյան օր/ամիս/տարեթիվ, ազգություն, քաղաքացիություն, ընտանեկան կարգավիճակ, աշխատանքի վայր, դատվածություն, հաշվառման, բնակության վայր) նկատմամբ որպես խափանման միջոց կիրառված կալանքը փոփոխել և կիրառել հսկողությանը հանձնելու մասին խափանման միջոցը:

2. Մեղադրյալի/ամբաստանյալի պատշաճ վարքագիծը, քրեական վարույթն իրականացնող մարմնի կանչով նրա ներկայանալը և այլ դատավարական պարտականություններ կատարման ապահովումը դնել *մեղադրյալի/ամբաստանյալի ծնողների, խնամակալների, հոգաբարձուների կամ փակ մանկական հիմնարկների վարչակազմի* վրա (Ֆիզիկական անձի դեպքում գրել անունը/ները, հայրանունը/ները, ազգանունը/ները, անձը հաստատող փաստաթղթի տվյալները, փակ մանկական հիմնարկի դեպքում՝ անվանումը, պետական գրանցման ամսաթիվը, համարը և նրա անունից հանդես եկող ներկայացուցչի անունը, հայրանունը, ազգանունը, անձը հաստատող փաստաթղթի տվյալները):

3. Պարզաբանել մեղադրյալին/ամբաստանյալին այն մասին, որ նա պարտավոր է՝

- 3.1. ներկայանալ դատարանի կանչով,**
- 3.2. հայտնել իր բնակության վայրը փոխելու մասին,**
- 3.3. ձեռնպահ մնալ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 135-րդ հոդվածով նախատեսված արարքները կատարելուց:**

**Մասնավորապես՝**

- 3.4.1. չթաքնվել քրեական վարույթն իրականացնող մարմնից.**
- 3.4.2. չխոչընդոտել դատարանում գործի քննությանը՝ քրեական դատավարությանը մասնակցող անձանց վրա անօրինական ազդեցություն գործադրելու, գործի համար նշանակություն ունեցող նյութերը թաքցնելու կամ կեղծելու, դատարանի կանչով առանց հարգելի պատճառների չներկայանալու կամ այլ ճանապարհով.**
- 3.4.3. չկատարել քրեական օրենքով չթույլատրված արարք.**
- 3.4.4. չխուսափել քրեական պատասխանատվությունից և նշանակված պատիժը կրելուց.**
- 3.4.5. չխոչընդոտել դատարանի դատավճռի կատարմանը:**

4. Որոշման պատճենն անմիջապես հանձնել մեղադրյալին/ամբաստանյալին և ծնողներին, խնամակալներին, հոգաբարձուներին, փակ մանկական հիմնարկի վարչակազմի ներկայացուցչին:

**ԴԱՏԱՎՈՐ՝** .....

ԵԴ/0000/01/00  
(գործի համար)



### ՈՐՈՇՈՒՄ

ԽԱՓԱՆՄԱՆ ՄԻՋՈՑԸ ՓՈՓՈԽՆԵԼՈՒ ԵՎ  
ՀՐԱՄԱՆԱՏԱՐՈՒԹՅԱՆ ՀՄԿՈՂՈՒԹՅԱՆԸ ՀԱՆՁՆԵԼՈՒ  
ԽԱՓԱՆՄԱՆ ՄԻՋՈՑ ԿԻՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

.....  
.....

(Օր/ամիս/տարի)  
(քաղաք)

..... առաջին  
ատյանի ընդհանուր իրավասության դատարանը (այսուհետ  
նաև՝ Դատարան),

նախագահությամբ դատավոր՝  
քարտուղարությամբ՝

մասնակցությամբ՝  
մեղադրող՝  
տուժող՝  
տուժողի ներկայացուցիչ՝  
պաշտպան՝  
մեղադրյալ/ամբաստանյալ՝

դռնբաց/դռնփակ դատական նիստում քննության առնելով  
..... ի պաշտպան ..... ի  
կողմից 0000 թվականի ..... 00–ին ներկայացված միջ-  
նորդությունը՝ թիվ 00000000 քրեական գործով մեղադրյալ  
..... ի նկատմամբ կիրառված  
..... խափանման միջոցը փոփոխելու մասին.

## ՊԱՐԶԵՑ

### I. Դատավարական նախապատմությունը

1. 0000 թվականի ..... 00–ին հարուցվել է թիվ  
00000000 նախաքննական համարով քրեական գործը:

Կարող են նշվել դատավարական այն որոշումները՝ առ-  
կայության դեպքում, որոնք վերաբերում են ձերբակալմանը,  
նախնական քննության փուլում խափանման միջոց կիրառե-  
լուն, դատական քննության փուլում՝ այն անփոփոխ թողնելուն,  
վերահաստատելուն, մեղադրյալ ներգրավելուն, հետախուզում  
հայտարարելուն, մեղադրանքը փոփոխելուն և այլ:

2. 0000 թվականի ..... 00–ին գործն ուղարկվել է  
..... առաջին ատյանի ընդհա-  
նուր իրավասության դատարան:

0000 թվականի ..... 00–ին ստացված գործը դա-  
տավորների միջև գործերի բաշխման էլեկտրոնային համա-  
կարգի միջոցով, թիվ ԵԴ/0000/01/00 համարի ներքո,  
մակագրվել և 0000 թվականի ..... 00–ին հանձնվել է  
դատավոր ..... ին: Նույն օրը կայացվել է քրեա-  
կան գործը վարույթ ընդունելու մասին որոշում:

### II. Միջնորդության հիմքերը, հիմնավորումները և պա- հանջը.

Համառոտ շարադրել միջնորդությամբ ներկայացված հիմքերը, հիմնավորումները և պահանջը:

### **III. Դատարանի իրավական վերլուծությունը և եզրահանգումը**

Նկատի ունենալով, որ .....  
որոշումը պետք է լինի պատճառաբանված, բովանդակի մեղադրյալին/ամբաստանյալին վերագրվող հանցագործության մասին նշումներ և համապատասխան խափանման միջոց ընտրելու անհրաժեշտության մասին հիմնավորում:

Վերոգրյալի հիման վրա և ղեկավարվելով ՀՀ Սահմանադրության 27-րդ և ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 11-րդ, 41-րդ, 135-136-րդ, 149-րդ, 151-րդ, 300-րդ (դատական քննության նախապատրաստության փուլում որոշում կայացնելիս) և 313-րդ հոդվածներով՝

### **ՈՐՈՇԵՑ**

1. Թիվ ԵԴ/0000/01/00 քրեական գործով մեղադրյալ ..... յանի (ծննդյան օր/ամիս/տարեթիվ, ազգություն, քաղաքացիություն, ընտանեկան կարգավիճակ, աշխատանքի վայր, դատվածություն, հաշվառման, բնակության վայր) նկատմամբ որպես խափանման միջոց կիրառված կալանքը փոփոխել և կիրառել հրամանատարության հսկողությանը հանձնելու մասին խափանման միջոցը:

2. Մեղադրյալի/ամբաստանյալի պատշաճ վարքագիծը, քրեական վարույթն իրականացնող մարմնի կանչով նրա ներկայանալը և այլ դատավարական պարտականություններ կատարման ապահովումը դնել *մեղադրյալի/ամբաստանյալի զորամասի, զորամիավորման հրամանատարի, զինվորական հիմնարկի պետի* վրա (գրել զորամասի, զորամիավորման հրամանատարի, զինվորական հիմնարկի պետի անունը, հայ-

րանունը, ազգանունը, անձը հաստատող փաստաթղթի տվյալները):

3. Պարզաբանել մեղադրյալին/ամբաստանյալին այն մասին, որ նա պարտավոր է՝

- 3.1. ներկայանալ դատարանի կանչով,**
- 3.2. հայտնել իր բնակության վայրը փոխելու մասին,**
- 3.3. հայտնել իր ծառայության վայրը փոխելու մասին,**
- 3.4. ձեռնպահ մնալ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 135-րդ հոդվածով նախատեսված արարքները կատարելուց:**

**Մասնավորապես՝**

**3.4.1. չթաքնվել քրեական վարույթն իրականացնող մարմնից.**

**3.4.2. չխոչընդոտել դատարանում գործի քննությանը՝ քրեական դատավարությանը մասնակցող անձանց վրա անօրինական ազդեցություն գործադրելու, գործի համար նշանակություն ունեցող նյութերը թաքցնելու կամ կեղծելու, դատարանի կանչով առանց հարգելի պարճառների չներկայանալու կամ այլ ճանապարհով.**

**3.4.3. չկատարել քրեական օրենքով չթույլատրված արարք.**

**3.4.4. չխուսափել քրեական պատասխանատվությունից և նշանակված պատիժը կրելուց.**

**3.4.5. չխոչընդոտել դատարանի դատավճռի կատարմանը:**

4. Հրամանատարության ներկայացուցչին՝

4.1. ծանոթացնել մեղադրանքի բովանդակությանը: Մասնավորապես, ... (շարադրել մեղադրանքի էությունը);

4.2. նրան բացատրել իր իրավունքները և պարտականությունները: Մասնավորապես, որ.



- 4.2.1. ենթակայի նկատմամբ հսկողություն իրականացնելիս հրամանատարությունը գործում է զինվորական կանոնադրություններին համապատասխան;
  - 4.2.2. պարտավոր է ապահովել մեղադրյալի/ամբաստանյալի պատշաճ վարքագիծը վարույթի ընթացքում, այդ թվում՝ վերջինիս կողմից ձեռնպահ մնալը ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 135-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված արարքները կատարելուց;
  - 4.2.3. մեղադրյալը/ամբաստանյալը չի նշանակվում պահակության և մարտական հերթապահության;
  - 4.2.4. մեղադրյալը/ամբաստանյալը զրկվում է խաղաղ ժամանակ զենք կրելու իրավունքից;
  - 4.2.5. սպա կամ ենթասպա չհանդիսացող զինծառայողը միայնակ չի ուղարկվում զորամասի տարածքից դուրս:
5. Սույն որոշման եզրափակիչ մասի 4-րդ կետով նախատեսված գործողություններն արձանագրելուց և արձանագրությունը ստորագրելուց հետո անմիջապես սույն որոշման պատճենը հանձնել մեղադրյալին/ամբաստանյալին և հրամանատարության ներկայացուցչին:

**ԴԱՏԱՎՈՐ՝** .....

ԵԴ/0000/01/00  
(գործի համար)



**ՈՐՈՇՈՒՄ**

ԽԱՓԱՆՄԱՆ ՄԻՋՈՑԸ ՓՈՓՈԽԵԼՈՒ ԵՎ  
ԳՐԱՎ ԿԻՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

.....  
.....

(Օր/ամիս/տարի)  
(քաղաք)

..... առաջին  
ատյանի ընդհանուր իրավասության դատարանը (այսուհետ  
նաև՝ Դատարան),

նախագահությամբ դատավոր՝  
քարտուղարությամբ՝

*մասնակցությամբ՝*  
մեղադրող՝  
տուժող՝  
տուժողի ներկայացուցիչ՝  
պաշտպան՝  
մեղադրյալ/ամբաստանյալ՝

դռնբաց/դռնփակ դատական նիստում քննության առնելով  
..... ի պաշտպան ..... ի  
կողմից 0000 թվականի ..... 00-ին ներկայացված միջ-  
նորդությունը՝ թիվ 00000000 քրեական գործով մեղադրյալ  
..... ի նկատմամբ կիրառված  
..... խափանման միջոցը փոփոխելու մասին.

## ՊԱՐԶԵՑ

### I. Դատավարական նախապատմությունը

1. 0000 թվականի ..... 00-ին հարուցվել է թիվ  
00000000 նախաքննական համարով քրեական գործը:

Կարող են նշվել դատավարական այն որոշումները՝ առ-  
կայության դեպքում, որոնք վերաբերում են ձերբակալմանը,  
նախնական քննության փուլում խափանման միջոց կիրառե-  
լուն, դատական քննության փուլում՝ այն անփոփոխ թողնելուն,  
վերահաստատելուն, մեղադրյալ ներգրավելուն, հետախուզում  
հայտարարելուն, մեղադրանքը փոփոխելուն և այլ:

2. 0000 թվականի ..... 00-ին գործն ուղարկվել է  
..... առաջին ատյանի  
ընդհանուր իրավասության դատարան:

0000 թվականի ..... 00-ին ստացված գործը դա-  
տավորների միջև գործերի բաշխման էլեկտրոնային համա-  
կարգի միջոցով, թիվ ԵԴ/0000/01/00 համարի ներքո,  
մակագրվել և 0000 թվականի ..... 00-ին հանձնվել է  
դատավոր ..... ին: Նույն օրը կայացվել է քրեա-  
կան գործը վարույթ ընդունելու մասին որոշում:

### II. Միջնորդության հիմքերը, հիմնավորումները և պա- հանջը.

Համառոտ շարադրել միջնորդությամբ ներկայացված հիմքերը, հիմնավորումները և պահանջը:

### **III. Դատարանի իրավական վերլուծությունը և եզրահանգումը**

1. Նկատի ունենալով, որ ..... որոշումը պետք է լինի պատճառաբանված, բովանդակի մեղադրյալին/ամբաստանյալին վերագրվող հանցագործության մասին նշումներ և համապատասխան խափանման միջոց ընտրելու անհրաժեշտության մասին հիմնավորում: Այդ թվում՝ անհրաժեշտ է նշել օրենսդրական նորմերը՝ ազգային և միջազգային, ինչպես նաև ՄԻԵԴ և վճռաբեկ դատարանի նախադեպային թիրախային որոշումների վերաբերելի մասերը:

2. Վերոգրյալի հիման վրա և ղեկավարվելով ՀՀ Սահմանադրության 27-րդ և ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 11-րդ, 41-րդ, 135-137-րդ, 143-րդ, 151-րդ, 300-րդ (դատական քննության նախապատրաստության փուլում որոշում կայացնելիս) և 313-րդ հոդվածներով՝

### **ՈՐՈՇԵՑ**

1. Թիվ ԵԴ/0000/01/00 քրեական գործով մեղադրյալ ..... յանի (ծննդյան օր/ամիս/տարեթիվ, ազգություն, քաղաքացիություն, ընտանեկան կարգավիճակ, աշխատանքի վայր, դատվածություն, հաշվառման, բնակության վայր) նկատմամբ որպես խափանման միջոց կիրառված կալանքը փոփոխել և որպես այլընտրանքային խափանման միջոց գրավի կիրառումը ճանաչել թույլատրելի՝ որպես գրավի գումար սահմանելով 0.000.000 (գումարի չափը գրել բառերով) ՀՀ դրամը:

2. Գրավի սահմանված գումարը ՀՀ առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի թիվ 000000000000 դեպոզիտ հաշվին մուծելուց հետո մեղադրյալ .....  
..... ին ազատել արգելանքից:

Որոշումը կարող է բողոքարկվել ՀՀ վերաքննիչ քրեական դատարան՝ ստանալու պահից՝ 10-օրյա ժամկետում:

**ԴԱՏԱՎՈՐ՝** .....

# ԲՈՎԱՆ ԴԱԿՈՒԹՅՈՒՆ

## ՄՈԴՈՒԼ 1. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

<b>Ներածություն</b> .....	3
Դաս 1. Այլընտրանքային խափանման միջոցներ (ընդհանուր բնութագիրը) .....	7
Դաս 2. Այլընտրանքային խափանման միջոցների կիրառման ներպետական իրավական հիմքերը և միջազգային ստանդարտները .....	16

## ՄՈԴՈՒԼ 2. ԳՐԱՎ

Դաս 3. Կալանքի հիմնական այլընտրանքային խափանման միջոցի էությունը: ՄԻԵԴ-ի նախադեպային իրավունքը և ներպետական օրենսդրությունը: .....	54
Դաս 4. Կիրառման հիմնական կանոնները և կարգը .....	67

## ՄՈԴՈՒԼ 3. ԱՅԼ՝ ՔԻՉ ՆԵՐԱԶԴԻՈՂ/ՍԱՀՄԱՆԱՓԱԿՈՂ, ԽԱՓԱՆՄԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ

Դաս 5. Ստորագրություն չհեռանալու մասին .....	82
Դաս 6. Երաշխավորություն (անձնական, կազմակերպության) .....	93
Դաս 7. Հսկողության հանձնելը (Անչափահասների նկատմամբ այլընտրանքների կիրառման առանձնահատկությունների համատեքստում) .....	101
Դաս 8. Հրամանատարության հսկողությանը հանձնել .....	116

**ՄՈԴՈՒԼ 4. ՕՏԱՐԵՐԿՐԱՑԻՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ  
ԱՅԼԸՆՏՐԱՆՔԱՅԻՆ ԽԱՓԱՆՄԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ  
ԿԻՐԱՌՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

Դաս 9. Օտարերկրացիները՝ ՄԻԵԴ նախադեպային իրավունքի և ընդհանուր միջազգային իրավունքի ներքո և նրանց նկատմամբ կիրառելի միջոցների տեսակները ներպետական օրենսդրության մակարդակում, և այլընտրանքային խափանման միջոցների կիրառման հնարավորությունները..... 123

**ՄՈԴՈՒԼ 5. ԽԱՓԱՆՄԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԿԻՐԱՌՈՒՄԸ  
ԴԱՏԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅԱՆ ՓՈՒԼՈՒՄ**

Դաս 10. Դատական քննության փուլում այլընտրանքային խափանման միջոցների կիրառումը..... 138

**Հավելված.** Այլընտրանքային խափանման միջոցների օրինակելի ակտեր ..... 156

**ԱՐՄԵՆ ՆԻԿՈՂՈՍՅԱՆ**

**ԱՅԼԸՆՏՐԱՆՔԱՅԻՆ  
ԽԱՓԱՆՄԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ  
ԿԻՐԱԴՄԱՆ ԳՈՐԾՆԱԿԱՆ  
ՀՄՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ**



Եվրոպայի խորհուրդն առաջատարն է մայրցամաքում մարդու իրավունքներով զբաղվող կազմակերպությունների շարքում: Եվրոպայի խորհուրդն անդամակցում են 47 պետություններ, որոնցից 27-ը միաժամանակ նաև, Եվրոպական միության անդամներ են: Եվրոպայի խորհրդի անդամ ըլլող պետությունները ստորագրել են Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների եվրոպական կոնվենցիան՝ որպես մարդու իրավունքների, ժողովրդավարության և օրենքի գերակայության կաշտալակությունը նպատակատրուգած միջազգային համաձայնագիր: Մարդու իրավունքների եվրոպական դատարանը վերահսկում է անոնամ պետությունների կողմից՝ կոնվենցիայի դրույթների կատարումը:

[www.coe.int](http://www.coe.int)

Եվրոպական միությունը 27 եվրոպական ժողովրդավարական երկրների տնտեսական և քաղաքական յուրահատուկ գործընկերություն է՝ իր 500 միլիոն քաղաքացիների համար առաջել արդար և ապահով աշխարհում հաստատություն, քաղաքական և ազատություն ապահովելու նպատակով: Կյս ամենն իրագործելու համար ԵՄ երկրները հիմնել են մարմիններ՝ ԵՄ աշխատակազմերն իրականացնելու և նրա օրենսդրությունն ընդունելու համար: Նրա հիմնական մարմիններն են Եվրոպական խորհրդարանը (որը ներկայացնում է Եվրոպայի ժողովրդին), Եվրոպական միության խորհուրդը (որը ներկայացնում է ազգային կառավարությունները) և Եվրոպական հանձնաժողովը (որը ներկայացնում է ԵՄ ընդհանուր շահերը):

<http://europa.eu>



Funded  
by the European Union  
and the Council of Europe



Implemented  
by the Council of Europe